26.273

Ռ. Ռ. ԿՈՍ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ

(ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՄԲ)

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍ

334.6
4-29

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՐՇԿՈՄՊԱՆԱՐԿՉԻ
ՅԵՐԵՎԱՆ 1940

Арм.
Н 3-4927а
334.6
4-29

Ր. Ր. ԿԱՑ

15 JAN 2010

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ

(ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՄԲ)

Инв. № 17791

Гос. Публичная Библиотека в Ленинграде

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՐՇԿՈՄՊԱՆԶԱՐԿԼԻ
ՅԵՐԵՎԱՆ 1940

20 MAY 2013

26.273

Պատ. խմբագիր Հ. ՍԱՐՈՅԱՆ
Թարգմանիչ և կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. Թումանյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Խաչատրյան
Սրբագրիչներ՝ Վ. Խաչատրյան, Ա. Բալաբանյան

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ ... ՍՍՀ
Ա. ԱՄ. А. Мясн.
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

405-75-63

ՎՖ 732, պատվեր 704, տիրաժ՝ 1·000

Հանձնված է արտադրության 12/VIII—1940 թ.
Ստորագրված է տպագրության 13/VIII 1940 թ.
6 տպ. մամուլ. մեկ մամուլում 38·400 տպ. նիշ.

ՀԽՍՀ ԺԿԽ-ին կից թերթերի և ամսագրերի տպարան, Ցերիան

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՈՂՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ, 28-ԻՑ ՀՈՒՆԻՍԻ 1939 Թ.

1. Համաձայն Համարհկոոպխորհրդի, Համարհանտառկոոպմիության ու Համարհկոոպգանձխորհրդի 1939 թվի հունվարի 7-ի վորոշման 19-րդ հոդվածի մշակված (Համարհկոոպխորհրդի բյուլետեն 1939 թ. № 2—3) և Համարհկոոպխորհրդի ու Համարհանտառկոոպմիության հետ համաձայնեցված սրան կից «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» կանոնադրությունը, վորի հիմք ընդունված է ԽՍՀՄ Ժողկոմխորհի, Համկ(բ)ԿԿԿ և ՀԱՄԿԽ-ի 1938 թ. դեկտեմբերի 28-ի վորոշումը (ԽՍՀՄ Որ. Ժող. 1939 թ № 1—հոդ. 1), այլ նաև Արհապգանձարկղների կարծիքները,— ղեկավարվելով ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1929 թ. հունիսի 26-ի վորոշման 8-րդ հոդվածով (ԽՍՀՄ Որ. Ժող. 1929 թ. № 42, եջ 369) և Աշխատանքի Պաշտպանության Խորհրդին կից արհկոոպերացիայի և տնայնագործական արդյունաբերության Կոմիտեյի 1932 թ. հուլիսի 5-ի վորոշմամբ հաստատված Համարհկոոպգանձխորհրդի կանոնադրության 2-րդ հոդվածի «յե» կետով (ԲՖԽՋ, 1932 թ. № 34), —հաստատել։

2. Սույն կանոնադրության գործողությունը տարածել ԽՍՀ Միության արհեստագործական կոոպերացիայի փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ողնության գանձարկղների վողջ սիստեմայի վրա։

3. Ժամանակավոր անաշխատունակության նպաստների կանոնադրությունը գործադրության մեջ դնել 1939 թ. սեպտեմբերի

1-ից, այդ ժամկետից տարածելով նաև ժամանակավոր անաշխատունակության այն դեպքերի վրա, վորոնք 1939 թ. սեպտեմբերի 1-ին վերջացած չեն։

4. Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին սույն կանոնադրությունը գործադրության մեջ մտցնելով, վերացնել Համարհկոոպգանձխորհրդի կողմից 1937 թ. հուլիսի 9-ին հաստատված ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին կանոնադրությունը։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Ժամանակավոր անաշխատունակության նպաստի իրավունք ունեն՝

ա) արհեստագործական և անտառարհեստագործական կոոպերացիայի արտելների անդամներն ու անդամության թեկնածուները.

բ) արհեստագործական և անտառարհեստագործական արտելների ընդհանուր արհեստանոցներում, կոոպերացված տնայնագործների տանը (անհրաժեշտ ցուցակագրման դեպքում) կամ արհեստագործական և անտառարհեստագործական կոոպերացիայի աշակերտության դպրոցներում (ֆաբգործուս և պրոֆտեխդպրոցներ) բրիգադային կամ անհատական կարգով աշակերտությունն անցնող աշակերտները, անկախ արտելի անդամ լինելուց։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Արտելների անդամներին վերաբերվող հետագա հոդվածների բոլոր կանոնները,— համապատասխանորեն կիրառվում են նաև սույն հոդվածում նշված թեկնածուների և աշակերտների նկատմամբ։

§ 1. Սույն կանոնադրության առաջին հոդվածում նշված անձանց ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու դեպքում, արհեստագործական կոոպերացիայի փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության գանձարկղներն սպասարկում են նրանց, կորցրած աշխատավարձի փոխարեն, ժամանակավոր անաշխատունակության նպաստներ վճարելու միջոցով։

§ 2. Որենքով սահմանված ժամկետի ընթացքում, արտելի

անդամների կազմում չընդունված արտելի անդամության թեկնածուները յենթակա յեն ապահովման պետական սոցիալական ապահովագրության կարգով (և վոչ սույն կանոնադրությամբ)։ Թեկնածուին արտելի անդամ չընդունելու դեպքում,— նրա աշխատավարձի հաշվարկումը կատարվում է համաձայն բանվորների և ծառայողների վերաբերյալ գործող աշխատանքի որենսդրության, ըստ վորի՝ վճարած աշխատավարձի դիմաց պրոֆմիությունը վճարում են պետական սոցիալական ապահովագրության համար հասանելիք մուծանքները, դրանից պահելով արտելի անդամ չընդունված թեկնածուին վճարած ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարները։

§ 3. Արհեստագործական կոոպերացիայի սիստեմում կազմակերպված դասընթացներում սովորող արտելների անդամներին, սովորելու ժամանակամիջոցում նրանց աշխատավարձը պահպանելու դեպքում (կամ այդ աշխատավարձը վորպես թոշակ վճարելու դեպքում), ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալիս, նպաստներով ապահովվում են սույն կանոնադրության կարգով։

§ 4. Զևականորեն արտելի անդամներ հանդիսացող, բայց փաստորեն արտելում չաշխատող անձինք,— ժամանակավոր անաշխատունակության դեպքում,— նպաստ ստանալու իրավունք չունեն։

§ 5. Արտելներում վարձու աշխատող բանվորներն ու ծառայողները յենթակա յեն ապահովման պետական սոցիալական ապահովագրության դծով և վոչ թե արհեստագործական կոոպերացիայի փոխադարձ ապահովագրության և փոխադարձ ոգնության կարգով։

§ 6. Սույն կանոնադրությունը չի տարածվում Արհապգանձարկղում ապահովագրված չկոոպերացված տնայնագործների վրա։ Նրանց ապահովումը նպաստներով կատարվում է համաձայն հատուկ կանոնների։

2. Նպաստը տրվում է, յեթե անաշխատունակությունն առաջացել է փաստորեն արտելում աշխատանքը դադարեցնելու որից վոչ ուշ (և վոչ արտելի կազմից դուրս գալու որից), անկախ նրանից՝ թե արտելի տվյալ անդամի հետ վերջնահաշիվ կատարված է թե վոչ։

§ 1. Կատարած հանցագործության, արտելի կանոնադրության ու աշխատանքային կարգապահության խախտման կամ իր անձնական ցանկությամբ աշխատանքն արտելում դադարեցնելու դեպքում, ժամանակավոր անաշխատունակության նպաստ չի տրվում նաև այն դեպքում, յերբ անաշխատունակությունն առաջանում է աշխատանքը դադարեցնելու որվա ընթացքում։ Այդ դեպքում, նշանակություն չունի, թե վերոհիշյալ պատճառներով աշխատանքը դադարեցնողն արդեն հանված է արտելի կազմից թե վոչ։ Մնացած բոլոր դեպքերում, աշխատանքը դադարեցնելու որն առաջացած ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում է ընդհանուր կարգով։

Որինակ 1. Արտելի լուծարքի կապակցությամբ, Վասինան արտելում աշխատանքը դադարեցրել է 1939 թ. հոկտեմբերի 14-ին։ Հոկտեմբերի 13-ին ամբողջ բանվորական որն աշխատելով,— նա տուն վերադառնալիս ճանապարհին ընկնում է տրամվայի տակ, վիրավորվում և ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ է ստանում քսան որով։ Նպաստ նա ստանում է սովորական կարգով, վորովհետև նրա ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է աշխատանքը դադարեցնելու որը և աշխատանքից հեռանալու պատճառն ել յեղել է հարգելի։

Որինակ 2. Արտելի անդամ Կեյզինան 1939 թ. հոկտեմբերի 15-ին աշխատանքից ուշացել է յերկու ժամով և դրա կապակցությամբ ել հանված է արտելի կազմից։ Յեթե Կեյզինան՝ հոկտեմբերի 15-ից սկսված ժամանակավոր անաշխատունակության հետևանքով հիվանդանոցային թերթիկ ներկայացնի վճարման համար, բայց չկարողանա ուշացման պատճառն արդարացնել,— նրան նպաստ չի տրվի։

§ 2. Արտելի կազմից դուրս գալու մասին դիմում տված, բայց դեռ աշխատանքը չդադարեցրած արտելի անդամի ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու դեպքում,— նրա նպաստ պետք է տրվի ընդհանուր հիմունքներով։

§ 3. Յեթե ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է արտելում աշխատանքը դադարեցնելուց հետո, թեկուզ հետևյալ որը,— նպաստ չի տրվում, անկախ աշխատանքը թողնելու

պատճառից։ Նպաստ չի տրվում նաև այն դեպքում, երբ արտելի անդամի ժամանակավոր անաշխատունակությունն առաջանում է այն ժամանակամիջոցում, վորի համար նա հեռանալիս չոգտագործած հերթական և լրացուցիչ արձակուրդի դիմաց կոմպենսացիա չէ ստացել։

Որինակ. Վլասովան, արտադրության ծավալը կրճատվելու կապակցությամբ, արտելում աշխատանքը թողել է 1939 թ. հոկտեմբերի 14-ից,— հաշվարկման ժամանակ ստանալով չոգտագործած չերկու շաբաթվա արձակուրդի համար կոմպենսացիա։ Հոկտեմբերի 2-ին նա հիվանդանում և չերկու որվա հիվանդանոցային թերթիկ է ստանում։ Վլասովային նպաստ չի տրվում, վորովհետև նրա ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է աշխատանքը դադարեցնելուց չերկու որ հետո։

§ 4. Այն դեպքերում, երբ արտելում աշխատանքը դադարեցնելը կապված է գործերն ու գույքը հանձնելու հետ,— ժամանակավոր անաշխատունակության նպաստի իրավունքը սահմանելու համար աշխատանքը փաստորեն դադարեցնելու որը պետք է հաշվել հանձնումը վերջացնելու որը։

§ 5. Յեթե անաշխատունակությունն առաջանում է արտելի անդամների կազմից հանելու ճշտության մասին վեճի ընթացքում,— հիվանդանոցային թերթիկով նպաստ տրվում է միայն աշխատանքի մեջ վերականգնելու որից։

> 3. Արտելի բոլոր անդամներն իրավունք ունեն ժամանակավոր անաշխատունակության նպաստի՝ հիվանդության, ընտանիքի հիվանդ անդամին խնամելու և կարանտինի հետևանքով, անկախ տվյալ արտելում աշխատանքի ստաժի տևողությունից։
>
> Սակայն, կատարած հանցագործության, արտելի կանոնադրությունն ու աշխատանքային կարգապահությունը խախտելու և իր անձնական ցանկությամբ հեռանալու հետևանքով ուրիշ արտելի անդամների կազմից հանված (կամ վարձու աշխատանքից նույն պատճառներով հեռացված) անձը, արտել մտնելուց,— ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանում է տվյալ արտելում (նոր աշխատանքի վայրում) 6 ամսից վոչ պակաս աշխատելուց հետո։

> Այս կանոնը վերաբերվում է նաև արտելի այն անդամներին, վորոնք նշված պատճառներով արտելից հեռանալու որից 3 ամիս անցնելուց հետո, վերականգնել են աշխատանքի մեջ նույն արտելում։

§ 1. Կանոնադրության սույն հոդվածով սահմանվում է ընդհանուր կանոն, ըստ վորի, արտելների անդամներն իրավունք ունեն ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու՝ արտելում աշխատանքի մտնելու առաջին որվանից,— առանց տվյալ արտելում նրան աշխատանքի վորոշ ստաժի պահանջ ներկայացնելու։ Կանոնադրությամբ, այս ընդհանուր կանոնից դուրս, սահմանված են հետևյալ չերկու բացառությունը միայն.

ա) արտելի կին անդամին հղիության ու ծննդաբերության արձակուրդի ժամանակ նպաստի վճարումը պայմանավորված է տվյալ արտելում անընդհատ աշխատանքի վորոշ ստաժի առկայությամբ (մանրամասն տես հոդ. 4)։

բ) Կատարած հանցագործության, արտելի կանոնադրությունն ու աշխատանքային կարգապահությունը խախտելու, կամ իր անձնական ցանկությամբ արտելի անդամների կազմից հանված (կամ վարձու աշխատանքից հեռացված) անձանց, ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում է միայն նոր աշխատանքի վայրում (տվյալ արտելում) վեց ամսվա ստաժի առկայության դեպքում։

§ 2. Անկախ ստաժի տևողությունից, ժամանակավոր անաշխատունակության նպաստ հիվանդության, խեղանդամության, կարանտինի և ընտանիքի հիվանդ անդամին խնամելու հետևանքով պետք է տրվի հետևյալ անձանց, վորոնց վրա վեց ամսվա ստաժի պահանջը չի տարածվում.

ա) Նախորդ վարձու աշխատանքից հաստիքների կրճատման հետևանքով հեռացվածների կամ արտելի կազմից աշխատանքների ծավալը կրճատվելու կապակցությամբ դուրս չեկածներին.

բ) ձեռնարկության, հիմնարկության կամ արտելի լուծարքի հետևանքով նախորդ վարձու աշխատանքից հեռացվածներին կամ արտելի կազմից դուրս չեկածներին.

գ) աշխատանքին անհամապատասխան լինելու հետևանքով

նախորդ վարձու աշխատանքից հեռացվածներին կամ արտելի կազմից դուրս յեկածներին.

դ) առաջին անգամ աշխատանքի մտածներին (արտելներում կամ վարձու շաշխատողներին).

ե) արտելներում կամ վարձու շաշխատած տնտեսուհիներին.

զ) առաջին անգամ արտել մտած և արտելում կամ վարձու շաշխատած շկոոպերացված տնայնագործներին.

է) արտելներում կամ վարձու շաշխատած կոլխոզնիկներին.

ը) ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո, անմիջապես արտել մտած անձանց.

թ) Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի շարքերից զորացրվածներին.

ժ) կենսաթոշակ ստանալու ընթացքում վարձու կամ արտելներում շաշխատած թոշակառուներին.

§ 3. Վեց ամսյա ստաժի պահանջը չի տարածվում նաև այն անձանց վրա, վորոնք վարձու աշխատանքից հեռացված կամ արտելի կազմից հանված են հանցագործություն կատարելու, արտելի կանոնադրությունն ու աշխատանքային կարգապահությունը խախտելու և մինչև 1938 թ. դեկտեմբերի 29-ը, այսինքն՝ մինչև ԽՍՀՄ Ժողկոմխորհի, Համկ(բ)ԿԿԿ և ՀԱՄԿԽ-ի աշխատանքային կարգապահության ամրացման միջոցառումների մասին 1938 թ. դեկտեմբերի 28-ի վորոշումը,— իրենց անձնական ցանկությամբ հեռանալու հետևանքով։

Որինակ. Ալեքսանդրովը 1939 թ. դեկտեմբերի 20-ից պարապուրդի պատճառով հանված է յեղել արտելի կազմից։ Ալեքսանդրովն ընդունվել է ուրիշ արտելում վորպես անդամ և այդ որվանից եկ սկսել է աշխատել։ 1939 թ. փետրվարի 1-ին հիվանդանալու դեպքում Ալեքսանդրովն իրավունք ունի ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու, թեկուզ վեց ամսվա ստաժ չունենա եկ, վորովհետև նա արտելից հանված է յեղել 1938 թ. դեկտեմբերի 20-ին, այսինքն՝ մինչև ԽՍՀՄ Ժողկոմխորհի, Համկ(բ)Կ ԿԿԿ և ՀԱՄԿԽ-ի 1938 թ. դեկտեմբերի 28-ի վորոշման հրատարակվելը։

§ 4. Ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու համար, ստաժը պետք է հաշվել վոչ թե արտելի կանոնադրությունը խախտելու և այլ պատճառների հետևանքով արտելի կազմից հանելու (կամ վարձու աշխատանքից հեռացնելու) որվանից, վորի դեպքում նպաստ ստանալու համար պահանջվում է վեց ամսյա ստաժ, այլ նոր արտելում աշխատանքն սկսելու (այսինքն աշխատանքի նոր վայրում) որվանից։

Որինակ. Իլինան 1939 թ. հունվարի 2-ից հեռացված է յեղել աշխատանքից պրոգուլի պատճառով։ Մինչև մայիսի 4-ը նա չի աշխատել, այլ զբաղվել է տնային տնտեսությամբ։ 1939 թ. մայիսի 4-ին Իլինան ընդունվել է արտելի անդամ և սկսել է աշխատել։ 1939 թ. նոյեմբերի 1-ին հիվանդանալու հետևանքով Իլինան ժամանակավոր անաշխատունակության նպաստ չի ստանա, վորպես նոր աշխատանքի վայրում վեց ամսից պակաս աշխատող, չնայած նրան, վոր պրոգուլի հետևանքով հեռացվելուց հետո անցել է 10 ամիս։

§ 5. Այն արտելի անդամը, վորին նպաստ նշանակելիս պետք է առաջադրվի վեց ամսյա ստաժի պահանջ, ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու որը պահանջված ստաժի առկայության դեպքում միայն։ Կարճ ժամկետով աշխատողներին նպաստ բոլորովին չի տրվում՝ ժամանակավոր անաշխատունակության բոլոր որերի համար, թեկուզ և այդ ժամանակամիջոցում, լրանա յեկ տվյալ արտելում աշխատանքի սկզբի որից՝ վեց ամիսը։

Որինակ. Կանոնադրությունը խախտելու համար, 1939 թ. մայիսին, արտելից հեռացված Վլասովը, 1939 թ. հունիսի 4-ից սկսել է աշխատել մի ուրիշ արտելում՝ ընդունվելով նրա անդամ։ Վլասովը 1939 թ. դեկտեմբերի 1-ին հիվանդանում և հիվանդանոցային թերթիկով 25 որվա արձակուրդ է ստանում։ Վլասովը, հիվանդության ամբողջ ժամանակամիջոցի համար, ժամանակավոր անաշխատունակության նպաստ չի ստանա, վորովհետև նա առ 1-ն դեկտեմբերի, դեռևս 6 ամիս չի աշխատել։ Այն հանգամանքը, վոր հիվանդության արձակուրդի մի մասն ընկնում է դեկտեմբերի 4-ից հետո (յերբ տվյալ արտելում աշխատանքի սկզբի որից 6 ամիսը լրացել է), նշանակություն չունի, քանի վոր պահանջվելիք ստաժը նա պետք է ունենար հիվանդության սկզբին։

§ 6. Կատարած հանցագործության, արտելի կանոնադրությունն ու աշխատանքային կարգապահությունը խախտելու, կամ անձնական ցանկությամբ 1938 թ. դեկտեմբերի 29-ից սկսած վարձու աշխատանքից հեռացված կամ արտելի կազմից հանված անձինք,— նոր աշխատանքի վայրում վեցամսյա ստաժի բա-

ցակայության դեպքում— նպաստ չեն ստանում ժամանակավոր անաշխատունակության բոլոր դեպքերում, նույն թվում և աշխատանքային խեղանդամության դեպքում։

Եթե այդ ժամանակամիջոցում տեղի ունեցած ժամանակավոր անաշխատունակությունն առաջացնող դժբախտ պատահարը տեղի չե ունեցել արտելի կամ կողմնակի ձեռնարկության, հիմնարկության ու այլոց հանցանքով,— տուժողը կարող է իրեն պատճառած վնասը փոխհատուցելու մասին, խեղանդամության հայց հարուցել նրանց դեմ, ընդհանուր քաղաքացիական կարգով։

§ 7. Անհրաժեշտ դեպքերում աշխատանքի վեցամսյա ստաժը հաշվելիս, նրա մեջ մտցվում է փաստացի աշխատանքի ժամանակամիջոցը, և վոչ թե արտելի անդամ լինելու ժամանակաշրջանը։

Որինակ. Վասիլեվը պրոգուլի պատճառով վարձու աշխատանքից հեռացված է յեղել 1939 թ. մարտի 1-ից։ Մարտի 15-ից նա ընդունվել է արտելի անդամ, բայց արտելում սկսել է աշխատել միայն 1939 թ. հունիսի 1-ից։ Ժամանակավոր անաշխատունակությունը 1939 թ. նոյեմբերի 21-ից տեղի ունենալու դեպքում, Վասիլեվը նպաստ չի ստանում։ Նախկին աշխատանքից պրոգուլի պատճառով հեռացվածներից պահանջվում է վեցամսյա ստաժ, իսկ Վասիլեվը թեև արտելի անդամ է վեց ամսից ավելի, բայց արտելում աշխատել է միայն 5 ամիս 20 որ։

§ 8. Վորոշ դեպքերում պահանջվելիք վեց ամսյա ստաժի մեջ պետք է մտցվի արտելի անդամի միայն փաստացի աշխատանքը։ Այսպիսով ստաժի մեջ չի կարող մտնել նպաստով չվճարված ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանը և առանց աշխատավարձի պահպանման արձակուրդի ժամանակաշրջանը։

Որինակ. Կազանսկին պրոգուլի համար վարձու աշխատանքից հեռացված է յեղել 1939 թ. մարտի 14-ից։ 1939 թ. մայիսի 4-ին նա մտնելով արտել՝ վորպես անդամ,—սկսել է աշխատել արտելում։ Ոգոստոսին Կազանսկին իր հաշվին 15 որվա արձակուրդ է ունեցել, իսկ սեպտեմբերին ել 15 որ հիվանդացել և հիվանդանոցային թերթիկ է ստացել, սակայն վեցամսյա ստաժի բացակայության հետևանքով նպաստ չի վճարվել։ 1939 թ. նոյեմբերի 15-ից Կազանսկին նորից ժամանակավոր անաշխատունակության հետևանքով 10 որվա արձակուրդ է ստացել։ Չնայած այդ արտելում Կազանսկու աշխատանքից հետո (մայիսի 4-ից առ 15-ը նոյեմբերի) վեց ամսից ավել է անցել, բայց և այնպես նա նրպաստ չի ստանա, վորովհետև այդ ժամանակաշրջանում նա այդ արտելում աշխատել է (դուրս գալով արձակուրդները՝ իր հաշվին ոգոստոսին և հիվանդության հետևանքով՝ սեպտեմբերին) մոտավորապես 5 ու կես ամիս միայն։

§ 9. Համաձայն ԽՍՀՄ Ժողկոմխորհի, Համկ(բ)կկկ և ՀԱՄԿԽ-ի պարզաբանման («Պրավդա» 26-ը հունվարի 1939 թ.)— «Պրոգուլի հետևանքով հեռացված բանվորներն ու ծառայողները չեն կարող յերեք ամսվա ընթացքում աշխատանքի ընդունվել նույն ձեռնարկությունում կամ հիմնարկությունում, բայց կարող են անմիջապես ընդունվել այլ ձեռնարկություններում կամ հիմնարկություններում. և այս, և այն դեպքերում նրանք կարող են աշխատանքի ընդունվել միայն ԽՍՀՄ Ժողկոմխորհի, Համկ(բ)կկկ և ՀԱՄԿԽ-ի 1939 թ. դեկտեմբերի 28-ի «Աշխատանքային կարգապահությունը կարգավորելու միջոցառումների մասին» վորոշմամբ նախատեսնված կարգով, համաձայն վորի՝ պրոգուլի հետևանքով հեռացվածները կորցնում են իրենց անընդհատ ստաժը և դրա հետ կապված իրավունքներն ու արտոնությունները, ըստ վորի, նրանք նույն ձեռնարկությունը կամ հիմնարկությունը մտնելիս,— ընդունվում են ինչպես ամեն վոք, վորն աշխատանքի ստաժ չունենալով, առաջին անգամ աշխատանքի յե մտնում»։

Յելնելով վերոհիշյալ պարզաբանումից, սույն կանոնադրության 3-րդ հոդվածն այն անձանց համար, վորոնք արտելից հեռացված են վերոհիշյալ հոդվածում նշված պատճառներով, բայց այնուամենայնիվ յերեք ամսից հետո վերականգնված են աշխատանքի մեջ նույն արտելում,— ժամանակավոր անաշխատունակության ապահովության իրավունք ձեռք բերելու համար սահմանվում է վեցամսյա ստաժ (աշխատանքը վերսկսելուց հետո)։ Այդ դեպքում պետք է ի նկատի ունենալ, վոր յերեքամսյա ժամկետը հաշվվում է վոչ թե արտելի կազմից հեռացվելու որվանից, այլ աշխատանքը փաստորեն դադարեցնելու որվանից։ Իսկ նպաստի իրավունք ձեռք բերելու համար պահանջվելիք վեցամսյա ստաժը պետք է հաշվել աշխատանքը նորից սկսելու որվանից։

Որինակ 1. Արտելի անդամ Կոլեսովն արտելի կողմից հեռացվել է 1939 թ. ոգոստոսի 15-ից։ Յետոյ ամսից հետո Կոլեսովը նորից ընդունվել է նույն արտելի անդամ և 1939 թ. նոյեմբերի 20-ից սկսել է աշխատել։ Աշխատանքի առաջին վեց ամսվա ընթացքում, այսինքը՝ մինչև 1940 թ. մայիսի 20-ը, Կոլեսովը հիվանդանալու դեպքում,— նրան նպաստ չի տրվում։

Որինակ 2. Կատինն իր անձնական ցանկությամբ արտելից հեռացել է 1939 թ. հունիսի 10-ին, իսկ 1939 թ. հոկտեմբերի 1-ին նորից ընդունվել է արտելի կազմում և անցել է աշխատանքի։ 1939 թ. հոկտեմբերի 1-ից սկսած, աշխատանքի առաջին վեց ամսվա ընթացքում հիվանդանալու դեպքում,— Կատինը ժամանակավոր անաշխատունակության նպաստ չի ստանալ։

Այս դեպքում նշանակություն չունի, թե՝ Կատինի հեռացումը արտելի անդամների կազմից, յերբ նա աշխատելիս չի յեղել,— ձևակերպված է յեղել թե վոչ։

Յեթե Կատինը արտելում աշխատանքը թողած լինի վոչ իր անձնական ցանկությամբ, այլ հարգելի պատճառով (որինակ, աշխատանքի ծավալի կրճատում), այդ դեպքում, հոկտեմբերի 1-ից աշխատանքը վերսկսելիս,— նա կարող է ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալ,— թեկուզ հիվանդացած լինի աշխատանքը վերսկսելու որը։

> 4. Արտելների կին անդամները, ժամանակավոր անաշխատունակության նպաստի իրավունք ունեն հղիության ու ծննդաբերության հետևանքով, յեթե նրանք հղիության արձակուրդ ստանալու որը տվյալ արտելում անընդհատ աշխատել են (հոդ.հոդ. 27—28) 7 ամսից վոչ պակաս։

§ 1. Հղիության ու ծննդաբերության հետևանքով արձակուրդ (արձակուրդի ժամկետները տես հոդ. 19, եջ 38) տրվում է բոլոր արտելի կին անդամներին, անկախ նրանց աշխատանքի ստաժի տևողությունից արտելում։ Սակայն, ժամանակավոր անաշխատունակության ժամանակամիջոցի համար նպաստ ստանալու իրավունք են ունենում այն կանայք, վորոնք առ հղիության արձակուրդի առաջին որը, տվյալ արտելում անընդհատ աշխատել են 7 ամսից վոչ պակաս։

§ 2. Առ հղիության արձակուրդի առաջին որը յոթ ամսվա

ստաժ չունեցող արտելի կին անդամներին նպաստ չի տրվում վոչ հղիության և վոչ էլ հետ ծննդաբերության շրջանի արձակուրդի ժամանակամիջոցի համար։

§ 3. Հղիության ու ծննդաբերության արձակուրդի նպաստ ստանալու իրավունք ձեռք բերելու համար պահանջվելիք յոթ ամսվա ստաժը պետք է լինի անընդհատ տվյալ արտելում։ Նախորդ աշխատանքները ստաժի մեջ հաշվելու կարգը (վորոշ պայմաններով) տես հոդ. հոդ. 27 և 28 և նրանց կից մեկնաբանումները— եջ 48—50)։

§ 4. Յեթե հղիության ու ծննդաբերության հետևանքով արձակուրդում գտնվող, բայց նպաստ ստանալու իրավունք չունեցող կնոջ ժամանակավոր անաշխատունակությունն առաջանում է այլ պատճառով (հիվանդություն, կարանտին և այլն),— նպաստ նրան տրվում է միայն այն որվանից, յերբ նա, հետ ծննդաբերության շրջանի արձակուրդը վերջանալուց հետո, պետք է անցներ աշխատանքի։

> 5. Հերթական կամ լրացուցիչ արձակուրդում գտնվելու ժամանակ արտելների հիվանդացած անդամներին՝ արձակուրդի շրջանում ընկած հիվանդ որերի համար նպաստ տրվում է ընդհանուր հիմունքներով (իսկ արձակուրդը, համաձայն արձակուրդների մասին գործող կանոնների,— յենթակա չե յերկարացման կամ հետաձգման)։

§ 1. Որինակ. Սեպտեմբերի 16-ից առ 30-նը սեպտեմբերի հերթական արձակուրդում գտնվող արտելի անդամը սեպտեմբերի 25-ին հիվանդացել է, վորը տևել է մինչև հոկտեմբերի 5-ը։ Նրա արձակուրդը սեպտեմբերի 25-ից դադարեցվում է։ Արձակուրդի մնացած չոգտագործած որերը պետք է փոխադրվի այլ ժամկետի, իսկ արտելի անդամին, սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 4-ը, վճարվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստ։

§ 2. Հերթական կամ լրացուցիչ արձակուրդների շրջանում հիվանդության հետևանքով, հիվանդանոցային թերթիկ ստանալու համար չի պահանջվում, վոր այդ հիվանդությունն անպայման կապված լինի անկողային ռեժիմի հետ։

§ 3. Հերթական կամ լրացուցիչ արձակուրդի ժամանակ հիվանդանոցային թերթիկ տրվում է միայն հիվանդության հետևանքով ժամանակավոր անաշխատունակության դեպքում։ Իսկ ընտանիքի հիվանդ անդամին խնամելու, կարանտինի և այլ դեպքերում հերթական և լրացուցիչ արձակուրդի ժամանակ հիվանդանոցային թերթիկներ չեն տրվում և նպաստ էլ չի վճարվում։

§ 4. Այն ապահովագրվածներին, որոնց ժամանակավոր անաշխատունակությունն առաջանում է մշտական բնակավայրից ու աշխատանքի վայրից դուրս (որինակ, գործուղման ժամանակ, հանգստյան տնում և այլն) հիվանդանոցային թերթիկներ տրվում են նրանց ժամանակավոր բնակավայրերում, միայն բուժհիմնարկի գլխավոր բժշկի հաստատմամբ (ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1937 թ. ոգոստոսի 14-ին հաստատված, ՀԱՄԿԽ-ի և ԽՍՀՄ Առժողկոմատի 1937 թ. հուլիսի 31-ի հրահանգի 24-րդ հոդվածով)։

6. Եթե աշխատունակությունը կորցրած է, արտելի ներքին կարգապահական կանոններով նախատեսված, առանց աշխատավարձի պահպանման արձակուրդի ժամանակ, նման արձակուրդի շրջանում ընկած անաշխատունակության որերի համար նպաստ չի տրվում, բայց եթե անաշխատունակությունը շարունակվում է և արձակուրդից հետո,— նպաստ տրվում է սկսած այն որվանից, երբ արտելի անդամը պետք է աշխատանքի անցներ։

§ 1. Հանված է։

§ 2. Եթե ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է առանց աշխատավարձի պահպանման արձակուրդի ժամանակ, նպաստ չի տրվում ժամանակավոր անաշխատունակության ամբողջ ժամանակաշրջանի համար, թեկուզ այդպիսին ընդգրկի և այն ժամանակամիջոցը, երբ արտելի անդամը պետք է անցներ աշխատանքի։

Որինակ. 1. Արտելի անդամ Բորիսովը առանց աշխատավարձի պահպանման արձակուրդ է ստացել 1-ից առ 10-ը հոկտեմբերի։ Եթե Բորիսովը 5-ից առ 15-ը հոկտեմբերի հիվանդանոցային թերթիկ ստանա,— նրան պետք է ժամանակավոր անաշխատունակության նպաստ վճարվի սկսած հոկտեմբերի 11-ից, այսինքն այն որվանից, երբ նա պետք է անցներ աշխատանքի։

7. Բանտարկության և դատական-բժշկական եքսպերտիզայի ժամանակ նպաստ չի տրվում։ Եթե անաշխատունակությունը շարունակվում է նաև ազատվելուց հետո,— նպաստ տրվում է կալանքից ազատվելուց կամ դատական-բժշկական եքսպերտիզան վերջանալուց հետո ընկած ժամանակի համար, եթե արտելի անդամը վերականգնել է աշխատանքի մեջ նույն արտելում։

§ 1. Ժամանակավոր անաշխատունակությունը բանտարկման կամ դատական-բժշկական եքսպերտիզան անցնելու հետ զուգադիպելու դեպքում, նպաստ չի տրվում բոլոր դեպքերում, այսինքն և այն ժամանակ, երբ արտելի անդամը կալանքից ազատվելուց կամ դատական-բժշկական եքսպերտիզան վերջանալուց հետո աշխատանքի մեջ էլ վերականգնվի։ Արտելի անդամին այդ ժամանակի համար աշխատավարձ վճարելու հարցը լուծվում է արտելի անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ (կամ նրա հանձնարարությամբ— վարչության) կամ դատական կարգով՝ համաձայն ԽՍՀՄ Գերագույն Դատարանի Պլենումի 1939 թ. սեպտեմբերի 21-ի վորոշման։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. библиотека
ՀՍՍՌ-ում ՍՍՀ
Ա. Մ. Ա. Մասիսյանի անվան

II. ՆՊԱՍՏ ՎՃԱՐԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

8. Արտելների անդամները ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանում են.—

ա) հիվանդության դեպքում,— յեթե նրանք կորցնում են իրենց աշխատունակությունը.

բ) հիվանդության կապակցությամբ այլ աշխատանքի փոխադրվելու դեպքում.

գ) հղիության ու ծննդաբերության դեպքում.

դ) ընտանիքի հիվանդ անդամին խնամելու անհրաժեշտության դեպքում.

ե) կարանտինի դեպքում։

Արտելների անդամների աշխատանքից ազատումը, բոլոր նշված դեպքերում, կարող է տեղի ունենալ՝ բացառապես ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1937 թ. ոգոստոսի 14-ին հաստատված ՀԱՄԿԽ-ի և ԽՍՀՄ Առժողկոմատի 1937 թ. հուլիսի 31-ի (ԽՍՀՄ Որ. Ժող. 1937 թ. № 54, եջ 209) հրահանգով նախատեսված կարգով։

§ 1. Կանոնադրության սույն հոդվածում նշված ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1937 թ. ոգոստոսի 14-ին հաստատված ՀԱՄԿԽ-ի և ԽՍՀՄ Առժողկոմատի 1937 թ. հուլիսի 31-ի հրահանգը, վորը սույն մեկնաբանման մեջ քաղվածքներով մեջ է բերված,—ԽՍՀՄ Առժողկոմատի և Համարհկոոպգանձխորհրդի 1937 թ. սեպտեմբերի 7-ի նամակով (Համարհկոոպգանձխորհրդի բյուլետեն, 1937 թ. № 14) տարածված է արհեստագործական կոոպերացիայի սիստեմայի վրա։

§ 2. Հիվանդության կամ խեղանդամության հետևանքով արձակուրդ տրվում է ժամանակավոր անաշխատունակության ամբողջ շրջանի ընթացքում՝ մինչև աշխատունակության վերականգնումը կամ մինչև բժշկական-աշխատանքային եքսպերտ հանձնաժողովի կողմից հաշմության սահմանումը (ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1937 թ. ոգոստոսի 14-ին հաստատված ՀԱՄԿԽ-ի և ԽՍՀՄ Առժողկոմատի 1937 թ. հուլիսի 31-ի հրահանգի 6-րդ հոդվածը)։ Նպաստը վճարելու ժամկետի մասին տես սույն կանոնադրության հոդ. հոդ. 16, 17, 18 և նրանց կից մեկնաբանումները։

§ 3. Բժիշկները իրավունք ունեն միանձնորեն հիվանդանոցային թերթիկներ տալ յուրաքանչյուր անգամ յերեք որից վոչ ավելի, իսկ ընդհանուր առմամբ, հիվանդության կամ խեղանդամության տվյալ դեպքի համար՝ տաս որից վոչ ավելի (նույն հրահանգի 7-րդ հոդվածը)։

§ 4. Անաշխատունակությունն առաջանալուց հետո 10 որից ավելի հիվանդանոցային թերթիկի յերկարացումը, այլ նաև հետագա ամեն մի յերկարացում կատարվում է բուժող բժշկի կողմից՝ միայն գլխավոր բժշկի կամ տվյալ բուժհիմնարկում կազմակերպված բժշկական կոնսուլտացիոն հանձնաժողովի հաստատմամբ։

§ 5. Այն բոլոր անձինք, վորոնց իրավունք է վերապահված 10 որից ավելի հիվանդանոցային թերթիկները յերկարացնելու (հոդ. 8),— այդ յերկարացումը կարող է թույլատրվել միայն հիվանդին անձամբ քննելուց հետո։ Յերկարատև հիվանդությունների դեպքում այդ քննությունները կարող են կատարվել վոչ հաճախ, քան 10 որը մեկ անգամ (նույն հրահանգի 9-րդ հոդվածը)։

§ 6. Աշխատունակ ապահովագրվածների համար բոլոր լաբարատոր հետազոտումներն ու բուժական պրոցեդուրաները— (ֆիզիոտերապիա, ռենտգենոտերապիա և այլն) պետք է անցկացնեն նրանց համար վոչ աշխատանքի ժամերին,— առանց հիվանդանոցային թերթիկներ տալու, բացի այն դեպքերից, յերբ տրվյալ հետազոտումն ու պրոցեդուրան, ըստ իրենց բնույթի, կարող են կատարվել միայն աշխատանքի ժամերին (նույն հրահանգի 10-րդ հոդվածը)։

§ 7. Պոլիկլինիկաներին կցված արտելների անդամներին հիվանդանոցային թերթիկներ տալիս են այդ պոլիկլինիկաների բժիշկները։ Բայց յեթե հիվանդն ըստ իր առողջության դրության չի կարող ներկայանալ պոլիկլինիկա, իսկ պոլիկլինիկան էլ իր բժիշկները չունի՝ տանը բուժողություն ցույց տալու համար,— հիվանդանոցային թերթիկ տրվում է արտելի անդամի բնակավայրում գտնվող բուժհիմնարկի բժշկի կողմից։ Արտելի մնացած անդամներին հիվանդանոցային թերթիկներ տրվում են՝ կամ ար-

տելի անդամի բնակավայրում կամ նրա աշխատանքի վայրում գտնվող բուժհիմնարկների բժիշկների կողմից։

§ 8. Ստացիոնարում բուժվելու դեպքում (հիվանդանոց, կլինիկա և այլն) հիվանդին ստացիոնարում գտնվելու ամբողջ ժամանակամիջոցի համար, հիվանդանոցային թերթիկներ տրվում են բուժող բժշկի կողմից՝ բաժանմունքի վարիչի հետ միասին։ Ստացիոնարից դուրս գրվելուց հետո, հիվանդանոցային թերթիկի յերկարացումը կատարվում է նույն անձանց կողմից միասին՝ մինչև բուժհիմնարկ ներկայանալու կամ տունը բժիշկ հրավիրելու համար նշանակված ժամկետը, բայց միաժամանակ վոչ ավելի 15 որից (ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1937 թ. ոգոստոսի 14-ին հաստատված ՀԱՄԿԽ-ի և ԽՍՀՄ Առժողկոմատի 1937 թ. հուլիսի 31-ի հրահանգի 13 և 14 հոդվածները)։

§ 9. Մեկ բժիշկ ունեցող բուժհիմնարկներում (գյուղական վայրերում, հեռավոր շրջաններում և այլն) այդ բժիշկին իրավունք է վերապահվում հիվանդանոցային թերթիկներ տալ միանձնորեն հիվանդության ամբողջ ժամանակամիջոցի համար (նույն հրահանգի 15-րդ հոդվածը)։

§ 10. Այն վայրերում, ուր բուժող բժիշկներ չկան, հիվանդանոցային թերթիկներ տալու իրավունքը, մարզային առաջին կամ ավտոնոմ ԽՍՀ առժողկոմատի կողմից, կարող է հանձնարարվել բուժակին՝ բուժշրջանի վարիչին, բժշկական շրջանի վարիչի կողմից հետագա ստուգման պայմանով (նույն հրահանգի 3-րդ հոդվածից)։

§ 11. Սանկուրորտային բուժման համար ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ տրվում է բացառապես սանկուրորտային հանձնաժողովների վորոշմամբ։

Սանկուրորտային բուժման ուղարկելիս հիվանդանոցային թերթիկներ տրվում են միայն սանկուրորտային հանձնաժողովների կողմից, յերկու ստորագրությամբ՝ նախագահի և հանձնաժողովի անդամներից մեկի։

Այդ հիվանդանոցային թերթիկները տրվում են բուժման գնալուց առաջ։

Սանկուրորտային հանձնաժողովների վորոշումները հանդիսանում են վերջնական։

Սանկուրորտային բուժման համար այլ կարգով տրված հիվանդանոցային թերթիկները (վոչ սանկուրորտային հանձնաժողովի կողմից, այլ բուժող բժշկի կողմից) վճարման յենթակա չեն։

Յեթե սանկուրորտային հանձնաժողովը հիվանդի համար անհրաժեշտ չի համարի սանկուրորտային բուժումը,— այդ դեպքում, վոչ միայն ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ, այլ և ուղեգիր չի կարող տրվել։

§ 12. Յեթե սանկուրորտային բուժման ուղարկելու որն արտելի անդամը ճանաչված է անաշխատունակ,— ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ սանկուրորտային բուժման ամբողջ ժամանակամիջոցի համար, ավելացրած նաև գնալ-վերադառնալու համար պահանջվող որերը,—տրվում է առանց հաշվի առնելու հերթական և լրացուցիչ արձակուրդները։ Այս դեպքում, նշանակություն չունի, թե սանատորական ուղեգրերը կամ կուրսովկան տրված են արհապգանձարկղի, արտելի վարչության, թե մի այլ կազմակերպության հաշվին կամ թե չե այդպիսին ձեռք է բերված արտելի անդամի իրեն հաշվին։

Սակայն այն դեպքերում, յերբ արտելի անաշխատունակ անդամի հերթական և լրացուցիչ արձակուրդների ընդհանուր տեվողությունը 30 որից գերազանցում է,— արձակուրդային ժամանակամիջոցի 30 որից գերազանցող մասը մտցվում է սանկուրորտային բուժման համար տրվող արձակուրդի մեջ։

Որինակ. Արտելի անդամ Վասիլեվը հոդացավի հետևանքով մի ամսվա ընթացքում ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ է ստացել։ ԱՊԿԲԲ Վասիլեվին, հոդացավը բուժելու համար, ուղարկում է Մացեստա։ Վորովհետև կուրորտ ուղարկելու մոմենտին Վասիլեվը գտնվում է ժամանակավոր անաշխատունակության արձակուրդում այն հիվանդությամբ (հիվանդանոցային թերթիկ ունի), վորի բուժման համար նա կուրորտ է ուղարկվում,— նրան ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ տրվում է կուրորտում գտնվելու ամբողջ ժամկետի (30 որ) և գնալ վերադառնալու համար (4×2=8 որ)։ Այս դեպքում արգելվում է հերթական և լրացուցիչ արձակուրդները հաշվել կուրորտային բուժման համար պահանջվող ժամկետի հաշվին, յեթե հերթական և լրացուցիչ արձակուրդների տեվողությունը չի գերազանցում մեկ ամսից, իսկ յեթե գերազանցում է, — արձակուրդի մեկ ամսից ավելի համապատասխան մասը, մտցվում է բուժման համար տրվելիք արձակուրդի ժամկետի մեջ։

Յեթե Վասիլեվն ունենար հերթական և լրացուցիչ արձակուրդներ 30 բանվորական որվա (իսկ 36 որացուցային), հի-

վանդանոցային թերթիկ նրան պետք է տրվի վոչ թե 38 որվա, այլ 32 որվա (36—30=6, 38—6=32)։

§ 13. Սանկուրորտային բուժման կարիք ունեցող արտելների աշխատունակ անդամներին, վորոնք ուղարկվում են արհապգանձարկղների ձրի ուղեգրերով և ԱՊԿԲԲ-ների միջոցով բաշխված արտելների վարչությունների ձրի ուղեգրերով,— բուժման և գնալ-վերադառնալու համար ժամանակավոր անաշխատունակության արձակուրդի ժամկետի մեջ է մտցվում հերթական և բոլոր լրացուցիչ արձակուրդները, իսկ չբավականացող ժամանակի համար տրվում է հիվանդանոցային թերթիկ։

Յեթե արտելի աշխատունակ անդամը մինչև սանատորիա կամ կուրորտ գնալը, մի վորևիցե պատճառով արդեն ոգտագործել է իր արձակուրդը, այդ դեպքում էլ հերթական և լրացուցիչ արձակուրդները մտցվում են բուժման և գնալ-վերադառնալու ժամկետի մեջ, իսկ հիվանդանոցային թերթիկ տրվում է այդպիսին հաշվելուց հետո, մնացած որերի համար։

Որինակ. Բախարևն ըստ արձակուրդների գրաֆիկի՝ իր հերթական արձակուրդն ոգտագործել է մայիսին։ Ոգոստոսին Բախարևը գնում է սանատորիա՝ Կիսլավոդսկ։ Սանատորիայում մնալու տևողությունն ըստ ուղեգրի սահմանված է 30 որ։ Գնալ-վերադառնալու համար անհրաժեշտ է 6 որ։ Բախարևի հերթական արձակուրդը կազմում է 12 բանվորական որ (ներկա դեպքում 15 որացուցային որ)։ Բախարևը հիվանդանոցային թերթիկով արձակուրդ կստանա 21 որվա (36+6=36. 36—15=21), իսկ չբավականացնող 15 որվանն էլ Բախարևն արտելի վարչության թույլտվությամբ կարող է արձակուրդ ստանալ իր հաշվին։

§ 14. Սանկուրորտային բուժման կարիք ունեցողներին, վորոնք գնում են՝

ա) իրենց հաշվին գնված ուղեգրերով.

բ) արտելի վարչության կողմից (անկախ ԱՊԿԲԲ-ից) անմիջականորեն տրված ձրի ուղեգրերով.

գ) կուրսովկաներով (ձրի կամ վճարով).

դ) մասամբ արտելի անդամի իրեն կողմից վճարված ուղեգրերով[1],— ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ չի

1) Փոխադարձ ապահովագրության միջոցների հաշվին տրված, իսկ 20%-ը արտելի անդամի կողմից վճարած, ուղեգրերը հավասարեցվում են ձրիներին։

տրվում, թեկուզ և հերթական ու լրացուցիչ արձակուրդների ժամկետը բավական էլ չլինի բուժման և գնալ-վերադառնալու համար։ Չբավականացնող ժամանակի համար արտելի վարչությունը կուրորտ կամ սանատորիա գնացողներին արձակուրդ տալիս է առանց աշխատավարձի պահպանման։

§ 15. Այն դեպքերում, յերբ ժամանակավոր անաշխատունակությունն առաջանում է սանատորիայում և զուգադիպում է (լրիվ կամ մասնակի) հերթական ու լրացուցիչ արձակուրդների հետ,— հիվանդանոցային թերթիկ տրվում է սանատորիայից դուրս գրվելիս։ Այն ժամանակ թերթիկ տրվում է հերթական կամ լրացուցիչ արձակուրդի հետ զուգադիպած ժամանակավոր անաշխատունակության բոլոր որերի համար, հանելով այն որերը, վորի համար արտելի անաշխատունակ անդամն արդեն հիվանդանոցային թերթիկ է ունեցել նրան սանատորիա ուղարկելու կապակցությամբ։ Իսկ առանց աշխատավարձի պահպանման արձակուրդի հետ զուգադիպած ժամանակավոր անաշխատունակության որերի համար, հիվանդանոցային թերթիկ չի տրվում։

Որինակ. Արտելի անաշխատունակ անդամ Ռոստովցեվին սանատորիա ուղարկելիս տրվել է 4 որվա հիվանդանոցային թերթիկ, հաշվելով և հերթական արձակուրդը։ Սանատորիայում նա հերթական արձակուրդի ժամանակ, անգինայով հիվանդանալու հետևանքով 6 որ անաշխատունակ է յեղել։ Անգինայի պատճառով հիվանդանոցային թերթիկ նա կստանա միայն 2 որվա (հանելով առաջուց ստացած արձակուրդի 4 որը. 6—4=2)։ Այն դեպքում, յեթե Ռոստովցեվին սանատորիա ուղարկելիս արձակուրդ տրված լիներ վոչ թե 4, այլ 6 կամ ավելի որվա,— այդ դեպքում, անգինայի հետևանքով, նա բոլորովին արձակուրդ չեր ստանա հիվանդանոցային թերթիկով։

§ 16. Արտելի հիվանդ անդամներին ճաշարանները դիետ (բուժական) սննդի ուղարկելիս, հիվանդանոցային թերթիկ չի տրվում, վորովհետև ճաշարաններում սնունդը պետք է անցկացվի աշխատանքային ժամերից հետո։

§ 17. Հանգստյան տնում մնալու համար ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ չի տրվում։ Հանգստյան տնում գտնվելու ժամանակ, ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ տրվում է միայն այն դեպքում, յերբ այդպիսին անհրաժեշտ է անկախ հանգստյան տուն ուղարկելուց։

2. ԸՆՏԱՆԻՔԻ ՀԻՎԱՆԴ ԱՆԴԱՄԻՆ ԽՆԱՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

9. Ընտանիքի անդամը հիվանդանալու դեպքում, յեթե խնամք է պահանջվում,— հիվանդին խնամող արտելի անդամին նպաստ տրվում է՝ յեթե նա տանը չի աշխատում և ապրում է հիվանդի հետ միասին, յեթե խնամքի բացակայությունը վտանգ է սպառնում հիվանդի կյանքին ու առողջությանը, և յեթե այդ դեպքում հնարավոր չէ հիվանդին հիվանդանոցում տեղավորել, իսկ ընտանիքում ել չկա մի ուրիշ ընտանիքի անդամ, վորը կարողանա խնամել հիվանդին։

Մինչև 2 տարեկան յերեխան հիվանդանալու դեպքում,— արտելի անդամ մայրը,— վերոհիշյալ բոլոր պայմաններում նպաստ է ստանում, անկախ նրանից, թե ընտանիքում կա մի ուրիշ ընտանիքի անդամ, վորը կարողանա խնամել հիվանդ յերեխային թե վոչ։

§ 1. Հիվանդին խնամելու համար ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ տալիս, տնային ծառայողն ընտանիքի անդամ չի համարվում։

§ 2. Խնամելու համար հիվանդանոցային թերթիկ տրվում է մինչև հիվանդին հիվանդանոցում տեղավորելը միայն։ Սակայն, յեթե հիվանդ յերեխայի հետ միասին հիվանդանոցում տեղավորել են նաև առողջ մորը,— նա պետք է հիվանդանոցում գտնվելու ժամանակամիջոցի համար հիվանդանոցային թերթիկով արձակուրդ ստանա ընդհանուր հիմունքներով,— պայմանով, յեթե բժշկի յեզրակացությամբ՝ մոր հիվանդանոցում մնալն անպայման անհրաժեշտ է։

§ 3. Ընտանիքի հիվանդ անդամին խնամելու համար հիվանդանոցային թերթիկ տրվում է յերեք որից վոչ ավելի ժամկետով։ Այդ ժամկետի յերկարացումը կատարվում է առանձին բացառիկ դեպքերում միայն (հիվանդության ծանրության և կենցաղային շրջակացության կապակցությամբ) բուժող բժշկի կողմից՝ գլխավոր բժշկի հետ միասին և այն ել միայն սահմանափակ ժամկետով

(ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1937 թ. ոգոստոսի 14-ին հաստատված՝ ՀԱՄԿԽ-ի և ԽՍՀՄ Առժողկոմատի 1937 թ, հուլիսի 31-ի հրահանգի 21-րդ հոդվածը)։

§ 4. Հիվանդանոցային թերթիկներ տալը չի թույլատրվում՝

ա) խրոնիկ հիվանդներին խնամելու համար.

բ) այն հիվանդին խնամելու համար, վորին հիվանդանոցում տեղ է հատկացվում, բայց ինքը (կամ նրա ընտանիքը) հրաժարվում է հիվանդանոցում տեղավորվելուց.

գ) առողջ յերեխաներին խնամելու համար, որինակ՝ մոր հիվանդության, մսուրի, մանկապարտեզի, տվյալ յերեխայի վրա կարանտին դնելու և այլ դեպքերում։ Նշված դեպքերում յերեխային խնամող ընտանիքի անդամին տեղեկանք է տրվում մոր հիվանդության կամ կարանտինի մասին, վորպես արդարացուցիչ փաստաթուղթ՝ հարգելի պատճառով աշխատանքի դուրս չգալու մասին.

դ) առողջ յերեխաներին խնամելու համար,— մորը ծննդատնում կամ հիվանդանոցում տեղավորելու դեպքում.

ե) տանն աշխատող արտելի անդամներին,— բոլոր դեպքերում և

զ) հիվանդի հետ միասին չապրող արտելի անդամներին,— բոլոր դեպքերում։

3. ԿԱՐԱՆՏԻՆ

10. Կարանտինի դեպքում նպաստ տրվում է, յեթե արտելի անդամը, նրան շրջապատող անձանց վարակիչ հիվանդության հետեվանքով, սանիտարական հսկողության մարմինների կողմից հեռացված է աշխատանքից, իսկ տանն աշխատողը՝ յեթե նրան արգելված է յեղել աշխատելը և նա, դրա կապակցությամբ ել, իսկապես չի աշխատել։

§ 1. Յեթե բժիշկը հիվանդի մոտ վարակիչ հիվանդություն է դտնում,— նա այդ մասին պարտավոր է անմիջապես հայտնել սանիտարական հսկողության մարմիններին, հիվանդի բնակարա-

նում ախտահանում կատարելու համար։ Հիվանդը պետք է տեղավորվի հիվանդանոցում։ Այդ նույն ժամանակ վարակը տարածելուց խուսափելու համար, վորոշ դեպքերում, հիվանդացածի ընտանիքի անդամներն ազատվում են աշխատանքից։

Կարանտինը կարող է տարածվել վոչ միայն հիվանդացածի ընտանիքի անդամների վրա, այլ նաև նույն բնակարանում կամ սենյակում ապրող այլ անձանց վրա։

§ 2. Վարակիչ հիվանդների և նրանց հետ շփվողների մեկուսացման ժամկետները նախատեսված են ԽՍՀՄ Առժողկոմատի Գիտական բժշկական խորհրդի 1938 թ. ապրիլի 4-ի վորոշմամբ և հաստատված են ԽՍՀՄ Առժողկոմատի կողմից 1938 թ. ապրիլի 20-ին։

Կարանտինի ժամկետները տարբեր են, նայած հիվանդությունից, հիվանդի հետ շփման աստիճանից և նրանից, թե վո՞ր տեղ և վորպես ո՞վ է աշխատում հեռացվողը (հացի փռում, ճաշարանում, հրուշակային արտադրությունում և այլն)։

§ 3. Տանն աշխատող արտելների անդամներին կարանտինի հետեվանքով արձակուրդ տրվում է միայն այն դեպքում, յերբ նրանց կարանտինի նպատակներով արգելվում է իրենց աշխատանքը շարունակել։ Այդ դեպքում, տանն աշխատողներին նպաստ տրվում է միայն այն ժամանակ, յերբ աշխատանքից հեռացման ընթացքում նրանք փաստորեն չեն աշխատել։ Ամբուլատորիայի բժշկի կողմից (կամ տանը բուժողությունն ցույց տվող բժշկի կողմից) բոլոր աշխատանքից ազատվածներին հիվանդանոցային թերթիկ է տրվում։ Աշխատանքից ազատումը կատարվում է սանիտարական հսկողության կողմից կարանտինի համար սահմանված ժամկետով։

4. ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈԽԱԴՐՈՒՄ

11. Յեթե արտելի անդամը (բացառությամբ տանն աշխատողներից) հիվանդության հետեվանքով չի կարող իր սովորական աշխատանքը կատարել, բայց կարող է առանց առողջությանը վնասելու և առանց բուժման նորմալ ընթացքը խախտելու այլ աշխատանք կատարել,— նա փոխադրվում է այդ աշխատանքին։

§ 1. Կանոնադրության սույն հոդվածի իմաստով այլ (թեթև) աշխատանքի փոխադրելու տակ պետք է հասկանալ միայն կանոնադրության 12-րդ հոդվածի կարգով կատարվելիք փոխադրությունները— տալով հիվանդանոցային թերթիկ։ Ամեն տեսակի այլ փոխադրումներ մի ուրիշ, ավելի թեթև աշխատանքի,— բժշկի խորհրդով, բայց առանց հիվանդանոցային թերթիկ տալու կամ հաշմության կապակցությամբ և այլն,— Կանոնադրության 11—15 հոդվածների կարգով իրավունք չեն տալիս ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու։ Ուրիշ զուտ պրոֆիլակտիկ բնույթ կրող, ավելի թեթև կամ քիչ վնասակար աշխատանքի նման փոխադրումների (նաև անցումների) ժամանակ, արտելի անդամը հիվանդանոցային թերթիկով ի հաշիվ փոխադարձ ապահովագրության միջոցների՝ վոչ մի հավելավճար իր աշխատավարձին չի ստանում։

Ուրինակ. Արտելի աշխատունակ անդամը, թույլ թոքերով, զբաղված է փոշոտ աշխատանքի մեջ։ Բժշկի խորհրդով նա անցնում է այլ աշխատանքի նույն արտելում։ Վորպես աշխատունակ նա հիվանդանոցային թերթիկ չի ստանում, հետեվապես նրան վոչ մի նպաստ չի էլ հասնում։ Նման դեպքում, յեթե բժիշկը նրան հիվանդանոցային թերթիկ տա էլ,— նման թերթիկի տալը կլինի անորինական։

§ 2. Տանն աշխատող արտելների անդամներին հիվանդանոցային թերթիկով այլ (թեթև) աշխատանքի փոխադրումներ չեն անցկացվում, այդ միջոցառման կիրառումը տանն աշխատողների նկատմամբ փաստորեն հնարավոր չլինելու պատճառով։ Յեթե տանն աշխատողին բժիշկը հիվանդանոցային թերթիկ է տալիս՝ փոխադրելով թեթև աշխատանքի, արտելի անդամը պետք է արձակուրդի ժամանակի համար ժամանակավոր անաշխատունակության սովորական նպաստ ստանա՝ ընդհանուր հիմունքներով։

12. Այլ աշխատանքի փոխադրելու անհրաժեշտությունը, այդ աշխատանքի բնույթը և այնտեղ գտնվելու տեվողությունը սահմանվում է բուժող

բժշկի կողմից, ըստ վորի, 10 որից ավելի ժամկետով փոխադրելու դեպքում— գլխավոր բժշկի հաստատմամբ, իսկ մեկ ամսից ավելի ժամկետից— բժշկական-աշխատանքային եքսպերտ հանձնաժողովի (ԲԱԵՀ-ի) կողմից։ Փոխադրումն իրացվում է արտելի վարչության կողմից— ԱՊԿԲԲ-ի հետ համաձայնեցված։

Յեթե արտելի անդամը համաձայն չե այլ աշխատանքի փոխադրվելու մասին բուժող բժշկի յեզրակացության հետ,— նա կարող է բողոքարկել բժշկական կոնսուլտացիային կամ բժշկական աշխատանքային եքսպերտ հանձնաժողովին։Յեթե կոնսուլտացիան կամ հանձնաժողովը նրա բողոքը գտնում են անհիմն,— պրոգուլի որերի համար վոչինչ չի վճարվում։

Արտելների անդամների կողմից բժշկական կոնսուլտացիային կամ բժշկական-աշխատանքային եքսպերտ հանձնաժողովին տրված բողոքները պետք է քննության յենթարկվեն ամեն տեսակի հերթերից դուրս։

§ 1. Որինակ՝ արտելի անդամ չարխագործ Վասիլեվը փոխադրվել է այլ (թեթեվ) աշխատանքի 10 որվա ժամկետով և նրան տրվել է հիվանդանոցային թերթիկ, Վասիլեվը թեթև աշխատանքի փոխադրման հետ չի համաձայնվել և բուժող բժշկի վորոշումը բողոքարկել է ԲԱԵՀ-ին, վորը հաստատել է բժշկի կողմից կատարված փոխադրումը։ Բողոքարկման համար Վասիլեվը կորցրել է 2 բանվորական որ։ Այդ որերի համար նա չի ստանում վո՛չ աշխատավարձ և վո՛չ էլ նպաստ։

§ 2. Արտելի անդամն այլ (թեթեվ) աշխատանքի փոխադրվելուց հրաժարվելու դեպքում, այդ ժամանակամիջոցի համար հիվանդանոցային թերթիկով ժամանակավոր անաշխատունակության նպաստ չի վճարվում, բայց պրոդուլ էլ չի հաշվվում։

13. Յեթե հնարավոր չլինի անաշխատունակության թերթիկում նշված ժամկետին աշխատանք տալ, —դրա հետևանքով բաց թողած որերի համար նպաստ տրվում է ընդհանուր հիմունքներով։

§ 1. Յեթե բժշկի կողմից հիվանդանոցային թերթիկով այլ (թեթեվ) աշխատանքի փոխադրված արտելի անդամին այդ աշխատանքը տրամադրվում է ուշացումով, այսինքն, յեթե նա, որինակ, 10 բանվորական որից, վոր նա փոխադրված է յեղել թեթեվ աշխատանքի, աշխատել է միայն 6 որ, իսկ 4 որ նրան աշխատանք չի տրամադրվել,— 4 որվա համար պետք է նպաստ տրվի ընդհանուր կարգով լրիվ, իսկ 6 որվա համար՝ համաձայն կանոնադրության 14-րդ հոդվածի։

§ 2. Արտելի ժամանակավոր անաշխատունակ անդամին, համաձայն բժշկի կողմից հիվանդանոցային թերթիկի վրա արված նշումների, այլ (թեթեվ) աշխատանք չտրամադրելու համար, ինքը վոչ մի պատասխանատվություն չի կրում և այդ որերի համար նրան հասանելիք ժամանակավոր անաշխատունակության նպաստը պետք է տրվի լրիվ չափով։

14. Այլ աշխատանքի փոխադրվելու դեպքում (հոդ. հոդ. 11—12) ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում է այն չափով, վորպեսզի նոր աշխատանքի աշխատավարձի հետ միասին չգերազանցի ըստ աշխատանքի ստաժի հաշված նպաստի չափից (հոդ. հոդ. 21—23)։

Այդ կարգը չի կիրառվում, յերբ այլ աշխատանքի փոխադրումը տեղի յե ունեցել հղիության կապակցությամբ։ Այդ դեպքում, աշխատավարձի պահպանումն ընկնում է արտելի վարչության վրա՝ ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1936 թ. հունիսի 27-ի «Աբորտների արգելման, նորածինների նյութական ոգնության, բազմանդամների պետական ոգնության սահմանման, ծննդատների ցանցի լայնացման, ալիմենտը չվճարելու համար քրեական պատիժն ուժեղացնելու և ամուսնալուծության որենսդրության մեջ մի շարք փոփոխությունների մասին» (ԽՍՀՄ Որ. Ժող. 1936 թ., հոդ. 309) վորոշման համաձայն։

§ 1. Այլ (թեթեվ) աշխատանքում աշխատավարձի հաշվումը, վճարման յենթակա նպաստի հասանելիք դումարը հաշվելիս,

պետք է կատարվի վոչ թե յուրաքանչյուր որվա համար առանձին, այլ հաշվարկման շրջանի կամ թեթև աշխատանքի փոխադրման վողջ ժամկետի համար միագումարով։

Որինակ 1. Արտելի անդամ Բրյանսկին փոխադրված է յեղել թեթև աշխատանքի, տալով 20 բանվորական որվա հիվանդանոցային թերթիկ։ Դրանից նա 10 բանվորական որ աշխատել է, իսկ մնացած ժամանակի համար նրան աշխատանք տրված չի յեղել։ Բրյանսկուն ժամանակավոր անաշխատունակության նպաստ պետք է հաշվել հետևյալ ձևով. Բրյանսկու միջին որական աշխատավարձը հավասար է 20 ռուբլու։ Նպաստ նրան հասնում է 100%-ի չափով։ Թեթև աշխատանքում, 10 բանվորական որվա համար, նա միջին հաշվով որական աշխատել է 8 ռուբլի։ 10 որվա համար, վորի ընթացքում արտելի կողմից նրան թեթև աշխատանք չի տրվել, նա կստանա 200 ռուբլի նպաստ, իսկ թեթև աշխատանքում գտնվելու 10 որվա համար նպաստ պետք է տրվի 120 ռուբլի (200—80=120). Բրյանսկուն ընդամենը նպաստ հասնում է 320 ռուբլի։

Որինակ 2. Յեթե Բրյանսկին տվյալ արտելում ըստ իր անընդհատ ստաժի տևողության իրավունք ունենար նպաստի վոչ թե 100%-ի չափով, այլ միայն 50%, այսինքն, որական 10 ռուբլի,— նպաստ նրան կհաշվվեր հետևյալ չափերով. այն 10 որվա համար, վորը չի աշխատել,— նա կստանա 100 ռուբլի (10×10=100), իսկ թեթև աշխատանքում յեղած 10 որվա համար Բրյանսկին արդեն կստանա վոչ թե 120 ռուբլի, այլ միայն 20 ռուբլի նպաստ, վորովհետև հավելավճարը թեթև աշխատանքի աշխատավարձի հետ միասին չի կարող բարձր լինել այն նպաստից, վորը Բրյանսկին կստանար, յեթե նա չաշխատեր (10—8=2, 2ռ.×10=20ռ.)։ Այսպիսով նա պետք է արդեն ստանա վոչ թե 320 ռուբլի, այլ 120 ռուբլի։

Որինակ 3. Կիրյակովը փոխադրվել է թեթև աշխատանքի 4 բանվորական որով։ Կիրյակովի միջին աշխատավարձը հավասար է որական 10 ռուբլու։ Ըստ անընդհատ ստաժի տևողության, նպաստ նրան հասնում է 50% կամ որական 5 ռուբլի։ Թեթև աշխատանքում Կիրյակովը 4 որում աշխատել է 32 ռուբլի կամ որական 8 ռուբլի։ Հիվանդանոցային թերթիկով նրան նպաստ չի հասնում, վորովհետև Կիրյակովի աշխատավարձը թեթև աշխատանքում բարձր է նրան հասանելիք նպաստից։

§ 2. Հղիության զապակցությամբ կնոջ փոխադրումը թեթև

աշխատանքի, կատարվում է հղիների կոնսուլտացիաների կողմից (իսկ դրանց բացակայության դեպքում— ընդհանուր ամբուլատորիաների), առանց հիվանդանոցային թերթիկ տալու՝ պահպանելով նրանց վերջին 6 ամսվա միջին ամսական աշխատավարձը— արտելի հաշվին։

5. ԿՐՃԱՏ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐՎԱ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

15. Յեթե արտելի անդամը (բացառությամբ տանն աշխատողներից) հիվանդանալու հետևանքով չի կարողանում լրիվ բանվորական որվա ընթացքում կատարել իր աշխատանքը և փոխադրվում է կրճատ բանվորական որվա (12-րդ հոդվածում նախատեսնված կարգով),— անաշխատունակության այդ ժամանակամիջոցի համար նպաստը, յերբ կրճատ բանվորական որվա աշխատավարձը ցածր է նախկին աշխատավարձից, տրվում է այդ աշխատանքում յեղած ամբողջ ժամանակամիջոցի համար՝ 14-րդ հոդվածով սահմանված կարգով։

§ 1. Տես 14-րդ հոդվածի մեկնաբանումները։

III. ՆՊԱՍՏ ՎՃԱՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

16. Նպաստ տրվում է աշխատունակության կորուստի առաջին որից սկսած,— հաշվի առնելով աշխատանքը փաստորեն դադարեցնելու որը,— մինչև աշխատունակության վերականգնումը կամ բժշկական աշխատանքային եքսպերտ հանձնաժողովի (ԲԱԵՀ) կողմից հաշմության սահմանումը։

§ 1. Հաճախ և յերկարատև հիվանդացող ապահովագրվածներին գլխավոր բժիշկը պետք է բժիշկներ ամրացնի, հայտնելով այդ մասին ֆաբգործտեղկոմին[1]). ապահովագրվածին բժիշկ ամրացնելու մասին ֆաբգործտեղկոմը պետք է գրավոր հայտնի

1) Արհեստագործական կոոպերացիայում ԱՊԿԲԲ-ին կամ արհապզանձարկղին։

ապահովագրվածին,— նախազգուշացնելով, վոր ուրիշ բժիշկների կողմից տրված հիվանդանոցային թերթիկները չեն վճարվի (բացի բացառիկ դեպքերից՝ ֆաբգործտեղկոմների հատուկ վորոշմամբ)։

Յեթե ապահովագրվածի մի վորևիցե հիվանդությունը չի վերաբերվում այն բժշկի մասնագիտությանը, վորին նա կցված է,— կոնսուլտացիայի համար պետք է հրավիրվի համապատասխան մասնագետ։ Այդ ժամանակ, հիվանդանոցային թերթիկը տրվում է յերկու բժշկի կողմից միասին, իսկ 10 որից ավելի, այդ թերթիկի յերկարացումը կատարվում է ընդհանուր կարգով (1937 թ. ոգոստոսի 14-ին ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից հաստատված ՀԱՄԿԽ-ի և ԽՍՀՄ Առժողկոմատի 1937 թ. հուլիսի 31-ի հրահանգի հոդ. 8—9 և 17)։

§ 2. Յեթե ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու տևողությունը վոչ մի ժամկետով չի սահմանափակված,— հարց է ծագում՝ ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու որից ի՞նչ ժամկետ անցնելուց հետո կարելի յե հարց դնել հիվանդացածի հաշմության առկայության մասին։

Արհապգանձարկղները, ԱՊԿԲԲ-ները և բուժող բժիշկները,— յեթե արտելի անդամն աշխատունակության կորուստի կայուն նշաններ ունի, կարող են ցանկացած ժամանակ, անկախ հիվանդության տևողությունից, հարց դնել հաշմության առկայության մասին և հիվանդին ուղարկել ԲԱԵՀ-ին (բժշկական աշխատանքային եքսպերտ հանձնաժողովին), հաշմության խումբը վորոշելու համար։

Ժամանակավոր անաշխատունակության նպաստի վճարումը դադարեցվում է արտելի անդամին հաշմանդամ ճանաչելու որից։

§ 3. Հաշմանդամների շարքին պետք է դասել միայն նրանց, վորոնց հիվանդության նշաններն ընդունել են կայուն, մշտական բնույթ և այն ել բուժման զանազան միջոցառումների կիրառումն անարդյունք լինելուց հետո միայն։ Չի թույլատրվում ժամանակից շուտ հաշմության հետևանքով կենսաթոշակի փոխադրումն այն անձանց, վորոնց անաշխատունակությունը դեռ կարող է վերականգնել (ժամանակավոր հաշմություն, տես ԽՍՀՄ

Աշխժողկոմատի 1929 թ. հոկտեմբերի 8-ի շրջաբերականը, ԽՍՀՄ Աշխժողկոմատի 1929 թ. № 45—46 տեղեկատու)։

§ 4. Յեթե ժամանակավոր անաշխատունակության ընթացքում լուծարքի յե յենթարկվում այն ագտելը, վորի անդամն է հանդիսացել հիվանդը, ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նրան նպաստը պետք է տրվի մինչև առողջանալը կամ մինչև հաշմության փոխադրելը։

§ 5. Արտելի անդամը հիվանդանոցային թերթիկի վրա գտնվելու ընթացքում, յեթե այն արտելի ձեռնարկությունը, վորում աշխատել է ժամանակավոր անաշխատունակը, հանձնվում է պետական արդյունաբերությանը,— ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում է մինչև նրա աշխատունակության վերականգնումը կամ հաշմության փոխադրումը փոխադարձ ապահովագրության կարգով, վորովհետև հիվանդանալու մոմենտին նպաստ ստացողը արտելի անդամ է յեղել։

17. Սեզոնային աշխատանքներում զբաղվածների նկատմամբ կիրառվում են հետևյալ կանոնները.

ա) յեթե անաշխատունակությունն առաջացել է պրոֆեսիոնալ հիվանդության կամ աշխատանքային խեղանդամության հետևանքով,— նպաստ տրվում է ընդհանուր հիմունքներով, մինչև անաշխատունակության վերականգնումը կամ հաշմության սահմանումը։ Պրոֆեսիոնալ հիվանդության կամ աշխատանքային խեղանդամության առկայությունը վորոշվում է նույն կանոններով,— ինչպես և հաշմության հետևանքով կենսաթոշակ նշանակելիս (1939 թ. հունիսի 28-ին Համարհկոոպգանձխորհրդի նախագահության կողմից հաստատված կենսաթոշակների մասին կանոնադրության 14 և 15-րդ հոդվածները, Համարհկոոպգանձխորհրդի 1939 թ. № 13 բյուլետենը).

բ) Յեթե անաշխատունակությունն առաջացել է այլ պատճառների հետևանքով,— նպաստ, վորպես ընդհանուր կանոն, տրվում է վոչ ավելի, քան մինչև այն աշխատանքի սեզոնի վերջանալը, վորտեղ

Гос. Публичная Библиотека в Ленинграде

արտելի անդամը մինչև աշխատունակության առաջանալն զբաղված է յեղել։ Սակայն այդ դեպքում, նրա՝ պատը չի կարող 75 որոցուցային որից ավելի տրվել։

Սեզոնային աշխատանքների ցուցակները,— նրանցում այդ աշխատանքների տեղությունը,— հրատարակվում են հանրապետական, մարզային (յերկրային) արհապգանձարկղների (գանձարկղների միության) կողմից՝ համաձայնեցնելով արհխորհուրդների (արհեստագործական միությունների) հետ։

§ 1. Սեզոնային աշխատանքների ցուցակները կազմելիս պետք է յելնել հետևյալ հիմունքներից.

ա) սեզոնային կարող են համարվել այն աշխատանքները, վորոնք կլիմայական և այլ պայմանների կապակցությամբ չեն կարող կլոր տարին կատարվել,— այլ կատարվում են վորոշ ժամկետների, բայց, վորպես կանոն, տարվա ընթացքում վեց ամսից վոչ ավելի.

բ) արտելի մշտական կազմի անձանց չի կարելի սեզոնային աշխատավորներ համարել (թեկուզ նրանք զբաղված ել լինեն սեզոնային աշխատանքում), այլ նաև սեզոնային աշխատանքներում վեց ամսից ավելի աշխատած արտելի անդամներին (որինակ՝ ձմեռային սեզոնային աշխատանքը վերջանալուց հետո— ամառային, նույնպես սեզոնային, աշխատանքին անցնողներին).

գ) սեզոնայինների համար սահմանված սահմանափակումները չեն կարող տարածվել այն արտելների անդամների վրա, վորոնք ըստ իրենց պրոֆեսիայի կարող են կլոր տարին աշխատել, բայց վորոնց աշխատանքը ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու մոմենտին յեղել է սեզոնային,— որինակ, վառարան վառողներ, ջուր վաճառողներ և այլն, այլ նաև շինարարական աշխատանքներում։

Որինակ.— Արտելի անդամ Սոլովեվն զբաղված է արհապգանձարկղի կողմից հրատարակված սեզոնային աշխատանքների ցուցակում նշված աշխատանքում։ Սոլովեվը աշխատանքային խեղանդամության հետևանքով, ոգոստոսի 1-ից՝ 4 ամիս ժամկետով անաշխատունակ է յեղել։ Նպաստ նա կստանա ընդհանուր կարգով, ժամանակավոր անաշխատունակության ամբողջ ժամանակամիջոցի ընթացքում։ Յեթե Սոլովեվը հիվանդանոցային թերթիկով արձակուրդ ստանար ընդհանուր հիվանդության հետևանքով (որինակ՝— գրիպպ),— նա նպաստ կստանար միայն մինչև սեզոնի վերջը (սահմանված տվյալ աշխատանքի համար— առ 1-ն սեպտեմբերի), այսինքն մեկ ամսվա ընթացքում։ Սոլովեվը սեզոնի սկզբին հիվանդանալու դեպքում,— որինակ՝ մայիսի 15-ից (սեզոնի սկիզբը մայիսի 10-ից լինելիս),— նպաստ կստանար վոչ թե 4 ամսվա համար, այլ միայն 75 որացուցային որվա համար (այսինքն առ 29 հուլիսի), չնայած նրան, վոր սեզոնը վերջանում է սեպտեմբերի 1-ին։

§ 2. Դժբախտ պատահարը համարվում է տեղի ունեցած աշխատանքի կապակցությամբ (աշխատանքային խեղանդամություն), յեթե նա տեղի յե ունեցել հետևյալ պայմաններից մեկն ու մեկի դեպքում.

ա) արտելի ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունները կատարելիս,— այլ նաև արտելի վարչության կամ նրա կողմից լիազորված անձանց առանձին հանձնարարությունները կատարելիս (նույն թվում գործուղման ժամանակ պաշտոնական պարտականությունները կատարելիս).

բ) թեկուզ և առանց արտելի վարչության կամ նրա կողմից լիազորված անձանց հանձնարարության, բայց արտելի շահերի համար գործողությունները կատարելիս.

գ) այն արտելի հետ կապված հասարակական աշխատանքները կատարելու կապակցությամբ, վորտեղ աշխատում է արտելի անդամը, այլ նաև խորհրդային, կուսակցական, կոոպերատիվ կամ պրոֆեսիոնալ կազմակերպությունների հատուկ հանձնարարությունները կատարելու կապակցությամբ, թեկուզ և այդ հանձնարարությունները կապված ել չլինեն տվյալ արտելի հետ, այլ նաև խորհրդային քաղաքացու պարտականությունները կատարելու կապակցությամբ.

դ) արտելի տերիտորիայում կամ աշխատանքի այլ վայրում բանվորական ժամերի ընթացքում, ներառյալ սահմանված ընդմիջումները, այլ նաև, աշխատանքի սկզբին կամ աշխատանքը վերջանալուց հետո, արտադրության գործիքները, հագուստը և այլն կարգի բերելու համար անհրաժեշտ ժամանակամիջոցում.

ե) աշխատանքի գնալու և աշխատանքից վերադառնալու ժամանակ.

զ) որենքով նախատեսված պարտադիր զինվորական ծառայության հավաքներն անցնելու կապակցությամբ կամ Պաշտպանության ժողովրդական կոմիսարիատի կողմից անցկացվելիք պարապմունքների կապակցությամբ։ Տանն աշխատող արտելների անդամների համար դժբախտ պատահարը համարվում է տեղի ունեցած աշխատանքի կապակցությամբ միայն այն ժամանակ, երբ այդպիսին տեղի չէ ունեցել «գ» և «զ» կետերում նշված պայմաններում և արտելից տուն՝ հոմքը և տնից հանձնելու վայրը՝ արտադրանքն ուղեկցելու ժամանակ (Համարհկոոպգանձխորհրդի կողմից 1939 թ. հունիսի 28-ին հաստատված «Կենսաթոշակների մասին Կանոնադրության» 14-րդ հոդված)։

§ 3. «Պրոֆեսիոնալ հիվանդություններ համարվում են սույն Կանոնադրությանը կցված ցուցակում նշված հիվանդությունները» (Համարհկոոպգանձխորհրդի կողմից 1939 թ. հունիսի 28-ին հաստատված «Կենսաթոշակների մասին Կանոնադրության» 15-րդ հոդվածը։ Հիվանդությունների ցուցակը մեր կողմից չի կցվում)։

18. Վարպետ արտելների անդամներ աշխատող 3-րդ խմբի հաշմանդամներին (ինչպես թոշակառուներին, այնպես էլ կենսաթոշակի իրավունք չունեցողներին) ընդհանուր հիվանդության հետևանքով նպաստ տրվում է անընդհատ 2 ամսից և որացուցային տարում 3 ամսից (1-ից հունվարի առ 31-ը դեկտեմբերի) վոչ ավելի։

Աշխատանքը շարունակող մնացած հաշմանդամներին (1-ին և 2-րդ խմբերի) ընդհանուր հիվանդությունների հետևանքով նպաստ տրվում է նշված կարգով, եթե հիվանդանոցային թերթիկը տրված չէ այն հիվանդությամբ, ըստ վորի սահմանված է նրա հաշմությունը։ Եթե աշխատող հաշմանդամի ժամանակավոր անաշխատունակությունը տեղի չէ ունեցել պրոֆեսիոնալ հիվանդությունից կամ աշխատանքային խեղանդամությունից,— նպաստ տրվում է մինչև առողջանալը կամ, նոր հիվանդության կապակցությամբ, հաշմության խմբի վերանայումը։

Այդ կարգը կիրառվում է նաև նեցուկի մահվան հետևանքով կենսաթոշակ ստացող ընտանիքի անդամների նկատմամբ։

§ 1. Կանոնադրության սույն հոդվածով սահմանված ժամանակավոր անաշխատունակության նպաստներ վճարելու սահմանափակումները չեն տարածվում արտելների այն անդամների վրա, վորոնք թեև կենսաթոշակ են ստանում (ծերության, երկարամյա ծառայության, նեցուկի մահվանից հետո— մինչև 8 տարեկան հասակի յերեխաների առկայության դեպքում և այլն), բայց հաշմանդամ չեն։

§ 2. Կանոնադրության 18-րդ հոդվածը տարածվում է հաշմանդամների վրա,— անկախ այն հանգամանքից, թե նրանք կենսաթոշակ ստանո՞ւմ են թե վոչ և ի՞նչ կազմակերպությունից (փոխադարձ ապահովագրության կարգով, պետական սոցիալական ապահովագրության կարգով և այլն)։

19. Հղիության և ծննդաբերության հետևանքով ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում է արտելների անդամ բոլոր կանանց— 35 որացուցային որ մինչև ծննդաբերությունը և 28 որացուցային որ ծննդաբերությունից հետո։

Եթե մինչ ծննդաբերության շրջանում արձակուրդի փաստացի տևողությունը (հաշված աշխատանքից ազատվելու որից մինչև ծննդյան որը) սահմանված ժամկետից ավելի կամ պակաս լինի,— նպաստ կտրվի փաստորեն արձակուրդում յեղած որերի համար։ Հետծննդաբերության շրջանը հաշվում են ծննդաբերության որից։

§ 1. Հղիության արձակուրդ տալիս՝ ժամկետը վորոշելու մեջ սխալներ են տեղի ունենում. արձակուրդ տրվում է մի քիչ ուշ կամ շուտ,— քան հասնում է (ստացվում է ավելի կամ պակաս ոգտագործած արձակուրդ)։ Եթե մինչև ծննդաբերության շրջա-

նի արձակուրդի փաստացի տևողությունը (հաշված աշխատանքից ազատվելու որվանից մինչև ծննդաբերության որը) յերեսուն հինգ որացուցային որից ավելի կամ պակաս լինի,— նպաստ տրվում է փաստորեն արձակուրդում յեղած որերի համար։ Այդ պատճառով ել նման դեպքերում, հետծննդաբերության շրջանի արձակուրդի ժամանակ նպաստ տրվում է որենքով սահմանված բոլոր որերի համար (28 որ), անկախ ավելի կամ պակաս ոգտագործելու տևողությունից։

Որինակ 1. Սամոյլովան ծննդաբերության շրջանում, արձակուրդում 35 որվա փոխարեն յեղել է 49 որ։ Ծննդաբերությունից հետո, չնայած մինչև ծննդաբերությունն զգալիորեն ավելի որեր (14 որ) ոգտագործելու առկայությանը, արձակուրդ պետք է ստանա ընդհանուր կարգով, այսինքն 28 որ։

Որինակ 2. Արտելի անդամ Վասիլեվայի ծննդաբերությունը տեղի յե ունեցել ժամկետից առաջ, վորի հետևանքով նա, մինչ ծննդաբերության շրջանը, 35 որվա փոխարեն, արձակուրդում գտնվել է միայն 20 որ։ Հետծննդաբերության արձակուրդ նա կստանա 28 որ, այսինքն՝ առանց հաշվի առնելու պակաս ոգտագործած որերը։

§ 2. Յեթե կինը, մինչ ծննդաբերության շրջանի արձակուրդի ժամկետն առաջանալու մոմենտը գտնվում է ժամանակավոր անաշխատունակության արձակուրդում (թեկուզ և հղիության կապակցությամբ),—յերբ նրա այդ արձակուրդը վերջանում է,— նա արձակուրդ ստանում է հիվանդանոցային թերթիկով հղիության հետևանքով։

§ 3. Հղիության և հետծննդաբերության շրջանի արձակուրդում գտնվող կինը հիվանդանալիս,— նրան ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ չի տրվում, վորովհետև նա արդեն համարվում է անաշխատունակ և գտնվում է արձակուրդում։ Սակայն, յեթե հետծննդաբերության շրջանի արձակուրդը վերջանալուց հետո ել հիվանդությունը շարունակվում է և կինն անաշխատունակ է լինում, նրան աշխատանքի դուրս գալու որվանից տրվում է նոր հիվանդանոցային թերթիկ՝ ընդհանուր պատճառների հետևանքով ժամանակավոր անաշխատունակության համար, վորը պետք է ընդունել վորպես անաշխատունակության նոր դեպք։

§ 4. Հղիության և ծննդաբերության դեպքում հիվանդանոցային թերթիկ տրվում է հղիների կոնսուլտացիայի կողմից, իսկ վորտեղ այդպիսին չկա,— ընդհանուր բուժհիմնարկների մանկաբարձ-գինեկոլոգների կողմից։ Նման մասնագետների բացակայության դեպքում,— հիվանդանոցային թերթիկը տրվում է ընդհանուր ընդունելությունը տանող բժշկի կողմից (ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1937 թ. ոգոստոսի 14-ին հաստատված ՀԱՄԿԽ-ի և ԽՍՀՄ Առժողկոմատի 1937 թ. հուլիսի 31-ի հրահանգի 18-րդ հոդվածը)։

§ 5. Անհրաժեշտ է ի նկատի ունենալ, վոր հղիության և ծննդաբերության արձակուրդը հաշվում են որացուցային որերով, իսկ նպաստն ըստ հիվանդանոցային թերթիկի, սովորաբար վճարվում է այդ արձակուրդի շրջանում յեղած բոլոր բանվորական որերի համար (աշխատանքի դուրս գալու որերն ըստ գրաֆիկի), վորը կազմում է՝ մինչ ծննդաբերության արձակուրդի համար մոտավորապես 30 և հետծննդաբերության արձակուրդի համար մոտավորապես 24 բանվորական որ։

> 20. Որենքով թույլատրված աբորտի կատարման և վիժման դեպքերում նպաստ տրվում է նույն ձևով, ինչպես և ընդհանուր հիվանդության դեպքում։ Յեթե բուժհիմնարկից դուրս կատարած աբորտը,— առաջացրել է յերկարատև հիվանդություն,— նպաստ տրվում է ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 14 ոգոստոսի 1937 թ. հաստատված ՀԱՄԿԽ-ի և ԽՍՀՄ Առժողկոմատի «Ապահովագրվածներին հիվանդանոցային թերթիկներ տալու մասին» հրահանգի 19-րդ հոդվածի 2-րդ ծանոթությամբ սահմանված կարգով (ԽՍՀՄ Որ. Ժող. 1937 թ. № 54, եջ 229)։

§ 1. «Աբորտի հետևանքով հիվանդանոցային թերթիկ տրվում է միայն այն դեպքում, յեթե աբորտը բժշկական ցուցումներով կատարված է հիվանդանոցում կամ ծնդատնում» (ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Կենտգործկոմի 1936 թ. հունիսի 27-ի վորոշման 1-ին հոդվածը, ԽՍՀՄ Որ. Ժող. № 34, եջ 309)։

Այս դեպքում հիվանդանոցային թերթիկ տրվում է աբորտ կատարող բժշկի կողմից՝ գլխավոր բժշկի հաստատմամբ,— վորի

ժամկետը վորոշվում է ապահովագրվածի առողջության դրության և պրոֆեսիայի կապակցությամբ։

Աբորտի մնացած դեպքերում (ներառյալ և վոչ լրիվ աբորտի դեպքերը— բուժհիմնարկից դուրս սկսած և բուժհիմնարկում վերջացրած), հիվանդանոցային թերթիկ չի տրվում։

Ծանոթություն 1. Ինքնաբերական աբորտի դեպքում (մինչև հղիության 196 որը լրանալը) հիվանդանոցային թերթիկ տրվում է նույնպես, ինչպես ընդհանուր հիվանդության դեպքում։

Ծանոթություն 2. Յեթե բուժհիմնարկից դուրս կատարած աբորտն առաջացրել է յերկարատև հիվանդություն,— առանձին դեպքերում, կարող է տրվել հիվանդանոցային թերթիկ՝ միայն ամեն անգամ ֆաբգործտեղկոմի կամ սոցիալական ապահովագրության խորհրդի1) վորոշմամբ և այն էլ միայն անաշխատունակության 11-րդ որից սկսած ժամանակամիջոցի համար (հաշվելով աբորտի որից), բայց հիվանդանոցային թերթիկի վրա բժշկի «վոչ որինական» նշանառումով, վորի մասին միաժամանակ հայտնվում է դատախազությանը (ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1937 թ. ոգոստոսի 14-ին հաստատված ՀԱՄԿԽ-ի և ԽՍՀՄ Առժողկոմատի 1937 թ. հուլիսի 31-ի հրահանգի 19-րդ հոդվածը)։

IV. ՆՊԱՍՏՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ

21. Ժամանակավոր անաշխատունակության նպաստ (չհաշվելով հղիության ու ծննդաբերության նպաստը) արտելների բոլոր անդամներին տրվում է հետևյալ չափերով՝ տվյալ արտելում աշխատանքի անընդհատ ստաժի կապակցությամբ.

Միևնույն արտելում աշխատանքի անընդհատ ստաժի դեպքում	Ընդհանուր արհեստանոցներում աշխատող արտելների բոլոր անդամներին	Տանն աշխատող արտելների անդամներին
6 տարուց ավելի	Աշխատավարձի 100%	Աշխ.վարձի 80%
3 » մինչև 6 տարի	» 80%	» 60%
2 » » 3 »	» 60%	» 40%
մինչև 2 »	» 50%	» 25%

1) Արհկոոպերացիայի գծով— ԱՊԿԲԲ-ի։

§ 1. Կանոնադրության սույն հոդվածը սահմանում է հիվանդության (աշխատանքային և կենցաղային խեղանդամություն, պրոֆեսիոնալ և ընդհանուր հիվանդություն), կարանտինի և ընտանիքի հիվանդ անդամին խնամելու հետևանքով ժամանակավոր անաշխատունակության նպաստների չափերը։ Նպաստի չափը կախված է աշխատանքի ստաժի անընդհատությունից տվյալ արտելում և նրանից, թե արտելի տվյալ անդամի աշխատանքն ընթացել է արտելի ընդհանուր արհեստանոցում թե տանը։ Կանոնադրության սույն հոդվածով ժամանակավոր անաշխատունակության նպաստների չափերը սահմանված են տվյալ արտելում աշխատանքի անընդհատ յերկարատև ստաժ ունեցող ազնիվ ու բարեխիղճ աշխատավորների առավելագույն սպասարկման նպատակով, և դրանով իսկ նպաստելու՝ աշխատանքային կարգապահության ամրացմանը արհեստագործական կոոպերացիայում և չվողների, լոդրերի ու գործալիքների դեմ պայքարին։ Ընդհանուր արհեստանոցներում աշխատողների համար նպաստների ավելի բարձր չափեր են սահմանված, քան տանն աշխատողների համար։

§ 2. Նպաստների ավելի բարձրացված չափեր են սահմանված ածխի հանույթի մեջ զբաղվածների (հոդ. 22), անչափահասների (հոդ. 23) և հղիության ու ծննդաբերության արձակուրդի ժամանակամիջոցի (հոդ. 26) համար։

§ 3. Նպաստի չափը վորոշող աշխատանքի անընդհատ ստաժը արտելում հաշվում են ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու որից։ Անաշխատունակության շրջանում ստաժի կուտակումը նպաստի չափն ավելացնելու իրավունք չի տալիս։

Որինակ. Լեոնտեվն արտելում աշխատում է 1933 թ. սեպտեմբերի 20-ից։ 1939 թ. սեպտեմբերի 4-ին նա հիվանդանոցային թերթիկով արձակուրդ է ստանում և համարվում է ժամանակավոր անաշխատունակ մինչև 1939 թ. նոյեմբերի 25-ը։ Լեոնտեվին ժամանակավոր անաշխատունակության նպաստ պետք է վճարվի աշխատավարձի 80%-ի չափով, վորովհետև արձակուրդ սկսվելու որը նրա անընդհատ ստաժը կազմում է 5 տարի 11 ½ ամիս։ Սեպտեմբերի 20-ից սկսած Լեոնտեվի աշխատանքի

6 տարին արտելում լրանալու որվանից) նպաստի ավելացումը մինչև 100% չի կարող թույլատրվել։

§ 4. Կիզահողա-մշակման (տորֆի) աշխատանքներում, քարհանքերում, անտառամթերման մեջ և այլն աշխատող արտելների անդամները ժամանակավոր անաշխատունակության նպաստներով ապահովվելիս հավասարեցվում են ընդհանուր արհեստանոցներում աշխատողներին։

§ 5. Արտելի ժամանակավոր անաշխատունակ անդամի ժամանակավոր տեղավորումը հիվանդանոցում, սանատորիայում և այլն,— պատճառ չի հանդիսանում նրան հասանելիք ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափի իջեցման։

§ 6. Այն դեպքերում, երբ ժամանակավոր անաշխատունակության արձակուրդի սկզբի մոմենտին արտելի անդամն ուղիղ երկու տարվա անընդհատ աշխատանքի ստաժ է ունենում արտելում,— նպաստ նրան պետք է նշանակվի 60%-ի չափով, եթե նա անընդհատ արհեստանոցում է աշխատում, և 40%՝ եթե նա տանն է աշխատում։ Նույն կարգով նպաստ պետք է նշանակվի նաև ուղիղ 3 և 6 տարի աշխատողներին։

Որինակ. Սիմոնյանն արտելում սկսել է աշխատել 1936 թ. հոկտեմբերի 17-ից և ամբողջ ժամանակ այնտեղ աշխատել է անընդհատ մինչև 16 հոկտեմբերի 1939 թ., իսկ հոկտեմբերի 17-ից Սիմոնյանը հիվանդացել և ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ է ստացել 13 որով։ Նպաստ նրան, վորպես մինչև անաշխատունակության առաջին որն ուղիղ 3 տարի աշխատող, պետք է տրվի 80%-ի չափով։

22. Ածխի հանույթում կամ շախտայի նախապատրաստական աշխատանքներում աշխատողներին ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում է, միևնույն շախտում երկու և ավելի տարվա աշխատանքի անընդհատ ստաժ ունենալու դեպքում— աշխատավարձի 100 տոկոսը, իսկ մինչև երկու տարին՝ աշխատավարձի 60 տոկոսը։

§ 1. Սույն հոդվածով նախատեսված նպաստների արտոնյալ չափերը տարածվում են վոչ միայն այն անձանց վրա, վորոնք անմիջականորեն զբաղված են ածխահանույթով (հանքապեղիչ,

ներհատիչ և այլն) և շախտի նախապատրաստական աշխատանքներում,— այլ նաև ածխի շախտերի բոլոր ստորերկրյա բանվորների վրա (ձիապահներ, ձի քշողներ և այլն)։

§ 2. Ածխի շախտաների դուրսն աշխատող անձանց, այլ նաև ուրիշ, թեկուզ և ստորերկրյա աշխատանքներում, բայց վոչ ածխի հանույթի գծով աշխատողների (հանքի հանույթի և այլն) վրա սույն հոդվածով նախատեսված արտոնությունները չեն տարածվում։

23. Մինչև 18 տարեկան անչափահասներին ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում է.

Միևնույն արտելում աշխատանքի անընդհատ ստաժի դեպքում	Ընդհանուր արհեստանոցում աշխատողներին	Տանն աշխատողներին
2 տարուց ավելի	Աշխատավարձի 80%	Աշխ-վար 60%
Մինչև 2 տարի	» 60%	» 40%

Նպաստների նույն նորմաները (80 և 60 տոկոս) տարածվում են մինչև 18 տարեկան անչափահասների՝ ֆաբգործուսի և պրոֆտեխնիկական դպրոցների աշակերտների վրա, բոլոր դեպքերում էլ, նրանց վրա պահպանելով թոշակը լրիվ չափով։

§ 1. Կանոնադրության սույն հոդվածով նպաստների բարձրացված չափերը սահմանված են այն անչափահասների համար, վորոնց ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է

մինչև 18 տարեկան հասակը։ Հասակը պետք է վորոշվի առ ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու որը։

Այդ պատճառով սխալ պետք է համարել առանձին գանձարկղների և ԱՊԿԲԲ-ների պրակտիկան, վորոնք ժամանակավոր անաշխատունակության շրջանում 18 տարին լրացած անչափահասներին—մինչև 18 տարին նպաստ վճարում են սույն հոդվածով սահմանված չափերով, իսկ 18 տարին լրանալուց հետո,—փոխում են նպաստի չափը— սահմանելով ըստ կանոնադրության 21-րդ հոդվածի։

Հիվանդացած անչափահասը մինչև 18 տարին լրանալը նպաստ պետք է ստանա ժամանակավոր անաշխատունակության վողջ ժամանակամիջոցի համար՝ անչափահասների համար սահմանված չափերով։

Որինակ. Սիմոնյանը 17 տարի 11 ամիս հասակում հիվանդացել և գտնվել է ժամանակավոր անաշխատունակության արձակուրդում 3 ամիս։ Հիվանդության ամբողջ ժամանակամիջոցի համար նա նպաստ պետք է ստանա անչափահասների համար սահմանված նորմաներով, թեկուզ հիվանդության 3 ամսից յերկուսն անաշխատունակն անց է կացրել 18 տարին լրանալուց հետո։

§ 2. Փոխադարձ ապահովագրության մուծանքները յենթակա յեն վճարման վոչ միայն ֆաբրիկա-գործարանային դպրոցների աշակերտության աշխատավարձի դիմաց— տրված սովորելու ժամանակ արհեստանոցներում աշխատանքի համար, այլ նաև թոշակի դիմաց։

Այդ պատճառով կանոնադրության 23-րդ հոդվածով նախատեսված է, վոր աշակերտի ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու դեպքում, նրան արհապգանձարկղների կողմից նպաստ պետք է տրվի թոշակի և աշխատավարձի ընդհանուր գումարից,— հետևյալ կարգով.

ա) թոշակի 100 տոկոսի չափով,—անկախ սովորելու ստաժի տևողությունից։

բ) աշխատավարձի 60 կամ 80 տոկոսի չափով,—ստաժի կապակցությամբ։

Որինակ. Պետրովը ֆաբգործուսում սովորում է առաջին տարին։ Պետրովը 17 ու կես տարեկան է։ Ժամանակավոր անաշխատունակության նպաստը կկազմի թոշակի 100 տոկոսից

և աշխատավարձի 60 տոկոսից։ Այդ բոլոր նպաստը վճարվում է արհապգանձարկղի կողմից, իսկ արտելն աշակերտին վոչ մի վճարում չի կատարում։

24. Տանն աշխատող 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին, յեթե նրանք թոշակավորվելու ժամանակ դասված են յեղել 1-ին կամ 2-րդ խմբերին (կենսաթոշակների կանոնադրության 10-րդ հոդվածը),— նպաստ վճարվում է ընդհանուր արհեստանոցներում աշխատող արտելների անդամների համար սահմանված չափերով։

§ 1. Մինչև թոշակավորվելը տանն աշխատած 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների, այլ նաև 3-րդ խմբի բոլոր հաշմանդամների վրա (անկախ մինչև թոշակավորվելն աշխատանքի վայրից) սույն հոդվածով նախատեսված արտոնությունները չեն տարածվում, այսինքն՝ տանն աշխատելու դեպքում, նրանց ժամանակավոր անաշխատունակության նպաստ պետք է վճարվի տանն աշխատողների համար սահմանված չափերով։

§ 2. Սույն հոդվածով սահմանված արտոնությունները տարածվում են միայն այն հաշմանդամների վրա, վորոնք ապահովվում են փոխադարձ ապահովագրության և արհեստագործական կոոպերացիայի փոխոգնության գանձարկղների կողմից, և չեն կարող տարածվել պետական սոցիալական ապահովագրության և այլ կարգով ապահովվողների վրա (որինակ՝ զինվորական հաշմանդամներ)։

25. Վոչ հանրայնացված կենդանի լծկան ուժի (ձիեր, ուղտեր, եշեր և այլն) վրա աշխատող արտելների անդամներին ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում է տանն աշխատողների համար սահմանված չափերով։

§ 1. Իր ձին, ուղտը և այլն, արտադրության գործիքների հանրայնացման կարգով, արտելին հանձնած արտելի անդամը ժամանակավոր անաշխատունակության նպաստներով յենթակա յե ապահովվման ընդհանուր արհեստանոցներում աշխատողների

համար սահմանված չափերով, և այն դեպքում, երբ նա արտելի վարչության հանձնարարությամբ արտելին պատկանող կենդանուն պահում է իր գոմում։

26. Հղիության ու ծննդաբերության հետևանքով ժամանակավոր անաշխատունակության նպաստ բոլոր արտելների կին անդամներին (ընդհանուր արհեստանոցներում և տանն աշխատող) տրվում է հետևյալ չափերով՝ տվյալ արտելում աշխատանքի անընդհատ ստաժի կապակցությամբ.

3 տարուց ավելի	աշխ-վարձի	100 տոկոս
$1^1/_2$ » մինչև 3 տարի	»	80 »
1 » » $1^1/_2$	»	65 »
7 ամսից » 1 »	»	55 »

§ 1. Հղիության ու ծննդաբերության արձակուրդի ժամանակ նպաստ տրվում է ավելի բարձր չափերով, քան ժամանակավոր անաշխատունակության այլ դեպքերի ժամանակ, պահանջելով՝ ավելի պակաս անընդհատ աշխատանքի ստաժ տվյալ արտելում։

§ 2. Հղիության կապակցությամբ ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ ստացած կանայք (բայց վոչ հղիության ու ծննդաբերության արձակուրդ) նպաստներով ապահովվում են ընդհանուր կարգով և վոչ թե համաձայն սույն հոդվածի։

Որինակ. Տանն աշխատող (տնագործ) արտելի անդամ Պյատիգորսկայան 1939 թ. սեպտեմբերի 16-ից ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ է ստացել այն կապակցությամբ, վոր հղիության բարդությունների հետևանքով նա չի կարողացել աշխատել նույնիսկ թեթև աշխատանքում։ 1939 թ. նոյեմբերի 1-ին կոնսուլտացիայի բժիշկները Պյատիգորսկայային փոխադրել են հղիության արձակուրդի 35 որով՝ մինչև ծննդաբերությունը, տալով հիվանդանոցային նոր թերթիկ, վորը հետագայում, ծննդաբերության որից փոխվել է հետծննդաբերության արձակուրդի։ Սակայն, ծննդաբերությունից հետո, Պյատիգորսկայայի առողջության վերականգնումը ընթացել է վատ և 1940 թ. հունվարի 2-ին հետծննդաբերության արձակուրդը (28 որից հետո) լրանալուց հետո, նա չի կարողացել աշխատանքի դուրս գալ։ Կոնսուլտացիան նրան 1940 թ. հունվարի 3-ից տվել է հիվանդանոցային նոր թերթիկ՝ ընդհանուր հիվանդության հետևանքով ծննդաբերությունից հետո բարդություններ առաջանալու կապակցությամբ։

Պյատիգորսկայան արտելում, վորպես տան աշխատող (տնագործ) աշխատում է 1936 թ. հոկտեմբերի 24-ից։

Նպաստ նրան պետք է տրվի հետևյալ չափերով.

ա) մինչև մինչծննդաբերության արձակուրդի սկիզբը հիվանդության որերի համար— վորպես 2-ից մինչև 3 տարի տնագործ արտելականի ստաժ ունեցողի,— աշխատավարձի 40 տոկոսը.

բ) հղիության և ծննդաբերության արձակուրդի որերի համար, վորպես 3 տարուց ավելի ստաժ ունեցողի (հոկտեմբերի 24-ին լրացել է աշխատանքի 3 տարին),— աշխատավարձի 100 տոկոսը.

գ) հետծննդաբերության արձակուրդը լրանալուց հետո հիվանդության որերի համար, վորպես 3-ից մինչև 6 տարվա ստաժ ունեցողի,—աշխատավարձի 60 տոկոսը։

§ 3. Սույն հոդվածով նախատեսված չափերով հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակ նպաստ տրվում է միայն նպաստի իրավունք ունեցողներին, այսինքն՝ մինչև հղիության արձակուրդի սկիզբը, 7 ամսից վոչ պակաս աշխատողներին (տես հոդ. 4)։

27. Ժամանակավոր անաշխատունակության նպաստներ նշանակելիս (հոդ. հոդ. 4, 21, 22, 23, 26) աշխատանքի ստաժը համարվում է անընդհատ, եթե արտելի անդամը մի արհեստանոցից փոխադրվել է նույն արտելի մի ուրիշ արհեստանոց՝ արտելի վարչության վորոշմամբ կամ մի արտելից մի ուրիշ՝ արտելի ապախոշորացման և խոշորացման կապակցու-

թյամբ, կամ փոխադրված է արհեստագործական միության կողմից։

Անընդհատ ստաժը հաշվելիս բանվորների և ծառայողների աշխատանքի ժամանակամիջոցը հավասարեցվում է արհեստագործական կոոպերացիայի արտելի անդամի աշխատանքին, յեթե վարձու աշխատանքից արտելի անդամների կազմի մեջ փոխադրումը կատարվել է համապատասխան կազմակերպությունների հատուկ վորոշման համաձայն։

Ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու ժամանակամիջոցը ստաժ հաշվելիս,— հավասարեցվում է աշխատանքին։

§ 1. Տվյալ արտելում աշխատանքի անընդհատ ստաժի տեվողությունը հաշվելիս, նրա մեջ է մտցվում նաև վարձու աշխատանքի ժամանակամիջոցը նույն արտելում, վորն անմիջականորեն նախորդել է վորպես արտելի անդամ կամ թեկնածու աշխատանքին։

§ 2. Տվյալ արտելում վերջին աշխատանքին նախորդող աշխատանքը՝ դադարեցված լուծարքի, սեզոնը վերջանալու, հաստիքների կրճատման, անհամապատասխան լինելու և այլ պատճառների կապակցությամբ, չի մտցվում աշխատանքի անընդհատ ստաժի մեջ,— անկախ ընդմիջման տեվողությունից։

Կատարած հանցագործության, կանոնադրությունն ու աշխատանքային կարգապահությունը խախտելու և իր ցանկությամբ աշխատանքը թողնելու մասին,— տես Կանոնադրության 3-րդ հոդվածի մեկնաբանումները։

§ 3. Սեզոնը վերջանալու կապակցությամբ աշխատանքը թողած, թեկուզ և արտելի կազմից դուրս չեկած ու աշխատանքը վերսկսելուց հետո հիվանդացած,— արտելների անդամները ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանում են համաձայն վերջին աշխատանքի տեվողության։ Նախորդ սեզոնների աշխատանքը չի կարող անընդհատ ստաժի մեջ մտցվել։

§ 4. Համաձայն Կանոնադրության 3, 4, 51, 52 և 53 հոդվածների ժամանակավոր անաշխատունակության այն որերը, վորոնք յենթակա չեն նպաստով բավարարման,— չեն մտցվում անընդհատ ստաժի մեջ, բայց չեն էլ ընդհատում նրան։

28. ԲԳԿԲ շարքերում գտնվելու, փոխադարձ ու սոցիալական ապահովագրության կարգով կենսաթոշակ ստանալու, արտելի ներքին կարգապահական կանոններով նախատեսված առանց աշխատավարձի պահպանման արձակուրդի, այլ նաև առանց աշխատավարձի պահպանման պարապուրդի ժամանակամիջոցը, չեն խախտում աշխատանքի ստաժի ընթացքը, բայց և չեն էլ մտցվում ստաժի մեջ։

§ 1. Ուսումնական հաստատություններում սովորելու ժամանակամիջոցն ընդհատում է անընդհատ ստաժը, թեկուզ և արտելի անդամն աշխատանքը վերսկսի նույն արտելում։ Արտելների անդամների, արհեստագործական կոոպերացիայի սիստեմի կողմից կազմակերպված զանազան դասընթացներում գտնվելու ժամանակամիջոցը,— աշխատավարձը պահպանելու դեպքում (կամ այդ աշխատավարձը վորպես թոշակ վճարելու միջոցով),— վոչ միայն չի ընդհատում անընդհատ ստաժը, այլև մտցվում է նրա մեջ։

§ 2. Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի շարքերում գտնվելու ժամանակամիջոցը չի մտցվում անընդհատ ստաժի մեջ, բայց չի յել ընդհատում նրան, յեթե արտելի վերջին աշխատանքից հեռացումը տեղի յե ունեցել զինակոչի կապակցությամբ և յեթե զորացրվածն արտելում սկսել է աշխատել անմիջապես բանակից կամ նավատորմից հեռացվելուց հետո։ Այս դեպքում չի պահանջվում, վոր արտելի անդամը վերադառնա այն նույն արտելը, վորտեղ նա աշխատել է մինչև զինակոչը։ Այդ նույն հիմունքներով անընդհատ ստաժի մեջ է մտցվում և մինչ զինակոչն ունեցած վարձու աշխատանքը։

Այսպիսով, յեթե զորացրվածը մինչև զինակոչը յեղել է բանվոր կամ ծառայող, կամ արտելի անդամ,—նրա անընդհատ ստաժի մեջ պետք է մտցնել վոչ միայն նրա անընդհատ ստաժը բանակից հետո, այլև մինչև բանակը։

Որինակ 1. Վլասովան արտելում աշխատել է 1934 թ. մար-

տի 1-ից։ 1936 թ. հոկտեմբերի մեկին նա կանչվել է Կարմիր Բանակ և զորացրվելով 1938 թ. հոկտեմբերի 1-ին, վերադարձել է մի ուրիշ արտել։ 1939 թ. ոգոստոսի 15-ին Վլասովան հիվանդացել է։ Նպաստի չափը վորոշելու համար, Վլասովայի ստաժը պետք է հաշվել այսպես.

ա) 1934 թ. մարտի մեկից առ 1-ն հոկտեմբերի 1936 թ.—2 տարի 7 ամիս.

բ) 1938 թ. հոկտեմբերից առ 1-ն ոգոստոսի 1939 թ.— 10½ ամիս՝ ընդամենը 3 տարի 5 ամիս 15 որ։

Վորովհետև Վլասովայի աշխատանքի անընդհատ ստաժը գերազանցում է 3 տարուց և նա աշխատել է անընդհատ արհեստանոցում,— նպաստ պետք է տրվի աշխատավարձի 80 տոկոսի չափով։

Որինակ 2. Վասինն աշխատել է Յերևանի մեխանիկական գործարանում վորպես ճախարակագործ՝ 1935 թ. փետրվարից առ 1937 թ. սեպտեմբերը։ Այնուհետև նա կանչվել է Կարմիր Բանակ,— ուր ծառայել է մինչև 1939 թ. սեպտեմբերը։ Զորացրվելով, Վասինը մտնում է Յերևանի արհեստագործական արտելներից մեկը։ Յերկու որից հետո Վասինը հիվանդանում է։ Վասինը հիվանդանոցային թերթիկով նպաստ կստանա վորպես 2 տարուց ավել անընդհատ ստաժ ունեցող (2½ տարի մինչև բանակը վարձու և 2-որ ել բանակից հետո արտելում)։

§ 3. Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի շարքերը վարժության հավաքի կանչված արտելների անդամները պահպանում են իրենց աշխատանքի տեղն ու աշխատավարձի կեսը։ Դրա կապակցությամբ ել վարժությունների հավաքն անցնելու ժամանակամիջոցը մտցվում է անընդհատ ստաժի մեջ։ Յեթե արտելի անդամը, վարժության հավաքի ընթացքում, ժամանակավոր անաշխատունակ է յեղել,— նրան վճարվում է աշխատավարձի 50 տոկոսը ԲԳԿԲ ֆոնդի հաշվին (բայց վոչ ժամանակավոր անաշխատունակության նպաստ)։ Հավաքը վերջանալուց հետո ժամանակավոր անաշխատունակությունը շարունակվելու դեպքում,— նա նպաստ ստանում է հիվանդանոցային թերթիկով, ընդհանուր հիմունքներով։

§ 4. Սեզոնային պարապուրդի ժամանակամիջոցը,— ընդհատում է անընդհատ աշխատանքի ստաժն արտելում։

§ 5. Ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը վորոշելու համար, աշխատանքի անընդհատ ստաժի տեվողությունը տվյալ արտելում սահմանելիս,— ԱՊԿԲԲ-ները չպետք է սահմանափակվեն միայն աշխատանքի սկզբի որաթիվը սահմանելով, այլև պետք է պարզեն՝ թե աշխատանքի ընթացքում չե՞ն յեղել արդյոք այնպիսի ժամանակաշրջաններ, վորոնք չեն մտցրվում ստաժի մեջ և չեն ընդհատում նրան, այլ նաև ստաժի ընթացքն ընդհատող ժամանակաշրջաններ։

29. Արտելների բոլոր անդամների համար, բացառությամբ տանը և չհանրայնացված— կենդանի լծկան ուժի վրա աշխատողներից, նպաստի չափը չի սահմանափակվում մի վորևիցե առավելագույն չափով (մաքսիմումով)։

Տանը և չհանրայնացված կենդանի լծկան ուժի վրա աշխատող արտելների անդամների համար ժամանակավոր անաշխատունակության նպաստը չի կարող գերազանցել ամսական 300 ռուբլուց։ Այդ պատճառով, նրանց համար որական նպաստը չի կարող գերազանցել 300 ռուբլին՝ այն ամսվա բոլոր որացուցային (կամ բանվորական) որերի թվի վրա բաժանելուց ստացած գումարից, վորի ընթացքում նրանք անաշխատունակ են յեղել։ Հղիության ու ծննդաբերության հետեվանքով ժամանակավոր անաշխատունակության նպաստ վճարելիս,— առավելագույն չափը (մաքսիմում) չի կիրառվում։

§ 1. Ժամանակավոր անաշխատունակության նպաստը մաքսիմումով սահմանափակելիս,— սովորական կարգով հաշվում են փաստացի միջին աշխատավարձից, բայց հաշված նպաստի ընդհանուր գումարը չի կարող գերազանցել նպաստի սահմանված մաքսիմումից։

Որինակ 1. Տանն զբաղված արտելի անդամ Կլյուեվին նպաստ պետք է տրվի 16 որվա համար աշխատավարձի 80 տոկոսի չափով։ Կլյուեվին աշխատավարձը միջին հաշվով որական 12 ռուբլի յե։ 12 ռուբլու 80 տոկոսը կազմում է 9 ռ. 60 կ., վորը Քյալյանը կստանա լրիվ, վորովհետև այդպիսին ցածր է մաք-

սիմումից (300 ռ: 30=10 ռ. Կլյուեվին հիվանդացած ամսում յեղել է 30 որացուցային որ):

Որինակ 2. Յեթե Կլյուեվը դատած լիներ վոչ թե որական 12 ռուբլի, այլ 20 ռուբլի— դրա 80 տոկոսը կկազմի 16 ռուբլի: 30 որացուցային որ ունեցող ամսում նա 16 ռուբլու փոխարեն նըպաստ կստանա 10 ռուբլի (մաքսիմում), իսկ 31 որացուցային որ ունեցող ամսում— միայն 9 ռ. 68 կ. (300 ռուբ.: 31=9 ռ. 68 կ.):

Որինակ 3. Իր ձիերով սայլի տրանսպորտի արտելի անդամ Կաշիրսկին հիվանդանոցային թերթիկ է ստացել 4-ից առ 17-ն ապրիլի: Այդ ժամանակամիջոցում Կաշիրսկուն 2 հանգստի որ (կիրակի) ունի: Այսպիսով, Կաշիրսկին հիվանդության հետևանքով բաց է թողել 13 բանվորական որ: Կաշիրսկու աշխատավարձը, հաշված համաձայն սույն կանոնադրության 33 և 34 հոդվածների՝ հավասար է որական 16 ռուբլու:

Հիվանդանոցային թերթիկով Կաշիրսկուն, վորպես 4 տարի անընդհատ աշխատողի, նպաստ հասնում է 80 տոկոսի չափով կամ որական 12 ռ. 80 կ.: Բայց վորովհետև Կաշիրսկու նպաստի չափը սահմանափակվում է մաքսիմումով— ամսական 300 ռուբլի,— ապրիլի համար, վորի ընթացքում ունեցել է 25 բանվորական որ,— այդ կկազմի որական 12 ռ.: Կաշիրյանը նպաստ կստանա վոչ թե որական 12 ռ. 80 կ., այլ 12 ռուբլի: Յեթե Կաշիրսկին հիվանդացած լիներ փետրվարին, յերբ նա ունեցել է 24 բանվորական որ,— նպաստ կստանար որական 12 ռ. 50 կ. (300 ռ. : 24=12 ռ. 50 կ.) և այլն:

V. ՆՊԱՍՏԸ ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

30. Այն աշխատավարձի մեջ, վորից նպաստ են հաշվում, մտցվում են աշխատավարձի բոլոր տեսակները, վորից ապահովագրական մուծանքներ են հաշվում՝ բացի արտելի ներքին կարգապահական կանոններով սահմանված, բանվորական որից դուրս կատարած աշխատանքի համար վարձատրությունից, հերթական ու լրացուցիչ արձակուրդի և համատեղության համար վարձատրությունից, այլ նաև միանվագ բնույթ կրող ամեն տեսակի վճարումից:

Սակայն, յեթե յուրաքանչյուր առանձին ամիս աշխատած ժամերի ընդհանուր թիվը չի գերազանցում ներքին կարգապահական կանոններով սահմանված ըստ նորմայի բանվորական ժամերի գումարից,— այդ դեպքում, արտելի ներքին կարգապահական կանոններով սահմանված առանձին բանվորական որից դուրս կատարած աշխատանքը, չի կարող հաշվվել աշխատանքի ժամերից դուրս աշխատանք:

§ 1. Այսպիսով, աշխատավարձի ընդհանուր գումարի մեջ, վորից պետք է հաշվել ժամանակավոր անաշխատունակության նպաստը, մտնում են՝

ա) նորմալ աշխատանքի վարձատրությունը, անկախ վճարման ձևից (ամսավարձ, որավարձ, գործարքային, ակկորդային և այլն).

բ) նորմայից դուրս գերարտադրանքի վարձատրություն, նույն թվում և պրոգրեսիվկայի (միայն աշխատանքի ժամերին ունեցած գերարտադրանքի նկատմամբ).

գ) վարձատրություն ըստ միջին աշխատավարձի.

դ) ակկորդային (միայն աշխատանքի ժամերին աշխատանքի ժամանակամիջոցի համար).

ե) հավելումներ աշխատանքի ծանր պայմանների համար.

զ) հավելումներ յերկարատև ծառայության համար.

է) լրացուցիչ վարձատրություններ վորակի և բեռնավորման համար (չնորմավորված բանվորական ժամեր և այլն).

ը) գործարքով աշխատողներին լրացուցիչ վարձատրություն աշխատանքի նորմալ պայմաններից շեղվելու համար.

թ) պլանը գերակատարելու, խոտանի տոկոսն իջեցնելու, պարապուրդներն իջեցնելու, վառելիքի, ելեկտրոեներգիայի, հումքի, նյութեղենի, գործիքների տնտեսման, գույքավորումը պահպանելու վորոշ ցուցանիշներ գերակատարելու համար պարբերաբար պարգևատրումները և այլն.

ժ) բրիգադիրին՝ բրիգադայի աշխատանքները կազմակերպելու համար հավելումները.

ժա) տոկոսային վարձատրություն (տոկոս՝ շրջանառությունից և այլն), անկախ նրանից, թե այդպիսին վճարվում է վորպես

լրացուցիչ՝ տարիֆային դրույքին, թե վորպես աշխատանքի վարձատրության հիմնական ձևվ։

ժբ) լրացուցիչ վարձատրություն դիշերային աշխատանքի համար.

ժգ) խոտանի վարձատրություն (վոչ արտելի անդամի հանցանքով).

ժդ) արտադրությունում աշակերտներին սովորեցնելու համար վարձատրություն.

ժե) հեռավոր վայրերի աշխատանքների համար վարձատրություն.

ժզ) պարապուրդների վարձատրություն.

ժէ) անչափահասների արտոնյալ ժամերի վարձատրություն.

ժը) կերակրող մայրերի աշխատանքի ընդմիջումների վարձատրություն.

ժթ) հասարակական և պետական պարտականությունների կատարման հետ կապված աշխատանքի ժամանակ աշխատանքի դուրս չգալու և ընդմիջումների վարձատրություն.

ի) ուսումնական հաստատություններում սովորելու համար գործուղված արտելի անդամների վարձատրություն, վորոնք շարունակում են արտելի անդամների կազմի ցուցակում մնալ.

իա) աշակերտների աշխատավարձը, անկախ վճարման աղբյուրներից։

§ 2. Չեն մտցվում աշխատավարձի ընդհանուր գումարի մեջ, վորից հաշվում են ժամանակավոր անաշխատունակության նպաստը.

ա) պարգևներ՝ արտելի անդամների պարգևատրման ֆոնդից.

բ) լրացուցիչ վարձատրություն ոգուտից.

գ) արտաժամյան,— դրա տակ հասկանալով ամսվա նորմալ աշխատանքի ժամերից դուրս կատարած աշխատանքի համար տրված վոչ աշխատավարձը.

դ) միանվագ բնույթ կրող բոլոր տեսակի վճարումներ (արտելի տվյալ անդամի պարտականությունների մեջ չմտնող պատահական աշխատանքների համար).

ե) միանվագ բնույթ կրող պարգևներ, որինակ, տարեկան

և յեռամսյակային հաշվետվությունները կազմելու, առանձին հանձնարարությունները հաջող կատարելու համար և այլն.

զ) պարգևներ գյուտարարությանն ու տեխնիկական կատարելագործման ոժանդակման ֆոնդից.

է) գրական հեղինակային հոնորար.

ը) տեղափոխության և գործուղման գումարներ.

թ) համատեղության աշխատավարձ.

ժ) չոգտագործած արձակուրդի փոխհատուցում.

ժա) արտելի անդամներին իրենց սեփական գործիքներն ու նութեղենն ոգտագործելու համար տրված գումարներ, այլ նաև, վորպես կոմպենսացիա, նրանց կողմից կատարած արտադրական բնույթ կրող ծախքեր.

ժբ) հերթական և լրացուցիչ արձակուրդների ժամանակամիջոցի աշխատավարձ.

ժգ) մասնագիտական ճարպի (կաթ, յուղ և այլն) արժեքը և չտրված մասնագիտական հագուստի արժեքը.

ժդ) ժամանակավոր անաշխատունակության նպաստը.

ժե) ԲԳԿԲ և Ռազմա-Ծովային Նավատորմի շարքերում հավաքներն անցնելու կապակցությամբ նպաստը.

ժզ) բուժման համար տրված միանվագ նպաստը.

ժէ) բնակարանային դրամը։

§ 3. Արտելի ձեռնարկներում բանվորական որվա տեվողությունը սահմանվում է տվյալ արտելի անդամների ընդհանուր ժողովի կողմից և, վորպես կանոն, նախատեսվում է ներքին կարգապահական կանոններով։

Սահմանված բանվորական որից դուրս կատարած բոլոր աշխատանքները համարվում են արտաժամյա աշխատանքներ։ Սակայն, յեթե տվյալ ամսում աշխատած ժամերի ընդհանուր քանակը չի գերազանցում ըստ նորմայի ընդհանուր ժողովի կողմից սահմանված բանվորական ժամերի գումարից, առանձին որերի աշխատանքը՝ նորմալ որից դուրս տեվողությամբ,— չի կարող արտաժամյա համարվել։ Բանվորական ժամերի ամսական նորման ստացվում է՝ որական նորման ըստ գրաֆիկի տվյալ ամսվա բանվորական որերի թվի վրա բազմապատկելու միջոցով։

Որինակ. Արտելի անդամ Կապրալովը հունիսի ընթացքում աշխատել է 13 որ՝ որական 8 ժամ, 5 որ—որական 4 ժամ

և 7 որ—որական 12 ժամ, իսկ ընդամենը 208 ժամ։ Արտելի ներքին կարգապահական կանոններով նախատեսված է 8 ժամյա բանվորական որ, վորը հունիսին կկազմի 200 ժամ, վորովհետև այդ ամիսը 25 բանվորական որ ունի։ Այդ պատճառով էլ, չնայած նրան վոր Կապրալովն արտաժամյա աշխատել է 28 ժամ (7 որ՝ որական 4 ժամ), նպաստ հաշվելիս նրա աշխատավարձի գումարից պետք է դուրս գալ միայն 8 ժամվա աշխատավարձը։

§ 4. Վորովհետև աշխատավարձի ընդհանուր գումարից փաստորեն միշտ էլ հնարավոր չի լինում առանձնացնել արտելի անդամի կողմից աշխատանքի ժամերից դուրս ստացած աշխատավարձը,— այդ դեպքերում անհրաժեշտ է ընդհանուր աշխատավարձը բաժանել փաստորեն աշխատած ժամերի քանակի վրա, իսկ քանորդը բազմապատկել արտելի ներքին կարգապահական կանոններով նախատեսված աշխատանքի նորմալ ժամերի քանակի վրա։ Ստացված գումարը կտա այն աշխատավարձը, վորը պետք է ինկատի ունենալ ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվելիս։

Որինակ. Նույն Կապրալովը 208 ժամի համար ստացել է 416 ռուբլի, վորպիսին բաժանելով 208-ի վրա,— մի ժամվա միջին աշխատավարձը կստանանք 2 ռուբլի։ Յերկու ռուբլու բազմապատկումը 200-ի վրա կտա բանվորական նորմալ ժամանակամիջոցի աշխատավարձը, այն է 400 ռուբլի։ Արտելի անդամի կողմից արտաժամյա աշխատանքի համար, հիմնական գնահատումից դուրս վորպես հատուկ հավելում ստացված գումարները հաշվի չեն առնվում։

Սակայն, յեթե արտելի անդամը տվյալ ամսում աշխատանքային նորմալ ժամերը լրիվ չի աշխատել,— չի կարելի նման ձևով հաշվարկում կատարել։

§ 5. Հանգստի և տոն որերի աշխատանքը չի համարվում աշխատանքի ժամերից դուրս աշխատանք, և այդ որերի աշխատավարձը ժամանակավոր անաշխատունակության նպաստ հաշվելիս մտնում է հաշվարկի մեջ (տես Կանոնադրության հոդ. 34)։

31. Նպաստը հաշվելու համար վերցվում է մինչև աշխատունակությունն առաջանալը վերջին աշխատանքի միջին աշխատավարձը։ Յեթե այն ժամանակամիջոցում, վորի համար նպաստը հաշվելու համար վերցրված է աշխատավարձը,— արտելի անդամը փոխադրվել է ուրիշ աշխատանքի,— նպաստը հաշվելու համար վերցվում է միայն նրա վերջին աշխատանքի աշխատավարձը։

§ 1. Որինակ 1. Ուսիկովն արտելում աշխատում է 1937 թ. հունվարի 15-ից մինչև 1939 թ. փետրվարի 10-ը, նա աշխատել է վորպես վարպետ, վորից հետո փոխադրվել է տեխղեկի պաշտոնի։ Նա փետրվարի 20-ին հիվանդացել է։ Նպաստը պետք է հաշվել, յելնելով նրա վորպես տեխղեկի աշխատավարձից։

Որինակ 2. Աֆոնինն արտելում աշխատում է 15 տարի։ Մինչև 1939 թ. հոկտեմբերի 17-ը նա աշխատել է վորպես ատաղձագործ, վորից հետո փոխադրվել է փայտի գծով ճախարակագործ։ Աֆոնինը 1939 թ. նոյեմբերի 28-ից հիվանդացել է։ Նրան նպաստը հաշվելիս պետք է վերցնել վերջին աշխատանքի աշխատավարձը, այն է հոկտեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 27-ը ժամանակամիջոցի համար։

Որինակ 3. Լեվինն արտելում անընդհատ աշխատում է 1931 թ. փետրվարի 1-ից։ Մինչև 1939 թ. հոկտեմբերի 1-ը նա աշխատել է վորպես հաշվետար՝ 250 ռուբլի ռոճիկով, իսկ այնուհետև նա փոխադրվել է հաշվապահի պաշտոնի— 400 ռուբլի ռոճիկով։ Հոկտեմբերի 5-ից նա հիվանդացել և 9 որով ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ է ստացել։ Լեվոնյանին նպաստ պետք է հաշվել՝ հաշվապահի աշխատավարձից, այն է՝ 400 ռուբլի ռոճիկից։

§ 2. Յեթե արտելի անդամի կողմից ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու ժամանակամիջոցին,— նրա աշխատավարձի մեջ ավելացման կամ իջեցման գծով մի վորևիցե փոփոխություն է յեղել, այդ փոփոխությունները նրա ստանալիք նպաստի չափի վրա չեն ազդում։ Բացառություններ կազմում են միայն այն դեպքերը, յերբ հավելումը կատարվել է արտելի անդամի այն աշխատավարձին, վորից սկզբում հաշված է յեղել նպաստի չափը։

Որինակ 1. 1939 թ. նոյեմբերի 20-ից հղիության ու ծննդաբերության արձակուրդով ոգտվող արտելի անդամ Միխայլովայի աշխատավարձը 1940 թ. հունվարի 1-ից ավելացել է 5 տոկոսով։ Չնայած դրան, նպաստ նա հունվարի 1-ից հետո էլ պետք է ստանա նախկին չափով։ Յեթե 1940 թ. հունվարի 1-ից Միխայլովայի համար դրույքը պակասեցվի,— այդ դեպքում էլ նպաստ նրան դարձյալ կտրվի նախկին չափով։

Որինակ 2. Նույն Միխայլովայի համար դրույքի վերանայու-

մը կատարվել է վոչ թե 1940 թ. հունվարի 1-ից, այլ կատարվել է 1939 թ. հոկտեմբերի 1-ից և նրան տարբերությունը տրվել է մի քանի ամսից հետո։ Վորովհետև նպաստի որական միջին չափը հաշվելիս վերցրվել է նրա 1939 թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների աշխատավարձը,— պետք է հաշվարկում կատարվի և համապատասխանորեն ավելացվի նպաստի որական չափը՝ վճարելով նրան ստացված տարբերությունը։

> 32. Նպաստը հաշվելու համար ամսական աշխատավարձի դեպքում, վերցվում է տվյալ արտելի անդամի համար սահմանված ամսական աշխատավարձը մինչև անաշխատունակությունն առաջանալու որը։ Ամսական աշխատավարձի դեպքում լրիվ որական նպաստը (100 տոկոս) վորոշվում է ամսական ռոճիկը անաշխատունակության ամսվա բոլոր բանվորական որերի վրա բաժանելու միջոցով (այսինքն՝ տոն և կիրակի որերը հանելուց հետո մնացած բոլոր որերի)։
>
> Նպաստ տրվում է անաշխատունակության հետևանքով բաց թողած բոլոր բանվորական որերի համար։

§ 1. Բերում ենք կայուն աշխատավարձ ստացողներին նպաստը հաշվելու որինակներ։

Որինակ 1. Մալցեվը վորպես տնտեսագետ, արտելում անընդհատ աշխատում է վեց տարուց ավելի և ստանում է ամսական 600 ռ. աշխատավարձ։ Նպաստ նա պետք է ստանա աշխատավարձի 100 տոկոսի չափով։ Մալցեվը հիվանդացել է հինգ բանվորական որ։ Հիվանդության ամսում յեղել է 25 բանվորական որ։ 600-ը բաժանելով 25-ի վրա,— կստանաք 24։ Հետևապես Մալցեվի ժամանակավոր անաշխատունակության նպաստը կկազմի որական 24 ռուբլի, իսկ հիվանդության բոլոր 5 որվա համար— 120 ռուբլի։

Որինակ 2. Յեթե Մալցեվի հիվանդության ամսում լիներ վոչ թե 25, այլ 24 բանվորական որ,—600-ը բաժանելով 24-ի վրա, կստանայինք 25։ Հետևապես Մալցեվի ժամանակավոր անաշխատունակության նպաստը կկազմի որական 25 ռուբլի, իսկ 5 որվանը՝ 125 ռուբլի։

Որինակ 3. Արտելի անդամն ստանում է 345 ռուբլի կայուն աշխատավարձ։ Նա հիվանդացել է նոյեմբերի 5, 6, 7, 8, և 9։

Որական նպաստը 100 տոկոսի չափով կկազմի (345:23=15) 15 ռուբլի։ Նպաստը յենթակա յե վճարման 2 որվա համար, վորովհետև 3 որը բանվորական որեր չեն (մեկ որ կիրակի յե, 7 և 8-ը՝ տոն է)։ Ընդամենը հասնում է վճարելու 30 ռուբլի։ Յեթե արտելի անդամին նպաստ հասներ աշխատավարձի 80 տոկոսի չափով,— այդ դեպքում նա կստանար վոչ թե 30, այլ 24 ռուբլի։

§ 2. Յեթե ժամանակավարձային աշխատավորի ժամանակավոր անաշխատունակությունը տեղի ունենար տարբեր որացուցային ամիսներին տարբեր աշխատանքային որերով (23, 24, 25, 26), նպաստը պետք է հաշվել յուրաքանչյուր ամսվա համար առանձին (որինակ, դեկտեմբերի և հունվարի հիվանդության դեպքում— դեկտեմբերի համար առանձին և հունվարի համար առանձին)։

Որինակ. Ագաֆոնովը հիվանդացել է 1939 թ. նոյեմբերի 25-ից առ 17 դեկտեմբերի ներառյալ։ Ագաֆոնովի ամսական դրույքը մինչև նրա հիվանդանալը կազմում է 117 ռուբլի 30 կոպեկ։ Նրա փաստացի հանգստի որերն են— կիրակի որերը։ Նպաստը վորոշվում է հետևյալ հաշվով.

Նոյեմբեր. 117 ռ. 30 կ. բաժանում ենք 24 բանվորական որվա վրա (հանելով 2 որ տոն՝ 7 և 8 և 4 կիրակի որ) =4 ռ. 89 կ.։

Դեկտեմբեր. 117 ռ. 30 կ. բաժանում ենք 26 բանվորական որվա վրա (հանելով 5 կիրակի)= 4 ռ. 51 կ.։

Նոյեմբերին ժամանակավոր անաշխատունակության հետևանքով բաց է թողել 5 բանվորական որ՝ յուրաքանչյուր որվան 4 ռ. 89 կ. =24 ռ. 45 կ.։

Դեկտեմբերին բաց է թողել 14 բանվորական որ՝ յուրաքանչյուր որվան 4 ռ. 51 կ.=63 ռ. 14 կ.

Նպաստը լրիվ (100 տոկոսով) չափով՝ Աղախանյանին հասնում է վճարել 87 ռ. 59 կ.։

Նպաստն իջեցված չափով վճարելիս, գումարի չափը համապատասխանորեն իջեցվում է։

§ 3. Ժամանակավոր անաշխատունակության նպաստի հաշվելը հեշտացնելու համար, անհրաժեշտ է կազմել կիրակի և տոն որերի տախտակն ըստ ամիսների։

§ 4. Այն անձանց մասին, վորոնք կայուն աշխատավարձի հետ միաժամանակ ստանում են նաև զանազան լրացուցիչ դաումներ, վորը մտցվում է այն աշխատավարձի գումարի մեջ, վորից և հաշվում են նպաստը,— տես Կանոնադրության 35-րդ հոդվածը։

33. Գործարքային, ակկորդային (բանվորական ժամերին) և այլ նման աշխատավարձի դեպքում, նպաստը հաշվելու համար վերցվում է վերջին յերկու լրիվ որացուցային ամսվա փաստացի աշխատավարձն առ մեկն այն ամսվա,— վորի ընթացքում առաջացել է անաշխատունակությունը։

Առ մեկն այն ամսվա, վորի ընթացքում առաջացել է անաշխատունակությունը յերկու ամսից պակաս, բայց մեկ լրիվ ամսից վոչ պակաս աշխատողների համար, վերցվում է այդ լրիվ ամսվա աշխատավարձը։

Առ մեկն այն ամսվա, վորի ընթացքում առաջացել է անաշխատունակությունը—մեկ լրիվ ամսից պակաս աշխատողների համար վերցվում է առ անաշխատունակությունն առաջանալու որն աշխատանքի ամբողջ ժամանակամիջոցի աշխատավարձը։

Այս դեպքում պետք է ի նկատի ունենալ, վոր, համաձայն 31-րդ հոդվածի, նպաստը հաշվելու համար վերցվում է միայն վերջին աշխատանքի աշխատավարձը։

Ծանոթություն։ Արդյունքային-խրախուսիչ և պրոգրեսիվ-խրախուսիչ աշխատավարձ ստացող անձանց միջին աշխատավարձի մեջ է մտցվում յերկու ամսվա համար ստացված փաստացի աշխատավարձը։ Յեթե նպաստը հաշվելու ժամանակ այդ վարձատրությունը դեռ հաշված չի լինում, պետք է այդ գումարները վճարելուց հետո նպաստի հաշվարկում կատարվի։

§ 1. Որինակ 1. Ալեքսանդրովն արտել է մտել 1930 թ. հունվարի մեկին, հիվանդացել է 1939 թ. մայիսի 1-ից առ 2-ը հունիսի։ Ալեքսանդրովին նպաստ վորոշվում է մինչև հիվանդանալու ամիսը՝ նրա յերկու լրիվ որացուցային ամսվա աշխատավարձից, այն է՝ 1939 թ. մարտի 1-ից մինչև մայիսի 1-ը, վորը կազմում է 500 ռուբլի։ Նպաստի հաշվումը կատարվում է այսպես. աշխատավարձի միջին որականն

ստացվում է 500 ռուբլին 52-ի վրա բաժանելու միջոցով, այն է բանվորական որերի թվի (հանելով փաստորեն ոգտագործած 9 կիրակի որը) մարտ և ապրիլ ամիսներին։ Այդ տալիս է աշխատավարձի միջին որականը— 9 ռ. 62 կ.։ 1939 թ. մայիսի 1-ից մինչև հունիսի 2-ը ներառյալ՝ 33 որացուցային որ է։ Յեթե դրանից հանենք 6 վոչ բանվորական որը (մայիսի 1, 2, և 4 կիրակի)— կմնա 27 բանվորական որ։ Նպաստի լրիվ (100 տոկոս) չափի դեպքում Ալեքսանդրովին պետք է վճարել 259 ռ. 74 կ. (9 ռ. 62 կ.×27)։

Որինակ 2. Արխիպովն աշխատել է 1939 թ. մայիսի 18-ից առ 28 հուլիսի 1939 թ.։ Դատել է մայիսին 142 ռ., հունիսին,— 275 ռ. և հուլիսի 28 որը— 263 ռ.։ Հիվանդացել է նա հուլիսի 29-ից առ ոգոստոսի 24-ը ներառյալ։ Արխիպովն ամբողջ ժամանակամիջոցի համար իրավունք ունի նպաստ ստանալու աշխատավարձի լրիվ չափով։ Նպաստը հաշվելու համար վերցնում ենք միայն մեկ ամսվա (լրիվ)— հունիսի աշխատավարձը, վորի ընթացքում յեղել է 25 բանվորական որ և դրա վրա բաժանում ենք Արխիպովի հունիսի աշխատավարձը (275 ռ.)։ Աշխատավարձի որական չափը հավասար է 11 ռուբլու։ Հիվանդության հետևանքով բաց թողած 22 բանվորական որվա համար Արխիպովն կստանա 242 ռուբլի (11×22)։

Որինակ 3. Աֆանասեվն աշխատանքի յե մտել 1939 թ. նոյեմբերի 10-ին, իսկ հիվանդացել է 1939 թ. դեկտեմբերի 17-ին։ Նպաստը հաշվելու համար պետք է վերցնել Աֆանասեվի աշխատավարձն աշխատանքի ամբողջ ժամանակամիջոցի համար։

Որինակ 4. Տեխղեկ Ֆոմինչուկը ժամանակավոր անաշխատունակ է յեղել 1939 թ. հոկտեմբերի 6-ից առ 13-ը։ Ֆոմինչուկի աշխատավարձը կազմված է 500 ռուբլի ռոճիկից և արհեստանոցի աշխատանքի արդյունքների համար յեռամսյակային պարգևատրումներից։ Ֆոմինչուկի նպաստը վճարելիս նրան 3-րդ յեռամսյակի համար հասանելիք պարգևատրման չափը դեռ սահմանված չի յեղել և նպաստը հաշված է յեղել հիմնական աշխատավարձից։ Հոկտեմբերի 23-ին Ֆոմինչուկին 3-րդ յեռամսյակի համար պարգևատրում է հաշված յեղել 900 ռուբլու չափով։ Չնայած նրան, վոր Ֆոմինչուկը նպաստն արդեն ստացել է,— հարկավոր է նրա նպաստին հավելում կատարել և վորովհետև պարգևատրումը հաշվված է յեղել Ֆոմինչուկի վոչ յեռամսյակի ընթացքում, այն է 3 ամսվա աշխատանքի արդյունքների համար, իսկ նպաստը հաշվում են այդ յեռամսյակի 2 ամսվա աշխա-

տավարձից,— անհրաժեշտ է վերցնել 900 ռուբլու ⅔— 600 ռուբլի և այդ ավելացնելով յերկու ամսվա հիմնական աշխատավարձին (1000 ռ.), նպաստը Ֆոմինչուկին հաշվել ընդհանուր գումարից (1600 ռուբլուց)։

§ 2. Պետք է ի նկատի ունենալ, որ արդյունքային-խրախուսիչ և պրոգրեսիվ-խրախուսիչ աշխատավարձ ստացող անձանց նպաստը բոլոր դեպքերում ել հաշվում են վորպես գործարքայինով աշխատողներին, նույնիսկ և այն դեպքում, յերբ այդ ժամանակամիջոցում, վորի համար վերցվում է աշխատավարձ,— արտելի անդամին պարգեվատրում ել չի հասնում։

> 34. Գործարքով, ակկորդային և այլ աշխատողների համար որական լրիվ (100 տոկոս) նպաստը վորոշվում է 33-րդ հոդվածում նշված ժամկետի փաստացի աշխատավարձը— այդ նույն ժամանակամիջոցի որերի վրա բաժանելու միջոցով,— հանելով կիրակի ու տոն որերը (իսկապես ոգտագործած), ժամանակավոր անաշխատունակության նպաստով վճարված որերը և հերթական ու լրացուցիչ արձակուրդների որերը։ Նպաստ տրվում է անաշխատունակության հետեվանքով բաց թողած բանվորական որերի համար։

§ 1. Այն որերի թիվը վորոշելիս, վորի վրա ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվելիս պետք է բաժանվի արտելի անդամի աշխատավարձը,— ամսվա բոլոր որացուցային որերի ընդհանուր թվից, վորոնց համար վերցված է աշխատավարձը,— պետք է հանվի՝

ա) ժամանակավոր անաշխատունակության նպաստով վճարված որերը, բ) հերթական և լրացուցիչ արձակուրդների որերը, գ) արտելի անդամի կողմից փաստորեն ոգտագործված կիրակի և տոն որերը (այլ նաև «ա» և «բ» կետերում նշված ժամանակամիջոցի մեջ ընկնող և պարապուրդի ժամանակի կիրակի ու տոն որերը), դ) Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի և Ռազմածովային Նավատորմի շարքերում վարժությունների հավաքում գտնվելու որերը։

Այդպիսով, այն որերի թվի մեջ, վորի վրա բաժանվում է աշխատավարձը,— մտնում են՝

ա) բոլոր պարապուրդների որերը. բ) առանց աշխատավարձի պահպանման, առանց բացառության, բոլոր արձակուրդների որերը. գ) ժամանակավոր անաշխատունակության նպաստով չվճարված որերը։

Որինակ 1. Գործարքով աշխատող Պետրովը ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ ստացավ մայիսի 8-ից։ Նպաստ նրան պետք է հաշվել նախորդ յերկու որացուցային ամսվա, այն է՝ մարտ և ապրիլ ամիսների աշխատավարձից։

Այդ ամիսներին Պետրովը 9 կիրակի որից ոգտագործել է միայն 7-ը։ Բացի այդ, նա ունեցել է պարապուրդ 2 բանվորական որ (13 և 14), առանց ռոճիկի պահպանման արձակուրդ 2 որ։ 5-ից առ. 9-մարտի ներառյալ Պետրովն ստացել և նպաստ հիվանդանոցային թերթիկով։ Միջին որական աշխատավարձը (այսինքը— 100 տոկոսով նպաստ) պետք է գտնել ապրիլ և մայիս ամիսների աշխատավարձը 49 որվա բաժանելու միջոցով, վորովհետև մարտ և ապրիլ ամիսների որացուցային որերի ընդհանուր թվից (61) պետք է հանել ոգտագործած 7 կիրակի որը, ժամանակավոր անաշխատունակության նպաստով վճարած 4 որը և նպաստով վճարած հիվանդության ժամանակամիջոցի մեջ ընկնող (մարտին) մեկ կիրակի որը։

> 35. Ամսական ռոճիկի հետ լրացուցիչ դատում, ակկորդային և այլն ստացող արտելների անդամների համար, նպաստը վորոշվում է նույն կանոններով, ինչպես և գործարքով աշխատողներինը (հոդ. հոդ. 33—34)։

§ 1. Այս դեպքում, ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվելիս՝ տես Կանոնադրության 33-րդ հոդվածի մեկնաբանման 4-րդ որինակը։

> 36. Տան աշխատողներին, վորոնք ըստ իրենց աշխատանքի պայմանների չեն կարող աշխատանքի դուրս գալու կայուն սահմանված որեր ունենալ, նրա-պաստը վորոշում է 33-րդ հոդվածում նշված յեռապատիկ ժամկետի փաստացի աշխատավարձը (այսինքն՝ 6 ամսի, 3 ամսի, կամ փաստորեն աշխատած ժամանակի համար) այդ նույն ժամկետների որացուցա-

ցուցային որերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով։

Այս դեպքում, այդ որերի թվից, վորի վրա բաժանվում է աշխատավարձը, հանվում են միայն հերթական արձակուրդի և ժամանակավոր անաշխատունակության նպաստով վճարված որերը։ Նպաստ տրվում է անաշխատունակության բոլոր որացուցացային որերի համար։

§ 1. Այսպիսով տանն աշխատողների ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվելու համար, պետք է վերցնել հետեվյալ ժամկետների աշխատավարձը.

ա) Մինչև ժամանակավոր անաշխատունակության առաջանալու սկիզբը՝ 6 ամսից ավելի աշխատողներից—այդ 6 ամսվանը։

Որինակ 1. 1935 թ. աշխատող տնագործը հիվանդանոցային թերթիկով արձակուրդ է ստացել 1940 թ. հունվարի 25-ից։ Նպաստը պետք է հաշվել 1939 թ. հուլիսի 1-ից մինչև 1940 թ. հունվարի 1-ը ժամանակամիջոցի միջին աշխատավարձից։

բ) Մինչև ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու սկիզբը՝ 6 ամսից պակաս, բայց 3 ամսից ավելի աշխատողներից— 3 ամսվանը։

Որինակ 2. Տնագործն սկսել է աշխատել 1939 թ. հունիսի 10-ից, իսկ հիվանդանոցային թերթիկով արձակուրդ է ստացել 1939 թ. դեկտեմբերի 24-ից։ Պետք է վերցնել 1939 թ. սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների աշխատավարձը։

գ) Մինչև ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու սկիզբը 3 լրիվ որացուցային ամսից պակաս աշխատողներին՝ նպաստը հաշվում են փաստորեն աշխատած ժամանակամիջոցի աշխատավարձից։

Որինակ 3. Տնագործն սկսել է աշխատել 1939 թ. հուլիսի 10-ից, իսկ հիվանդացել է 1939 թ. հոկտեմբերի 28-ից։ Պետք է վերցնել նրա՝ արտելում վորպես տնագործ աշխատելու ամբողջ ժամանակամիջոցի, այն է՝ 1939 թ. հուլիսի 10-ից մինչև հոկտեմբերի 27-ի աշխատավարձը։

§ 2. Բերում ենք տնագործների նպաստը հաշվելու որինակներ։

Որինակ 1. 1930 թ. աշխատող տնագործ Վասիլյանը ժամանակավոր անաշխատունակ է յեղել 1939 թ. նոյեմբերի 4-ից

մինչև 19-ը։ Նպաստ նրան պետք է հաշվել յելնելով 6 ամսվա, այն է՝ 1939 թ. մայիս—հոկտեմբեր ամիսների աշխատավարձից։ Այդ ամիսներին նա դատել է 1656 ռուբլի։ Որական աշխատավարձը պետք է գտնել 1656-ը 184-ի վրա (մայիս—հոկտեմբեր ամիսների որացուցային որերի թիվը) բաժանելու միջոցով, վորը կտա որական 9 ռուբլի։ Վորովհետև Վասիլյանը տվյալ արտելում անընդհատ աշխատում է 1930 թվից,— նա իրավունք ունի նպաստի 80 տոկոսի չափով, այն է՝ որական 7 ռ. 20 կ., իսկ 15 որացուցային որվա համար 108 ռուբլի։

Որինակ 2. Յեթե այդ նույն Վասիլյանը մայիս—հոկտեմբեր ամիսների ընթացքում հիվանդանոցային թերթիկով արձակուրդ ունեցած լիներ (ոգոստոսի 4-ից մինչև սեպտեմբերի 1-ը), այդ դեպքում հաշվարկից պետք է հանել 28 որը, վորովհետև Վասիլյանի այդ ժամանակաշրջանի ստացած ժամանակավոր անաշխատունակության նպաստը չպետք է աշխատավարձի մեջ մտցվի։

37. Կենդանի լծկան ուժի վրա (ձիերի, ուխտերի, եշերի և այլն) աշխատողների նպաստը հաշվելիս պետք է վերցնել ապահովագրական մուծանքները հաշվելու համար հանրապետական, մարզային (յերկրային) արհապգանձարկղների (գանձմիությունների) կողմից սահմանված ու համաձայնեցրված տեղական փոխադրական արհեստագործական միությունների հետ միջին աշխատավարձը։ Որական լրիվ նպաստը վորոշվում է, աշխատավարձը վճարելու ձեվի կապակցությամբ, 32 կամ 33—34 հոդվածների կարգով։

Արտելի այն անդամները, վորոնք հրաժարվում են իրենց ձին (ուղտը, եշը և այլն) իրենց հիվանդության ընթացքում շահագործելու համար արտելին հանձնելուց, ժամանակավոր անաշխատունակության նպաստով չեն ապահովվում։

§ 1. Կանոնադրության սույն հոդվածով սահմանված ժամանակավոր անաշխատունակության նպաստները հաշվելու կարգը տարածվում է ինչպես հանրայնացրված, այնպես էլ արտելի անդամներին պատկանող կենդանի լծկան ուժի վրա աշխատող բոլոր արտելականների վրա։

§ 2. Կենդանի լծկան ուժի վրա աշխատող արտելների անդամների միջին աշխատավարձը պետք է հաշվել վոչ թե աբսոլյուտ գումարով (ամսական այսքան ռուբլի), այլ կենդանի լծկան ուժի կատարած աշխատանքի համար արտելի ստացած գումարից վորոշ տոկոսով։ Արտելի յուրաքանչյուր անդամի աշխատավարձ վորոշվում է առանձին, աշխատանքի հետեվանքով արտելի ստացած գումարից նույն տոկոսի չափով։

§ 3. Հանրապետական, մարզային (յերկրային) արհապգանձարկղների ու գանձմիությունների կողմից կենդանի լծկան ուժի աշխատանքի համար արտելի անդամի աշխատավարձը վորոշող տոկոսը սահմանելիս, սխալներից խուսափելու համար, պետք է փոխադրությունների արժեքի և արտելի փաստացի ծախքերի կալկուլացիան կատարել ուշադրությամբ ու մանրամասնորեն ուսումնասիրելուց հետո, այլապես աշխատավարձի սահմանումը կկատարվի կամ շատ բարձր, կամ շատ ցածր չափով։

§ 4. Այն դեպքում, յերբ հանրայնացված կամ իր ձիով (ուղտով և այլն) աշխատող արտելի անդամը ձիու (ուղտի և այլն) հիվանդության, նրա վրա կարանտին դնելու կամ անասնապահական հսկողության մարմինների կողմից արտելի տվյալ անդամին ձիու վրա (ուղտի և այլն) աշխատելն արգելելու հետեվանքով պարապուրդ է ունենում,— այդ ժամանակի համար նրան ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ ու միաժամանակ նպաստ չի տրվում։

§ 5. Սույն հոդվածի յերրորդ մասով սահմանվում է, վոր իրենց պատկանող ձիով (ուղտով և այլն) աշխատող արտելի անդամները, վորոնք հրաժարվում են իրենց ժամանակավոր անաշխատունակության ընթացքում, կենդանուն շահագործելու համար արտելին հանձնելուց,— զրկվում են իրենց հասանելիք նպաստից։ Սակայն այս կանոնը չի կարող կիրառվել արտելի այն ժամանակավոր անաշխատունակ անդամների նկատմամբ, վորոնց կենդանի լծկան ուժը չի ոգտագործվում իրեն արտելի հանցանքով։ Այդ դեպքում, ժամանակավոր անաշխատունակության նպաստ վճարելիս, չպետք է հաշվի առնել այն յեկամուտը, վորն արտելի անդամն ստանում է իրեն պատկանող ձին (ուղտը

և այլն) իր ընտանիքի անդամի կամ կողմնակի անձի կողմից շահագործելուց։

38. Տանն աշխատող արտելի գորգագործ անդամների որական նպաստը հաշվելիս՝ գորգ պատրաստելու համար պայմանագրով նախատեսված աշխատավարձը բաժանվում է որացուցային որերի թվի վրա, վորի ընթացքում ըստ պայմանագրի գորգը պետք է հանձնվի։

Նպաստ տրվում է անաշխատունակության բոլոր որացուցային որերի համար, յեթե անաշխատունակությունն առաջացել է պայմանագիրը գործելու ընթացքում և յեթե անաշխատունակության կապակցությամբ գորգը հանձնելու ժամկետը յերկարացված է։

§ 1. Այն դեպքում, յերբ գորգագործուհին, չնայած ժամանակավոր անաշխատունակության արձակուրդին, գորգը ժամկետին հանձնում է,— նրան հիվանդանոցային թերթիկով նպաստ չի տրվում։

Որինակ 1. Գորգագործուհի Կարոեվան համաձայն սահմանված նորմայի և պայմանագրի՝ հումքն ստանալու որից հաշված, գորգն արտելին պետք է հանձնի յերեք ամսվա ժամկետում։ Այդ ժամանակամիջոցում Կարոեվը հիվանդանոցային թերթիկով արձակուրդ է ունեցել։ Սակայն գորգը ժամկետին արտելին է հանձնվել։ Այնքան, վորքան Կարոեվն այն աշխատավարձը, վորն ըստ պայմանագրի պետք է ստանար 3 ամսվա ընթացքում, փաստորեն ստացել է,— ժամանակավոր անաշխատունակության նպաստը վճարման յենթակա չէ։

§ 2. Յեթե ժամանակավոր անաշխատունակությունն անհրաժեշտություն է առաջ բերել յերկարացնելու գորգն ավարտելու ժամկետը,— այդ յերկարացման որերի համար նպաստ է տրվում (բայց վոչ ավելի այն ժամկետից, վորի համար հիվանդանոցային թերթիկ է տրված յեղել)։

Որինակ 2. Գորգագործուհին ըստ պայմանագրի պետք է գորգը հանձնի յերեքամսյա ժամկետում։ Այդ ժամանակամիջոցում նա 1½ ամիս գտնվել է հիվանդանոցային թերթիկի վրա։ Չնայած դրան, գորգը հանձնվել է միայն մեկ ամիս ուշացումով։

գործադրումն հիվանդանոցային թերթիկով նպաստ պետք է տրվի միայն մեկ ամսվա համար։ Եթե գործի հանձնումն ուշանար 2 ամսով, նպաստ կտրվեր միայն 1½ ամսով։

39. Եթե անաշխատունակությունն առաջացել է արտելն աշխատելու ժամանակ և շարունակվում է նրա ժամանակավոր կանգնեցման շրջանում (արհեստանոցի, ցեխի և այլն),— արտելը կանգնեցնելու շրջանում նպաստ տրվում է (եթե արտելի անաշխատունակ անդամները պահպանում են իրենց աշխատավարձը կամ նրա մի մասը) այն չափով, ինչ չափով նույն պրոֆեսիայի ու վորակի արտելի անդամներին այդ նույն ժամանակամիջոցի համար աշխատավարձ է վճարվում, բայց համենայն դեպս, վոչ ավելի այն նպաստից, վորն արտելի տվյալ անդամը կստանար նպաստն ընդհանուր կանոններով հաշվելու դեպքում։

Եթե անաշխատունակությունն առաջանում է արտելի աշխատանքը ժամանակավորապես կանգնեցնելու շրջանում, կանգնեցման ժամանակի համար նպաստ չի տրվում (բացի ներքևում հիշատակված դեպքերից)։

Սակայն, եթե ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է կնոջ հղիությամբ, վորը, մինչև հղիության արձակուրդ տալու որը, 7 ամսից վոչ պակաս անընդհատ աշխատել է տվյալ արտելում և ապրում է միայն արտելի աշխատավարձով (վորովհետև նրա ընտանիքն այլ դատումներ չունի),— ժամանակավոր անաշխատունակության նպաստի վճարումը յենթակա յե և այն դեպքում, յերբ աշխատանքը կանգնեցնելու շրջանում արտելի անդամների աշխատավարձը չի պահպանվել։ Այդ արտոնությունը չի տարածվում մինչև հղիության հետեվանքով արձակուրդ տալու որը տանն աշխատող կանանց վրա։

Եթե անաշխատունակությունը (անկախ նրա առաջացման ժամկետից) շարունակվում է արտելի աշխատանքը վերականգնելուց հետո, — նպաստ տրվում է աշխատանքը վերականգնելու որից այն աշխատավարձի հաշվով, վորն արտելի անդամն ստացել է մինչև աշխատանքի կանգնեցնելը։

§ 1. Աշխատանքը ժամանակավորապես կանգնեցնելու կապակցությամբ հնարավոր են հիվանդանոցային թերթիկներով նպաստը վճարելու հետևյալ դեպքերը.

ա) հիվանդանոցային թերթիկով արձակուրդն սկսվել է մինչև աշխատանքի ժամանակավոր կանգնեցումը և վերջացել է ժամանակավոր կանգնեցման շրջանում, վորի ընթացքում արտելի անդամների աշխատավարձը բոլորովին չի պահպանվել։

Այս դեպքում մինչև կանգնեցումը ժամանակի համար նպաստը տրվում է սովորական չափերով, իսկ կանգնեցման ժամանակամիջոցի համար բոլորովին չի տրվում։

բ) Արձակուրդը հիվանդանոցային թերթիկով սկսվել է մինչև աշատանքի ժամանակավոր կանգնեցումը և վերջացել է ժամանակավոր կանգնեցման շրջանում, վորի ընթացքում արտելի անդամները, համաձայն ընդհանուր ժողովի վորոշման, աշխատավարձը պահպանել են վորոշ չափերով։

Այս դեպքում մինչև կանգնեցումը ժամանակի համար նպաստը տրվում է սովորական չափերով, իսկ կանգնեցման ժամանակամիջոցի համար նպաստը չպետք է գերազանցի այն աշխատավարձի չափից, վորը պահանջում են նույն պրոֆեսիայի ու վորակի արտելի անդամները (սակայն վոչ բարձր այն նպաստից, վորը տրվել է մինչև կանգնեցումը)։

գ) Աշխատանքի ժամանակավոր կանգնեցումը տեղի յե ունեցել արտելի անդամը հիվանդանոցային թերթիկի վրա գտնվելու ժամանակ, վորն արդեն վերջացել է կանգնեցրած աշխատանքը վերսկսելուց հետո։

Մինչև կանգնեցումը ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանի համար նպաստ տրվում է սովորական կարգով։ Կանգնեցման ժամանակի համար կամ բոլորովին չի տրվում (համաձայն «ա» կետի) կամ տրվում է այն աշխատավարձի չափով, վորը պահպանում են նույն պրոֆեսիայի ու վորակի արտ-

տելի աշխատունակ անդամները, բայց վոչ բարձր այն նպաստից, վորը տրվել է մինչև կանգնեցումը (համաձայն «բ» կետի)։ Արտելի աշխատանքը վերսկսելուց հետո, նպաստ տրվում է նույն չափով, ինչ վոր մինչև կանգնեցումը։

դ) Ժամանակավոր անաշխատունակությունն սկսվել ու վերջացել է արտելի աշխատանքը կանգնեցնելու շրջանում։

Նպաստ բոլորովին չի տրվում։

ե) Հիվանդանոցային թերթիկով արձակուրդն սկսվել է արտելի աշխատանքը ժամանակավոր կանգեցման շրջանում, բայց արտելի անդամն աշխատանքի յե դուրս գրվել արդեն աշխատանքը վերսկսելուց հետո։ Նպաստ տրվում է միայն կանգնեցված աշխատանքը վերսկսելուց հետո։ Նպաստը հաշվում են մինչև աշխատանքի կանգնեցումն ունեցած աշխատավարձից։

զ) Հիվանդանոցային թերթիկով արձակուրդն սկսվել է ժամանակավորապես կանգնեցրված աշխատանքները վերսկսելուց հետո մոտակա որերին։

Նպաստը պետք է հաշվել սովորական կարգով, այն է՝ կայուն ժամանակավարձայիններին՝ նրանց առ անաշխատունակության սկզբի որն աշխատավարձից, իսկ գործարքայիններին՝ Կանոնադրության 34-րդ հոդվածի կարգով։

է) Հղիության ու ծննդաբերության արձակուրդն ամբողջովին կամ մասնակի զուգադիպել է արտելի աշխատանքը ժամանակավորապես կանգնեցնելու հետ։ Ընդհանուր արհեստանոցներում (վոչ տանը) աշխատող կանանց, 39-րդ հոդվածի 3-րդ պարբերությունում նշված պայմանների առկայության դեպքում, վերապահվում են արտոնություններ, վորոնք արտահայտվում են նրանում, վոր հղիության ու ծննդաբերության հետեվանքով նպաստը կանգնեցման ժամանակի համար տրվում է սովորական չափով, անկախ նրանից, թե կանգնեցման շրջանում աշխատունակ անդամները պահպանում են աշխատավարձի մի մասը թե վոչ։ Այս դեպքում նպաստը հաշվում են մինչև կանգնեցումն ունեցած աշխատավարձից։

40. Արտելների հարկադիր աշխատանքի դատապարտված անդամներին նպաստ վորոշվում է յելնելով այն աշխատավարձից, վորն արտելի անդամը պահ-

պանում է համաձայն դատարանի վորոշման։ Աշխատանքա-ուղղիչ աշխատանքների պատիժը (ըստ աշխատանքի վայրի) կրելու ժամանակամիջոցը չի ընդհատում ստաժի ընթացքը, բայց և ստաժի մեջ էլ չի մտցվում։

§ 1. Աշխատանքա-ուղղիչ աշխատանքները վոչ ըստ աշխատանքի վայրի, պատժի ժամանակամիջոցն ընդհատում է արտելում անընդհատ աշխատանքի ստաժի ընթացքը՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը վորոշելու համար։ Այսպիսով, 1939 թ. 4 ամսվա ընթացքում վոչ արտելում աշխատանքա-ուղղիչ աշխատանքների պատիժը կրած և նույն արտելը, վորի անդամն է մնացել նա, աշխատանքի վերադարձած ու աշխատանքի 6 ամիսն անցնելուց հետո հիվանդացած արտելի անդամը նպաստ պետք է ստանա յերկու տարվա անընդհատ ստաժ չունեցողների համար սահմանված չափով։ Յեթե նա արտել վերադառնալուց հետո հիվանդանա մինչև վեց ամսվա ստաժի կուտակումը,— նպաստ բոլորովին չի ստանա։

§ 2. Իրենց արտելում աշխատանքա-ուղղիչ աշխատանքների պատիժը կրողների ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվում են նրանց վրա պահպանված աշխատավարձից։ Ասենք, յեթե արտելի անդամի 400 ռուբլի ամսական աշխատավարձից պահպանվում է 300 ռուբլի,— 2½ տարվա ստաժի դեպքում, նա նպաստ կստանա (ընդհանուր արհեստանոցներում աշխատելու դեպքում) 300 ռուբլուց 60 տոկոսի չափով։

VI. ՆՊԱՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ՆՐԱ ՎՃԱՐՈՒՄԸ

41. Նպաստի իրավունքն ու նրա չափը սահմանվում են ԱՊԿԲԲ-ի (աշխատանքի պաշտպանության և կենցաղի բարելավման բյուրո) նիստերին՝ արտելի անձնական կազմի հաշվառման և հաշվապահության աշխատավորների մասնակցությամբ, իսկ վորտեղ ԱՊԿԲԲ-ի չկա,— այդ աշխատանքը կատարում է ապահովագրական պատգամավորը, արհմիությունների

(ապահովագրական խորհրդի) հետագա ստուգմամբ։ Նպաստը հաշվում և վճարում է արտելի վարչությունը, արտելից հասանելիք ապահովագրական մուծանքների հաշվին։

Նպաստը հաշվելու և վճարելու բոլոր աշխատանքները կատարում են արտելները, առանց այդ աշխատանքների համար մի վորևիցե վարձատրության արհապգանձարկղների (ապահովագրական խորհուրդների) կողմից։

§ 1. ԱՊԿԲԲ վոչ մի դեպքում չի կարող արտելի անդամի նպաստի իրավունքի վորոշումը և նրա չափի սահմանումը (արտելի տվյալ անդամի միջին աշխատավարձի տոկոսներով) դնել արտելի վարչության կամ նրա հաշվապահության վրա։ Միանգամայն անթույլատրելի է և այն կարգը, յերբ արտելի անդամի մասին տեղեկություններ հավաքում է արտելի հաշվետարը, վորը և լրացնում է հիվանդանոցային թերթիկը, իսկ ԱՊԿԲԲ, առանց տեղեկություններն ըստ եության ստուգելու, բավականանում է միայն թերթիկը մակագրելով։ Նպաստներ նշանակելու և նրանց չափը վորոշելու աշխատանքը խոշոր նշանակություն ունի և այդ պատճառով ել ԱՊԿԲԲ-ները պետք է նրան վերաբերվեն հատուկ ուշադրությամբ և ճշտաջանությամբ։

§ 2. Ժամանակավոր անաշխատունակության նպաստի նշանակումն ու նրանց չափի սահմանումը պետք է կատարվի ԱՊԿԲԲ-ների նիստերին (այդ նիստերի ԱՊԿԲԲ-ների ⅔-ից վոչ պակաս անդամների ներկայությունը պարտադիր է) և վոչ թե ԱՊԿԲԲ-ի նախագահի կողմից միանձնորեն։ Փորձը ցույց է տալիս, վոր ապահովության կանոնների խախտումները մեծ մասամբ տեղի չեն ունենում այն արտելներում, ուր նպաստները նշանակվում են մենակ ԱՊԿԲԲ-ների նախագահների կողմից։ ԱՊԿԲԲ-ի նիստին ցանկալի չէ արտելի այն անդամի ներկայությունը, վորին նպաստ է նշանակվում։

§ 3. ԱՊԿԲԲ-ի վորոշումները հիվանդանոցային թերթիկներով նպաստ նշանակելու և նպաստի չափը սահմանելու մասին պետք է անպատճառ արձանագրվեն ըստ յուրաքանչյուր վճարման դեպքի առանձին։ Նպաստի նշանակումը մերժելու կամ արտելի անդամին նրան հասանելիք նպաստից զրկելու դեպքում (տես Կանոնադրության հոդ. հոդ. 3, 4, 51, 52, 53)—պետք է մերժման պատճառը մանրամասնորեն արձանագրության մեջ մտցվի։

§ 4. ԱՊԿԲԲ-ի նիստում նպաստ նշանակելուց հետո, ԱՊԿԲԲ-ի նախագահը՝ արձանագրության մեջ գրանցված վորոշման համաձայն, նպաստը նշանակելու և նրա չափի մասին համապատասխան մակագրություն է անում հիվանդանոցային թերթիկի վրա։

§ 5. ԱՊԿԲԲ-ի արձանագրությունը՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստները վորոշելու և նշանակելու խնդրի մասին,— ստորագրվում են ԱՊԿԲԲ-ի նախագահի, հաշվային աշխատողի և անձնական կազմի աշխատողի կողմից։

ԱՊԿԲԲ-ի նիստի արձանագրությունը կազմվում է մեկ որինակից և պահվում է արտելի գործերում՝ նպաստների վճարման (աշխատավարձի) տեղեկագրին կցված։

§ 6. ԱՊԿԲԲ-ներ չունեցող արտելներում (մինչև 25 հոգի աշխատողներով) հիվանդանոցային թերթիկներով նպաստների նշանակումը կատարվում և ձեվակերպվում է նույն կարգով ապահովագրական լիազորի և արտելի հաշվապահի կողմից։

§ 7. Ժամանակավոր անաշխատունակության նպաստներ նշանակելու յուրաքանչյուր դեպքում,— ԱՊԿԲԲ-ները պետք է պարզեն.

ա) թերթիկ ներկայացնող արտելի անդամն իրավունք ունի՞ արդյոք նպաստ ստանալու.

բ) աշխատանքի ինչպիսի անընդհատ ստաժ ունի նա՝ այդ մասին յեղած տեղեկությունները Կանոնադրության 46-րդ հոդվածում նշված փաստաթղթերով ստուգելու միջոցով.

գ) ճի՞շտ է տրված արդյոք բուժող բժշկի կողմից հիվանդանոցային թերթիկը և լրիվ է լրացված թե վոչ.

դ) արտելի անդամի տունն ընկերական հսկողություն ուղարկվել է թե վոչ և ինչպիսի արդյունք է տվել նա.

ե) հիվանդի արձակուրդը չի՞ առաջացել արդյոք հարբեցողության հետեվանքով և այլն.

զ) թերթիկ ներկայացնողը չի՞ պատկանում արդյոք այն անձանց շարքերին, վորոնց նպաստ պետք է տրվի սահմանափա-

կումներով։ Միաժամանակ պարզվում է ժամանակավոր անաշխատունակության պատճառը և միջոցներ են ձեռք առնվում նրանց վերականգնելը՝ հիվանդություններն ու դժբախտ պատահարները հետագայում կանխելու համար։

§ 8. Արտելը լուծարքի յենթարկվելու դեպքում (տես 16-րդ հոդվածի մեկնաբանումների § § 4 և 5) նպաստը, արտելի լուծարքի յենթարկվելու որից, վճարվում է լուծարքի յենթարկվող արտելն սպասարկող արհապգանձարկղի (ապահովագրական խորհրդի) կողմից։

§ 9. Ժամանակավոր անաշխատունակության նպաստ նշանակելիս ԱՊԿԲԲ-ները պետք է ուշադրություն դարձնեն պարզելու՝ ժամանակավոր անաշխատունակության այս կամ այն դեպքի նկատմամբ ռեգրեսիվ հայց հարուցելու հնարավորությունը, արտելի կամ մասնավոր անձի դեմ, վորը մեղավոր է ճանաչված, վոր արտելի անդամի հետ դժբախտ պատահար է տեղի ունեցել կամ հիվանդացել է (ՌԽՖՍՀ քաղաքացիական կոդեքսի 413 և 414 հոդվածների կարգով)։ Պետք է հիշել, վոր ռեգրեսիվ հայցերը հսկայական նշանակություն ունեն հիվանդության և տրավմատիզմի դեմ պայքարելու գործում՝ պահանջելով արտելների վարչություններից ե՛լ ավելի հետևել անվտանգության տեխնիկային, ե՛լ ավելի հոգալ արտելներում աշխատանքի պայմաններն առողջացնելու մասին։ Խոշոր դաստիարակչական նշանակություն ունեն ռեգրեսիվ հայցերը կենցաղային տրավմաների պայքարի գործում։

Փոխադարձ ապահովագրական գանձարկղների ռեգրեսիվ հայցեր հարուցելու իրավունքը սահմանված է ՌԽՖՍՀ Գերագույն Դատարանի նախագահության 1932 թ. փետրվարի 3-ի վորոշմամբ («Խորհրդային արդարադատության շաբաթաթերթ» 1932 թ., № 10)։

§ 10. ԱՊԿԲԲ-ների կողմից նշանակված ժամանակավոր անաշխատունակության նպաստների վճարումն ի հաշիվ ապահովագրական մուծանքների՝ կազմում է արտելների վարչությունների պարտականությունը, վորի կատարումից նրանք վոչ մի պատրվակով չեն կարող խուսափել (միջոցների բացակայության, գանձարկղի կողմից արտելի պարտքի առկայություն և այլն)։

Նպաստները վճարելուց խուսափելու համար հանցավորները պետք է յենթարկվեն պատասխանատվության, վորպես աշխատավարձի վճարումն ուշացնողներ։

42. Յեթե ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է արտելը գտնվելու վայրից դուրս (որինակ, գործուղման մեջ, արձակուրդում և այլն),— նպաստի վճարումը կատարվում է ըստ աշխատանքի վայրի (վորտեղ արտելի անդամն աշխատավարձ է ստանում)։

§ 1. Արտելների այն անդամներին, վորոնց ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է մշտական բնակավայրից և աշխատանքի վայրից դուրս (որինակ, գործուղման ժամանակ, հանգստյան տնում և այլն),— հիվանդանոցային թերթիկները տրվում են նրանց ժամանակավորապես գտնվելու վայրում, բայց միայն բուժհիմնարկի գլխավոր բժշկի հաստատմամբ (ՀԱՄԿԽ-ի և ԽՍՀՄ Առժողկոմատի 1937 թ. հուլիսի 31-ի հրահանգի 24-րդ հոդ.)։

§ 2. Բացառիկ դեպքերում, յերկարատև ժամանակավոր անաշխատունակության դեպքում, նպաստը ԱՊԿԲԲ-ի վորոշմամբ արտելի կողմից կարող է ուղարկվել փոստով։ Սակայն դրամի նման փոխադրումը կարող է տեղի ունենալ միմիայն ԱՊԿԲԲ-ի կողմից, ըստ արտելի անդամի ուղարկած հիվանդանոցային թերթիկի, նպաստը նշանակելուց հետո։ Դրամի փոխադրման ծախքն անց է կացվում արտելի հաշվին։

43. Նպաստը տրվում է արտելի անդամի աշխատավարձը վճարելու համար սահմանված ժամկետներին, բացի հետևյալ դեպքերից, յերբ նպաստը տրվում է առաջուց.

ա) այլ վայրերում ձրի սանկուրորտային բուժման արձակուրդի դեպքում— արձակուրդի վոչ ժամկետի նպաստի 70 տոկոսը (մնացած մասը տալով արձակուրդից վերադառնալուց հետո).

բ) այլ վայրում իր հաշվին բուժվելու արձակուրդի դեպքում (սանկուրորտային, մասնագիտական-ստացիոնար կամ ամբուլատոր)— սանկուրորտային հանձնաժողովի և բժշկական-աշխատանքային եքսպերտ հանձնաժողովի (ԲԱԵՀ) կողմից տրված արձակուրդի վողջ ժամկետի համար։

գ) Հղիության արձակուրդի դեպքում— մինչև ծննդաբերության վողջ շրջանի համար (հետծննդաբերության շրջանի համար նպաստը վճարելով մաս-մաս՝ աշխատավարձը վճարելու հետ միաժամանակ)։

§ 1. Գորգագործուհիներին, նրանց վարձատրության յուրահատուկ պայմանների կապակցությամբ, հիվանդանոցային թերթիկներով նպաստը տրվում է տվյալ գորգագործուհու հետ արտելի կողմից աշխատավարձի հաշվարկումը կատարելուց հետո։ Սակայն ԱՊԿԲԲ-ները կարող են, անհրաժեշտ դեպքերում,—յերկարատև հիվանդության դեպքերում, թույլատրել գորգագործուհիներին առաջուց, ի հաշիվ նպաստի ավանս վճարել,— մինչև արտելի կողմից նրանց հետ վերջնական հաշիվ կատարելը։

§ 2. Ի նկատի ունենալով, վոր արտելի անդամ-կանանց հղիության հետևանքով արձակուրդի նպաստը մինչ ծննդաբերության վողջ շրջանի համար (35 որ) տրվում է առաջուց,— ԱՊԿԲԲ-ներին՝ անհրաժեշտ է հետեվել, վորպեսզի այն դեպքերում, յերբ ծննդաբերությունը տեղի յե ունենում բժշկի կողմից սահմանված ժամկետից շուտ,— հղիության հետեվանքով ավելի վճարած նպաստը հաշվել հետ ծննդաբերության շրջանի արձակուրդի հաշվին, վորպեսզի միևնույն որերի համար, նպաստի կրկնակի վճարում չլինի։

Որինակ. Արտելի անդամ Իլինայի ծննդաբերության ժամկետը բժշկները վորոշել են դեկտեմբերի 8-ին և նրան նոյեմբերի 3-ից առ 7-ը դեկտեմբերի հղիության հետեվանքով արձակուրդ են տվել։ Նոյեմբերի սկզբին, Իլինան արձակուրդի ամբողջ ժամանակամիջոցի համար, այն է առ 7-ը դեկտեմբերի ներառյալ, նպաստ է ստացել։ Սակայն, ծննդաբերությունը տեղի չե ունեցել վոչ թե դեկտեմբերի 9-ին, այլ դեկտեմբերի 2-ին։ Իլի-

նային հետ ծննդաբերության շրջանի արձակուրդի նպաստը վճարելիս,— դեկտեմբերի առաջին կեսի համար նպաստը պետք է վճարել վոչ թե 2-ից, այլ միայն դեկտեմբերի 8-ից, վորովհետև դեկտեմբերի 2-ից առ 7-ը ժամանակամիջոցի համար հղիության հետեվանքով նպաստ արդեն վճարված է յեղել։

§ 3. Մինչև աշխատավարձ վճարելու ժամկետը չի թույլատրվում նպաստ վճարել (բացառությամբ կանոնադրության սույն հոդվածում թված դեպքերից)։

Որինակ. Արտելի անդամ Մոսալսկին ժամանակավոր անաշխատունակ է յեղել սեպտեմբերի 7-ից առ 20-ը։ Հիվանդանոցային թերթիկով այդ որերի նպաստը նա կստանա ամսվա յերկրորդ կեսի աշխատավարձը վճարելու համար սահմանված ժամկետին, այն է՝ հոկտեմբերի 4-ին։

§ 4. ԱՊԿԲԲ-ի կողմից նշանակված ժամանակավոր անաշխատունակության նպաստները արտելի վարչությունը պարտավոր է վճարել ի հաշիվ ապահովագրական մուծանքների, դրա համար սահմանված ճիշտ ժամկետին։

Այն դեպքում, յերբ հայտնաբերվում են արտելի վարչության կողմից հիվանդանոցային թերթիկներով գումարների վճարումը ձգձգելու դեպքեր, առավել ևս թերթիկներով, վորոնցով նշանակված նպաստների գումարներն արդեն ընդունված են արհապգանձարկղների կողմից ի հաշիվ ապահովագրական մուծանքների,— պետք է անմիջապես միջոցներ ձեռք առնել հանցավորներին յենթարկելու քրեական պատասխանատվության և մարելու ստացված պարտքը՝ արտելի անդամի նկատմամբ։

44. Նպաստ տրվում է միմիայն անաշխատունակության թերթիկով. դրանց դիմաց վճարման համար այլ փաստաթղթեր չեն ընդունվում։

Թերթիկը կորցնելու դեպքում, դուբլիկատ տրվում է այն մարմնի կողմից, վորը թերթիկը տվել է. պետք արտելից տեղեկանք ներկայացնել այն մասին, վոր տվյալ ժամանակի համար նպաստ չի տրված։

§ 1. Արտելների անդամների ժամանակավոր անաշխատունակության նպաստի վճարումը կատարվում է Համարհկոոպգանձխորհրդի կողմից հաստատված ձևի հիվանդանոցային թերթիկով,

այլ նաև Պետական Սոցիալական ապահովագրության սիստեմայի համար ընդունված հիվանդանոցային թերթիկներով։ Փոխադարձ ապահովագրության իրավասության տակ գտնվող բուժհիմնարկներում կիրառվում են միայն առաջին ձևի թերթիկներ։

§ 2. Հիվանդանոցային թերթիկները կորցնելու մասին մամուլում հայտարարություններ չեն կատարվում։

§ 3. Առանձին արտելներում դեպքեր են տեղի ունեցել, երբ բուժհիմնարկներում հիվանդանոցային թերթիկների բլանկների բացակայության կապակցությամբ ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվել է վոչ թե թերթիկներով, այլ բժիշկների կողմից տրված տեղեկանքներով։ Նման վճարումները հանդիսանում են անորինական։ Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, վոր առաջիններն անխափան թերթիկների բլանկներ մատակարարեն բոլոր բուժհիմնարկներին։ Իսկ եթե ժամանակավորապես այդպիսիքը չլինեն,— այդ դեպքում բժշկի տեղեկանքը կարող է միայն ապացույց ծառայել, վոր աշխատանքի չներկայանալը եղել է հարգելի պատճառով։ Ժամանակավոր անաշխատունակության նպաստը վճարելու համար այդ տեղեկանքները պետք է փոխարինվեն հիվանդանոցային թերթիկներով։

§ 4. Այն դեպքում, երբ հերթական աշխատավարձը վճարելու ժամանակ անաշխատունակությունը դեռ շարունակվում է, բուժող բժիշկն արտելի անդամին տալիս է հիվանդանոցային թերթիկի «շարունակություն», իսկ առաջնակի հիվանդանոցային թերթիկի «աշխատանքի անցնել» սյունակում «շարունակություն» տալու մասին նշանառում է անում։ 10 որից ավելի տևող անաշխատունակության դեպքում,— «շարունակությունը»-ը տրվում է կոնսուլտացիոն հանձնաժողովի բժշկի կողմից կամ բուժող բժշկի կողմից՝ գլխավոր բժշկի հաստատմամբ։

Թերթիկի շարունակությունը տրվում է նաև նպաստն առաջուց վճարելու դեպքում (եթե այդ նպաստը վճարվում է վոչ արձակուրդի ամբողջ ժամանակամիջոցի համար)։ «Շարունակության թերթիկներով» նպաստների նշանակումն ու վճարումը կատարվում է ընդհանուր կարգով։

45. Սխալների հետեվանքով կամ նպաստն ստացողի կողմից չարագործության հետեվանքով (կեղծ փաստաթղթեր ներկայացնել և այլն) ավելի վճարված նպաստների գումարները, բացի 51 և 52 հոդվածներում նախատեսված դեպքերից, արհապգանձարկղի (ապահովագրական խորհրդի) ԱՊԿԲԲ-ի (աշխատանքի պաշտ. կենցաղի բարելավման բյուրոյի) առաջարկությամբ կամ իր սեփական ցանկությամբ (առանց դատարանի վորոշման) արտելի վարչության կողմից պահվում են նրա աշխատավարձից։

§ 1. Եթե ժամանակավոր անաշխատունակության նպաստը սխալ է վճարված եղել արտելի անդամին և, կամ հաշվային սխալի հետևանքով, կամ ստացողի կողմից չարագործության պատճառով, ԱՊԿԲԲ-ի կողմից նպաստը նշանակելիս կամ նրա չափը վորոշելիս ավելի վճարում է թույլ տրված եղել,— ավելի վճարած գումարները ենթակա են հետ գանձման արտելի անդամի աշխատավարձից։

§ 2. Արտելի հանցանքով (հաշվային սխալ, անընդհատ ըստաժի մասին վոչ ճիշտ տեղեկությունների հաղորդում և այլն) արտելի անդամին ավելի վճարած նպաստի գումարները հաշվի չեն առնվում ի հաշիվ ապահովագրական մուծանքների և անց են կացվում արտելի հաշվին։

46. Պահանջվելիք աշխատանքային ստաժի ապացույց կարող են ծառայել արտելի անդամի անձնական քարտը, ընդհանուր ժողովների արձանագրությունները, հաշվային գրքույկները, աշխատանքի վայրից տեղեկանքները, աշխատանքային գրքույկները, անդամագրքույկները և դրանց փոխարինող այլ փաստաթղթերը։

§ 1. Կատեգորիկ կերպով արգելվում է անաշխատունակության թերթիկների հաշվարկման մեջ մտցնել փաստաթղթերով չապացուցված աշխատանքի ստաժի մասին տվյալները։

Անցյալ աշխատանքի մասին փաստաթղթային տվյալների

բացակայության դեպքում (փոխադրումներ, արտելների ձուլում) ստաժը հաշվել միայն տվյալ արտելի աշխատանքի մասին պաշտոնական փաստաթղթեր ներկայացնելու մոմենտից (Համարհկոոպգանձխորհրդի նախագահության 1939 թ. հունիսի 22-ի վորոշման 8-րդ կետը)։

§ 2. Նպաստ ստացողից պահանջվելիք ստաժի առկայության ստուգումը պետք է կատարվի ԱՊԿԲԲ-ի կողմից նպաստ նշանակելիս, ստաժը պետք է հաստատվի միայն 46-րդ հոդվածում նշված փաստաթղթերով։ Վարձու աշխատանքի մասին տեղեկությունները պետք է ստուգվեն միայն աշխատանքային գրքույկներով։ Ոգտվել ամեն տեսակի սուրրոգատային ցուցակներով և այլն չի կարելի։

VII. ԺԱՄԱՆԱԿԻՆ ՁՍՏԱՑԱԾ ԿԱՄ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿԻ ՄՍՀՎԱՆԻՑ ՀԵՏՈ ՄՆԱՑԱԾ ՆՊԱՍՏԻ ՎՃԱՐՈՒՄԸ ՅԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

47. Անաշխատունակության թերթիկը արտելի անդամը պետք է աշխատանքի դուրս գալու որը հանձնի արտելի վարչությանը, ըստ վորի այդ որը հաշվվում է թերթիկը վճարման համար ներկայացնելու որ։

Արտելին հանձնած անաշխատունակության թերթիկով հասանելիք նպաստի համար կարելի չէ դիմել՝ աշխատունակությունը վերականգնելու կամ հաշմանդամությունը սահմանելու որից հաշված մինչև 6 ամիս լրանալը։ Այդ ժամկետն անցնելու դեպքում՝ նպաստը կարող է նշանակվել միայն բացառիկ դեպքերում արհկոոպգանձարկղի (ապահովագրական խորհրդի) կարգադրությամբ։

Նպաստը տրվում է անաշխատունակության միայն այն ժամանակամիջոցի համար, վորն ընկնում է նպաստի համար դիմելուց առաջ, վերջին 6 ամսվան։

§ 1. Յերկարատև հիվանդության դեպքում արտելի անդամին հիվանդանոցային թերթիկի «շարունակություն» տալիս,— առաջնակի թերթիկը վճարման հանձնելու որը— (իսկ յերկրորդ «շարունակությունը» տալիս,— առաջին «շարունակությունը») համարվում է թերթիկները վճարման համար արտելին հանձնելու փաստացի որը, բայց վոչ ուշ աշխատանքի դուրս գալու որից։

§ 2. Վեցամսյա ժամկետն անցկացնելուց հետո, արհապգանձարկղի (ապահովագրական խորհրդի) կարգադրությամբ ժամանակավոր անաշխատունակության նպաստը նշանակելու դեպքում (տես սույն հոդվածի 3-րդ պարբերությունը),— այդպիսին վճարվում է ժամանակավոր անաշխատունակության ամբողջ ժամանակամիջոցի համար, բայց վոչ ավելի, քան մինչև ժամանակավոր անաշխատունակությունը վերջանալու որը,— վեց ամսից։

§ 3. Կարող են տեղի ունենալ դեպքեր, յերբ ժամանակավոր անաշխատունակության արձակուրդը վերջանալուց հետո, արտելի անդամը չի վերադառնում աշխատանքի՝ հետևյալ պատճառների հետևանքով.

ա) կենսաթոշակի փոխադրման.

բ) մահվան.

գ) արտելի անդամների կազմից հեռացման.

դ) արտելի լուծարքի.

ե) այլ պատճառներով։

Այդ դեպքերում հիվանդանոցային թերթիկն արտելին ներկայացնելու որը պետք է համարել վոչ թե ժամանակավոր անաշխատունակությունը վերջանալու որը, այլ թերթիկը վճարման համար փաստորեն հանձնելու որը, վորովհետև արտելը հնարավորությունից զուրկ է յեղել ժամանակին պահանջել հիվանդանոցային թերթիկը։

48. Ընթացիկ ամսում վճարման ներկայացրած անաշխատունակության թերթիկներն (հոդ. 47) արտելի վարչության կողմից պետք է հանձնվեն արհապգանձարկղին (ապահովագրական խորհրդին) հետևյալ ամսի 8-ից վոչ ուշ։

Արհապգանձարկղի (ապահովագրական խորհրդի) կողմից ստացված անաշխատունակության թերթիկները կարող են վերադարձվել արտելին՝ լրացուցիչ և

ճշտված տեղեկություններ մտցնելու համար վոչ ուշ, քան արտելի ստանալու որից հաշված մինչև 15 որը։

Այս դեպքում, արտելը պարտավոր է, ստանալու որից հաշված, հնգորյա ժամկետում մտցնել պահանջվելիք ուղղումները և վերադարձնել արհապգանձարկղին (ապահովագրական խորհրդին)։ Յեթե անաշխատունակության թերթիկների պահպանումը դրված է արտելի վրա, արտելի վարչությունը պարտավոր է, հաշվետու ամսվա հաջորդ ամսի 8-ից վոչ ուշ, ներկայացնել պարտադրված նպաստների հաշվային տեղեկագրերը սահմանված ձևով։ Լրացուցիչ և ճշտված տեղեկություններ մտցնելու համար սահմանվում են նույն ժամկետները, ինչ վոր ներկայացրած անաշխատունակության թերթիկներինն է։

§ 1. Գանձարկղների միությունների, արհապգանձարկղների և ապահովագրական խորհուրդների անհրաժեշտ է ժամանակավոր անաշխատունակության նպաստների հաշվարկման ճշտության վրա ապահովել սիստեմատիկ հսկողությունն անմիջապես արտելներում։

Պետք է ապահովել նաև ըստ բոլոր հիվանդանոցային թերթիկների նշված հիվանդության որերի ճշտության ստուգումը՝ համեմատելով այդ տվյալները ցուցակների տվյալների հետ (Համարհկոոպգանձխորհրդի նախագահության 1939 թ. հունիսի 22-ի վորոշման 7-րդ հոդվածը)։

§ 2. Ժամանակավոր անաշխատունակության նպաստները հաշվելու և վճարելու ճշտության ստուգումը, ինչպես ԱՊԿԲԲ-ի, այնպես էլ արհապգանձարկղի (ապահովագրական խորհրդի) կողմից միանգամայն անհրաժեշտ է, վորովհետև՝

ա) արտելը կարող է այնպիսի փաստաթղթերով նպաստ վճարել, վորոնցով նպաստ վճարել չի կարելի. նման վճարումներ հայտնաբերելու դեպքում,— նրանք պետք է անցկացվեն արտելի հաշվին.

բ) արտելը կարող է նպաստ վճարել վոչ այն չափով, ինչ վոր սահմանված է յեղել ԱՊԿԲԲ-ի կողմից. որինակ՝ արտելի

անդամին նպաստ հասնում է աշխատավարձի 50 տոկոսի չափով, իսկ հաշվետարը սխալմամբ, անփութությամբ կամ դիտմամբ հաշվել է 100 տոկոսի չափով, կամ ընդհակառակը.

գ) արտելը կարող եր չկատարել նպաստի մաքսիմումի մասին պահանջը.

դ) կարող է տեղի ունենալ այն աշխատավարձի վոչ ճիշտ սահմանումը, վորից յելնելով պետք է հաշվեն ժամանակավոր անաշխատունակության նպաստը, որինակ՝ մինչև հիվանդանալը մի քանի որ առաջ նոր աշխատանքի փոխադրվածին նպաստ հաշվել՝ նրա մինչ հիվանդության ամիսը վերջին յերկու ամսվա աշխատավարձից և վոչ թե վերջին աշխատանքի աշխատավարձից.

ե) արտելի վոչ բոլոր հաշվային աշխատողները գիտեն, թե նպաստ հաշվելիս աշխատավարձի վո՛ր գումարները պետք է ի նկատի ունենալ.

զ) հաշվելիս հաճախ թվաբանական սխալներ են տեղի ունենում.

է) արտելի հաշվետարը սխալմամբ կարող է սխալ վորոշել բաց թողած որերի թիվը. նա կարող է սխալ վորոշել այն որերի թիվը, վորի վրա պետք է բաժանել աշխատավարձը և այլն.

ը) արտելի վարչությունը կարող եր նպաստը հաշվելիս սխալ մեթոդ կիրառել։

թ) վերջապես, արտելի հաշվային ապարատի կողմից կարող են տեղիք տրվել այս կամ այն չարարկությանը, վոր կարելի յե հայտաբերել միայն թերթիկների ստուգման միջոցով, նրանց՝ վճարելուց հետո։

Այդ բոլոր հանգամանքներն էլ, վճարած փաստաթղթերի հետագա ստուգման անհրաժեշտություն են առաջացնում։ Յեթե ստուգման ժամանակ հայտաբերվում է նպաստի պակաս վճարում, արտելին կարգադրություն է արվում անմիջապես վճարելու։

Իսկ հիվանդանոցային թերթիկը, վորով լրացուցիչ վճարում է կատարվել, մնում է հաշվետվության կից և ընդունվում է ի հաշիվ մուծանքների։ Արտելը լրացուցիչ վճարում է կատարում արտելի անդամին և այդ կարգադրությունը վորպես արդարացուցիչ փաստաթուղթ կցվում է հետևյալ հաշվետվությանը։

Նպաստների ավելի վճարում հայտաբերելու դեպքում, գանձարկղն առաջարկում է արտելին՝ ավելի վճարած դրամը գանձել արտելի անդամից։ Ավելի վճարած գումարներն արտելի կողմից կարող են պահվել առանց այդ մասին հատուկ վորոշման։

Ավել վճարած գումարներն ապահովագրական մուծանքների հաշվին չեն անցկացվում, հետևապես արտելն այդպիսին պետք է գանձի վոչ թե գանձարկղի, այլ իր ոգտին։

Արհապգանձարկղները (ապահովագրական խորհուրդները) պետք է մանրամասնորեն հրահանգեն արտելին, վորպեսզի նպաստները հաշվելու և վճարելու ժամանակ սխալներ չլինեն։

49. Անաշխատունակության թերթիկները (կամ տեղեկանքները) 48-րդ հոդվածում նշված ժամկետների խախտմամբ ներկայացնելու դեպքում,— արհապգանձարկղը (ապահովագրական խորհուրդը) անաշխատունակության թերթիկներով վճարած արտելի կատարած ծախքերի ⅓-ը հաշվի դիմաց չի ընդունում։

Վճարման համար ներկայացրած որից հաշված (հոդ. 47) 3 ամիս անցնելուց հետո արհապգանձարկղին (ապահովագրական խորհրդին) ներկայացրած անաշխատունակության թերթիկները (տեղեկագրերը) չեն ընդունվում ապահովագրական մուծանքների հաշվին։

Այդ դեպքերում նպաստը մնում է վճարած՝ ի հաշիվ արտելի իրեն ծախքերի, առանց վճարած գումարները արտելի անդամից— իրենից հանելու։

Ներկայացրած անաշխատունակության թերթիկները պետք է ունենան շտամպ կամ մակագրություն՝ «Նպաստը պարտագրված է»։

§ 1. Եթե ամսական հաշվարկման տեղեկագրերը (կամ հիվանդանոցային թերթիկները) արտելի կողմից ներկայացված են ուշացումով,— ծախքերի ⅓-ը անց է կացվում արտելի հաշվին։ Ուշացման տակ պետք է հասկանալ.

ա) տեղեկագիրը կամ թերթիկները հաշվետու ամսվա հաջորդ ամսի 8-ից ուշ ներկայացնելը.

բ) տեղեկագրի մեջ մտցնելը կամ այն թերթիկների ներկայացնելը, ըստ վորոնց՝ աշխատանքի դուրս գալը տեղի չ ունեցել վոչ հաշվետու ամսում, այլ ավելի շուտ։

§ 2. Եթե հիվանդանոցային թերթիկները (կամ տեղեկագիրը) արտելի կողմից ներկայացված են 3 ամիս անցնելուց հետո,— դրանցով կատարված ծախքերն ամբողջովին անց են կացվում արտելի հաշվին։

Ուրինակ՝ Իլինան հիվանդությունից հետո, աշխատանքի չ է դուրս չեկել մարտի 5-ին։ Նրա կողմից հանձնված հիվանդանոցային թերթիկը պետք է ներկայացվի (կամ հաշվային տեղեկագրի մեջ մտցվի) մարտի հաշվետվությամբ, անկախ թերթիկը փաստորեն հանձնելու ժամանակից. թերթիկն արտելը պետք է նրանից վերցնի աշխատանքի դուրս գալու որը։

Եթե արտելը թերթիկը հանձնում է (կամ մտցնում է տեղեկագրի մեջ) ապրիլի հաշվետվությամբ,— դրանով վճարած գումարների ⅓-ն անց է կացվում արտելի հաշվին։

Եթե արտելը թերթիկը հանձնում է (տեղեկագիրը) հուլիսի հաշվետվությամբ,— թերթիկով վճարած նպաստի ամբողջ գումարը անց է կացվում արտելի հաշվին և չենթակա չէ հաշվառման՝ ապահովագրական մուծանքների հաշվին։

50. Մինչև արտելի անդամի մահվան որը չստացած նպաստն ստանալու իրավունք ունեն ընտանիքի հետևյալ անդամները— արտելի անդամի մահվան որվանից 6 ամսից վոչ ուշ դիմելու դեպքում.

ա) չերեխաները, չեղբայրները և քույրերը, չեթե նրանց 18 տարին չի լրացել կամ, չեթե նրանք իրենց անաշխատունակության հետևանքով չեղել են մահացածի խնամքի տակ։

բ) ծնողներն ու ամուսինները (անկախ նրանց անաշխատունակությունից), չեթե նրանք ապրել են մահացածի հետ կամ չեղել են նրա խնամքի տակ։

Ծանոթություն. սույն կանոնագրությամբ չերեխաներին հավասարեցվում են վորդեգրվածները (սահմանված կարգով), իսկ ծնողներին— վորդեգրողները։

§ 1. Առ արտելի անդամի մահվան որը չստացած նպաստը

յենթակա չէ նրա ընդհանուր ժառանգական գույքի մեջ մտցնելու։

§ 2. Նպաստն ստանալու համար մահացածի բարեկամները տեղեկանք են ներկայացնում այն մասին, վոր նրանք պատկանում են նպաստն ստանալու իրավունք ունեցող մահացածի ընտանիքի անդամների թվին (իսկ անհրաժեշտ դեպքերում, ներկայացնում են փաստաթուղթ անաշխատունակության մասին և միասին ապրելու կամ խնամքի տակ գտնվելու փաստի մասին)։

§ 3. Եթե նպաստն ստանալու համար դիմում են մահացածի մի քանի բարեկամները,— նպաստը բաժանվում է նրանց մեջ հավասար։

§ 4. Համաձայն կանոնադրության 47-րդ հոդվածի, նպաստն ստանալու համար կարելի չէ դիմել, արտելի անդամի մահվան որվանից հաշված, մինչև 6 ամիս լրանալը։ Նպաստի համար մահվան որվանից 6 ամիսը լրանալուց հետո, դիմելու դեպքում,— նպաստը չի տրվում։

Այդ ժամկետը բաց թողնելու դեպքում, նպաստ կարող է տրվել բացառիկ դեպքերում և միայն արհապգանձարկղի կամ ապահովագրական խորհրդի կարգադրությամբ (տես կանոնադրության 47-րդ հոդվածը)։

VIII. ՆՊԱՍՏԻՑ ԶՐԿԵԼԸ

> 51. Իրենց առողջությանը դիտավորյալ վնաս հասցնող կամ հիվանդ ձևացող (սիմուլյանտ) արտելների անդամները զրկվում են նպաստից։ Առաջուց տրված նպաստները հետ են գանձվում արհապգանձարկղի (ապահովագրական խորհրդի) կողմից դատական կարգով։

§ 1. Անվտանգության տեխնիկայի կանոնների չկատարելը չի կարող հիմք ծառայել նպաստից զրկելու համար։ Բայց եթե արտելի անդամը, չնայած հաճախակի նախազգուշացումներին ու հիշեցումներին, սիստեմատիկաբար խախտում է այդ կանոնները, ԱՊԿԲԲ-ն այդ դեպքում կարող է նրան զրկել նպաստից, այնքան, վորքան նա դիտավորյալ է վնաս հասցնում իր առողջությանը (տես «Սոցիալական ապահովագրության» ամսաթերթ, 1938 թ. № 11, էջ 50)։

§ 2. Վոչ աշխատանքի կապակցությամբ ստացված դժբախտ դեպքի հետևանքով ժամանակավոր անաշխատունակ դարձած արտելի անդամը (սպորտային պարապմունքի, տուրիստական ճանապարհորդության, տանն իր կամ ուրիշի համար աշխատանքի ժամանակ և այլն) յենթակա չէ նպաստով ապահովման ընդհանուր հիմունքներով։ Հարբեցողության կապակցությամբ հիվանդության մասին՝ տես կանոնադրության 53-րդ հոդվածը և նրա մեկնաբանումները։

§ 3. Յերբ արտելի անդամը ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ կամ այդ արձակուրդի ժամանակամիջոցի համար նպաստ ստանալիս թույլ է տալիս մի վորևիցե չարարկություն (կեղծիք, քերում, շտկում և այլն), նա զրկվում է նրա նպաստից ամբողջ ժամանակամիջոցի համար։ Նրա ստացած գումարները հետ են գանձվում սույն կանոնադրության 45-րդ հոդվածի կարգով, և անկախ պատասխանատվության յենթարկելուց, արտելը կարող է քննության առնել արտելի տվյալ անդամի հետագա մնալու հնարավորության խնդիրը արտելի կազմում։

> 52. Արտելների այն անդամները, վորոնք խախտում են բուժող բժշկի կողմից նրանց համար սահմանված ռեժիմը, կամ առանց հարգելի պատճառների չեն ներկայանում բժշկական քննության, այլ նաև առանց բուժող բժշկի համաձայնության կամ առանց բժշկական-աշխատանքային եքսպերտ հանձնաժողովի (ԲԱԵՀ) կողմից ուղարկվելու՝ բուժվելու համար այլ վայր են մեկնում, զրկվում են նպաստից, խախտումը թույլ տալու որվանից, ԱՊԿԲԲ-ի կողմից սահմանված ժամկետով։

§ 1. Հիվանդը պետք է ճշտորեն կատարի բուժող բժշկի բոլոր պատվերները և նշանակված որերը ճշտապահորեն ներկայանա բուժարանի ընդունելությանն ու շաշխատի հիվանդության արձակուրդի ժամանակ։ Բժշկի պատվերների չկատարելը յեր-

կարացնում է հիվանդությունը, վորով վնաս է հասցնում թե՛ արտադրությանը և թե իրեն՝ հիվանդին։ Յեթե պարզվի, վոր արտելի անդամն իրեն բուժման համար հատկացված արձակուրդն ոգտագործել է վոչ իր նպատակին, կամ խախտել է բուժող բժշկի կողմից պատվիրված ռեժիմը (որինակ՝ անկողնում պառկելու առաջարկության դեպքում— գնացել է կինո), կամ առանց հարգելի պատճառի, նշանակված ժամկետին չի ներկայացել բժշկի քննությանը, կամ առանց բժշկի կամ ԲԱԵՀ-ի հանձնարարության մեկնել է (թեկուզ և բուժման համար) այլ վայր,— արտելի անդամը ԱՊԿԲՌ-ի կողմից կարող է բոլորովին զրկվել նպաստից կամ արձակուրդի մի մասից։

Արձակուրդը համարվում է վոչ իր նպատակին ծառայած նաև այն դեպքերում,— յերբ՝

ա) սանկուրորտային բուժման համար տրված արձակուրդն այդ բուժման համար չի ոգտագործվել.

բ) հիվանդին սանատորիայից դուրս են գրել ներքին կարգապահական կանոնները խախտելու, հարբեցողության համար և այլն.

գ) հիվանդն ինքնակամ սանատորիայից հեռացել է ժամկետից առաջ և այլն.

§ 3. Արտելի ժամանակավոր անաշխատունակ անդամի վիրահատումից հրաժարվելը չի կարող պատճառ ծառայել ժամանակավոր անաշխատունակության արձակուրդի և նպաստից զրկելու համար, թեկուզ և այդ դեպքում հիվանդության ընթացքի զանդաղում լինի։

> 53. Հարբեցողության կամ հարբեցողությամբ առաջացած գործողությունների (ծեծ, վիրավորել և այլն) հետևանքով հիվանդացած արտելների անդամները, յեթե նրանք դրա համար արտելի անդամների կազմից չեն հեռացվել, զրկվում են նպաստից հիվանդության առաջին հինգ որացուցային որվա ընթացքում։ Միայնակներին (այսինքն՝ իրենց խնամքի տակ յերեխաներ, ամուսին և ծնողներ չունեցողներ)-- հարբեցողությամբ առաջացած հիվանդության վեցերորդ որից սկսած, սահմանված նպաստը տրվում է կեսի չափով։
>
> Ընտանիքավորներին, հարբեցողությամբ առաջացած հիվանդության վեցերորդ որից սկսած, նպաստ տրվում է ընդհանուր հիմունքներով։

§ 1. Աշխատանքի ժամանակ վոգելից խմիչքներ գործադրելու համար արտելի կազմից հեռացված արտելի անդամները ժամանակավոր անաշխատունակության նպաստով չեն ապահովվում, թեկուզ հիվանդությունն սկսված լինի աշխատանքից հեռացվելու որը (տես կանոնադրության 2-րդ հոդվածը)։

§ 2. Հարբեցողության կամ նրանից առաջացած գործողության կապակցությամբ, ժամանակավոր անաշխատունակության նպաստից զրկումը կատարվում է հետևյալ կարգով։

Որինակ 1. Արտելի անդամ Տեգունովը հարբած դրությամբ կտրել է իր ձեռքը և արձակուրդ ստացել 10-ից հոկտեմբերի առ 3-ը նոյեմբերի։ Հոկտեմբերի 10, 11, 12, 13 և 14-ի համար, այն է՝ 5 որացուցային որվա կամ 4 բանվորական որվա համար, նա նպաստ բոլորովին չի ստանա, իսկ հոկտեմբերի 15-ից նա իրեն հասանելիք նպաստը կստանա լրիվ, վորովհետև իր խնամքի տակ ունի կին ու յերեխա։ Կինն ու յերեխան նրա խնամքի տակ գտնվելու փաստը պետք է հաստատված լինի տնային վարչության կողմից։

Որինակ 2. Պետրուխինը հարբած վիճակում սանդուխքից ընկել ջարդել է իր ձեռքը։ Դրա հետևանքով նրան արձակուրդ է տրվել դեկտեմբերի 2-ից առ 13-ը ներառյալ (այսինքն՝ տասը բանվորական որ)։ Պետրուխինի որական միջին աշխատավարձն է 9 ռուբլի։ Պետրուխինը միայնակ է և խնամքի տակ վոչ վոք չունի. վորպես արտելում 2 տարուց պակաս աշխատած, նա նպաստ պետք է ստանա աշխատավարձի կեսի չափով (4ռ. 50 կ.)։

Պետրուխինը հիվանդացել է հարբեցողության հետևանքով։ Այդ պատճառով ել առաջին հինգ որացուցային որվա ընթացքում, այն է՝ դեկտեմբերի 2, 3, 4, 5 և 6-ը նա նպաստ բոլորովին չի ստանա, իսկ մնացած 7 որացուցային որվա համար (դեկտեմբերի 7, 8, 9, 10, 11, 12 և 13), մեկ կիրակին դուրս գալուց հետո, 6 բանվորական որվա համար, վորպես միայնակ՝ նպաստ կստանա կեսի չափով, այն է՝ 4ռ. 50 կ.։ 2=2ռ. 25 կ., վորը բազմապատկելով 6-ի վրա,— կստացվի 13 ռուբլի. 50 կոպեկ։

§ 3. Եթե ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է ընդհանրապես սիստեմատիկաբար ալկոհոլ գործածելու հետևանքով հիվանդությամբ, վոչ թե հարբեցողության հետևանքով,— նպաստ պետք է տրվի սովորական կարգով։

Ուրինակ. Արտելի անդամը սիստեմատիկաբար ալկոհոլ գործածելու հետևանքով հիվանդացել և տեղավորվել է հոգեբուժական հիվանդանոցում։ Նպաստը պետք է վճարել հիվանդության բոլոր որերի համար սովորական չափով, առանց կրճատման։

IX. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

54. Նպաստը մերժելու կամ նրա չափը սխալ սահմանելու վրա բողոքներ տրվում են փոխադարձ ապահովագրության և փոխոգնության գանձարկղների սիստեմայի հետևյալ վերադաս կազմակերպությանը։

Արտելի վարչության կողմից նպաստը սխալ վճարվելու կամ վճարումն ուշացվելու դեմ բողոքներ տրվում են տեղական արհապգանձարկղին (ապահովագրական խորհրդին)։

§ 1. Արհեստագործական կոոպերացիայի փոխոգնության գանձարկղների կողմից կենսաթոշակի և նպաստի մերժման վեճերի յենթադրության մասին կա ՌԽՖՍՀ Գերագույն դատարանի պլենումի 1930 թ. դեկտեմբերի 16-ի հետևյալ պարզաբանումը։

«Գտնել, վոր արհեստագործական կոոպերացիային կից փոխոգնության գանձարկղների կողմից կենսաթոշակի և նպաստի նշանակման մերժումների դեմ բողոքները լուծվում են ինստանցիոն կարգով և դատական քննության յենթակա չեն» («Դատական պրակտիկա» 1931 թ. № 3)։

§ 2. Հիվանդանոցային թերթիկներ տալու բնագավառում բժիշկների գործողության դեմ բողոքները լուծվում են գլխավոր բժշկի կողմից, իսկ տվյալ բուժհիմնարկներում բժշկական-կոնսուլտացիոն հանձնաժողովի առկայության դեպքում,— այդ հանձնաժողովի կողմից։

Գլխավոր բժիշկների և բժշկական-կոնսուլտացիոն հանձնաժողովների վորոշումների և գործողությունների դեմ բողոքները լուծվում են բժշկական-աշխատանքային եքսպերտ հանձնաժողովների կողմից, վորոնց վորոշումը հանդիսանում է վերջնական (ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1937 թ. ոգոստոսի 14-ին հաստատված ՀԱՄԿԽ—ի և ԽՍՀՄ Առժողկոմատի 1937 թ. հուլիսի 31-ի հրահանգի 30-րդ հոդվածը)։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Ժամանակավոր անաշխատունակության նպաստների կանոնադրությունը հաստատելու մասին (Համարհկոոպգանձխորհրդի նախագահության 1939 թ. հուլիսի 28-ի վորոշումը) 3

Կանոնադրություն ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին 5

I. Ընդհանուր դրություն 5

II. Նպաստի վճարման դեպքերը 18

1. Ընդհանուր կանոններ 18

2. Ընտանիքի հիվանդ անդամի խնամք 25

3. Կարանտին 26

4. Այլ աշխատանքի փոխադրում 27

5. Կրճատ բանվորական որվա փոխադրում 32

III. Նպաստի վճարման ժամկետները 32

IV. Նպաստի չափերը 48

V. Նպաստը հաշվելու կարգը 53

VI. Նպաստի իրավունքի վորոշումը և նրա վճարումը . . 72

VII. Ժամանակին չստացած կամ անաշխատունակի մահվանից հետո մնացած նպաստի վճարումը և փաստաթղթերի ներկայացնելու կարգը 81

VIII. Նպաստից զրկելը 87

IX. Բողոքարկման կարգը 91

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUP-Арм ССР
Ա. ԿՄ. Ա. Միկոյանի
ՄԵՍԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ц 1940 г.
Акт № 651

ՀՀ Ազգային գրադարան
NL0193323

34918
Арм.
3-4927а

Р. Р. КАЦ

Пособия по временной нетрудоспособности

(Комментарий)

Ереван—1940 г.